«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱԿԱԴԵՄԻԱ»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
Հակակոռուպցիոն կենտրոն

ՀՀ պետական կառավարման ակադեմիա

ՀՏԴ 328.185:34:33(07)
ԳՄԴ 66+67+65g7
Հ 170

Երաշխավորված է տպագրության
«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա
Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան

Հեղինակներ՝
Ա. Հակոբյան՝ իրավ. գիտ. թեկնածու, 1-ին մոդուլի 1-4-րդ թեմաներ (համատեղ.), 4-րդ մոդուլի 1-5-րդ թեմաներ
Ա. Խուդավերդյան՝ տնտ. գիտ. թեկնածու, 2-րդ մոդուլի 1-ին (համատեղ.), 2-5-րդ թեմաներ, 3-րդ մոդուլի 3-5-րդ թեմաներ
Վ. Հոկտանյան՝ 1-ին մոդուլի 1-4-րդ թեմաներ (համատեղ.), 2-րդ մոդուլի 1-ին թեմա (համատեղ.)
Գ. Հովհաննիսյան՝ 3-րդ մոդուլի 1-ին և 2-րդ թեմաներ
Խ. Բեզիրջյան՝ կենս. գիտ. թեկնածու, 5-րդ մոդուլ
Թ. Խեչոյան՝ 6-րդ մոդուլ

Հ 170 «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի ծրագիր / Ա. Հակոբյան, Ա. Խուդավերդյան, Վ. Հոկտանյան, Գ. Հովհաննիսյան, Խ. Բեզիրջյան, Թ. Խեչոյան.– Եր.: Հեղ. հրատ., 2022. – 120 էջ:

Դասընթացի ծրագիրն ընդգրկում է «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի կառուցվածքը և առանձին մոդուլների նկարագիրը: Այն միտված է զարգացնելու հակակոռուպցիոն ոլորտում շահառուների գիտելիքները, ձևավորելու հակակոռուպցիոն մտածելակերպ՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն քաղաքականության նպատակների, առաջնահերթությունների և գործառույթների վրա:

Այն իրական օգնություն կցուցաբերի կրթության ոլորտի շահառուներին և հանրային կառավարման ու կոռուպցիայի հարցերով հետաքրքրված անձանց:

ՀՏԴ 328.185:34:33(07)
ԳՄԴ 66+67+65g7

ISBN 978-9939-0-4071-4

© Հակոբյան Ա., 2022
© Խուդավերդյան Ա., 2022
© Հոկտանյան Վ., 2022
© Հովհաննիսյան Գ., 2022
© Բեզիրջյան Խ., 2022
© Խեչոյան Թ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 5
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՓԱԹԵԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 16
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԵՎ ԱՅՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 17
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄՈԴՈՒԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....17
ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ.....18
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ.....19
ՄՈԴՈՒԼ 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 25
ՄՈԴՈՒԼ 2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 37
ՄՈԴՈՒԼ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ..... 53
ՄՈԴՈՒԼ 4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ.... 73
ՄՈԴՈՒԼ 5. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ..... 87
ՄՈԴՈՒԼ 6. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ 101

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

«Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի նպատակը կոռուպցիայի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ փոխանցելն է, ժամանակակից պետության մեջ կոռուպցիայի առաջացմանն ու զարգացմանը նպաստող պատճառների և պայմանների վերլուծությունը, կոռուպցիան նվազագույնի հասցնելու և արմատախիլ անելու վերաբերյալ առաջարկներ մշակելու կարողությունը, ինչպես նաև տարբեր խմբերի սովորողների շրջանում հակակոռուպցիոն մտածելակերպի և հակակոռուպցիոն վարքի ձևավորումը:

Հակակոռուպցիոն կրթության շրջանակում սովորողներին կտրամադրվեն բազմակողմանի գիտելիքներ կոռուպցիայի, դրա տեսակների, քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի և դրանց հետևանքների, ինչպես նաև աշխարհում և Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկվող քայլերի մասին:

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Սովորողներին ընկալելի դարձնել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական էությունը և փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ՝ ծրագրի պահանջներին համապատասխան:
- Սովորողների շրջանում ձևավորել հակակոռուպցիոն մտածելակերպ՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն քաղաքականության նպատակների, առաջնահերթությունների և գործառույթների վրա:
- Զարգացնել հակակոռուպցիոն քաղաքականությունները դասակարգելու ունակությունը, վերլուծել այն իրավիճակը, երբ գերադասելի է օգտագործել դրանցից մի քանիսը, ինչպես նաև կանխատեսել դրանց զարգացման միտումները Հայաստանում և աշխարհում:
- Հասնել այն բանին, որ դասընթացի մասնակիցները տիրապետեն նորմատիվ իրավական ակտերը և դրանց նախագծերը հակակոռուպցիոն փորձաքննության ենթարկելու հմտություններին ու մեթոդներին:

Դասընթացից ակնկալվող ընդհանուր արդյունքները

- հասարակության շահերն արտացոլող անձնական արժեքային-իմաստաբանական վերաբերմունք ձևավորելու ունակություն,
- նորմատիվ իրավական ակտերի և այլ փաստաթղթերի որոնման, վերլուծության և օգտագործման հմտությունների տիրապետում մասնագիտական գործունեության մեջ,

- կազմակերպչական կառույցներ ձևավորելու, կազմակերպություններում մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարության մշակմանը մասնակցելու, գործողություններ պլանավորելու և իրականացնելու, բաշխելու և պատվիրակելու կարողություն՝ հաշվի առնելով անձնական պատասխանատվությունը տվյալ գործունեության համար,
- մասնագիտական գործունեության մեջ հակակոռուպցիոն օրենսդրության կիրառման ունակություն՝ ներառյալ կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների կիրառումը, կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման, ճնշման, բացահայտման և հետաքննության մեթոդները, ինչպես նաև դրանց հետևանքները նվազագույնի հասցնելը և (կամ) վերացնելը:

Դասընթացը հաջողությամբ ավարտելուց հետո սովորողները կկարողանան՝

Գիտելիքի առումով՝

- ճանաչել կոռուպցիայի դասակարգման հիմնական սկզբունքները, կոռուպցիայի՝ որպես երևույթի, հիմնական հատկանիշները,
- ճանաչել և հատկորոշել հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն քաղաքականության հայաստանյան ինստիտուցիոնալ մոդելը, տարբերակել հակակոռուպցիոն մարմինների և հանրային հսկողություն իրականացնող կառույցների դերակատարումները՝ ըստ կոռուպցիայի դեմ պայքարի նշանակության,
- ճանաչել հանրային կառավարման ոլորտում բարեվարքության գաղափարախոսությունը և դրա բաղադրիչները,
- բացատրել կոռուպցիոն բնույթի իրավախախտումների առանձնահատկությունները, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հատկանիշները և դրանց բաղադրիչները, հանցագործությունների քննության մեթոդիկան,
- ներկայացնել քաղաքական կոռուպցիայի դերն ու տեղը հասարակության սոցիալ-քաղաքական կյանքում և հասարակությանը դրա պատճառած վնասը, քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրները և գործիքները,
- ճանաչել և հատկորոշել տնտեսական աճի վրա կոռուպցիայի ազդեցության մեխանիզմները, պետություն-մասնավոր հատված սերտաճման մեթոդները, գործարար աշխարհի և քաղաքական գործիչների հանցավոր համագործակցության կանխարգելման խնդիրները:

Հմտությունների առումով՝

- բացահայտել կոռուպցիայի՝ որպես երևույթի, հատկանիշների առանձնահատկությունները,
- գտնել և արդյունավետորեն կիրառել կոռուպցիայի գնահատման մեթոդոլոգիան, մեկնաբանել կոռուպցիա ծնող պատճառները և դրանց հետևանքները,
- գործնականում կիրառել կոռուպցիոն ռիսկերի և նորմատիվ իրավական ակտերի հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման մեթոդները, հակակոռուպցիոն ծրագրերի կամ միջոցառումների իրականացման արդյունքների և ընթացքի մոնիտորինգի գործիքները,
- կիրառել բարեվարքության գործիքների (վարքագծի կանոններ, շահերի բա-

խում, անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, հայտարարագրեր) օրենսդրական համապատասխան կարգավորումները կամ նորմերը,

- գործնական օրինակների վրա հիմնվելով՝ որակել կոռուպցիոն հանցագործությունը՝ ըստ տեսակի,
- գտնել և գնահատել տարբեր գործընթացներում քաղաքական կոռուպցիոն ռիսկերը,
- համեմատել և վերլուծել կոռուպցիայի ազդեցությունը տարբեր տնտեսությունների և տնտեսական համակարգերի վրա, բացահայտել ուղղակի և անուղղակի կապերը կոռուպցիայի և տնտեսական մի շարք հանցագործությունների միջև:

Արժեքների առումով՝

- կարևորել հակակոռուպցիոն մտածելակերպը՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն քաղաքականության նպատակների, առաջնահերթությունների և գործառույթների վրա,
- կարևորել պետության և յուրաքանչյուր քաղաքացու համար կոռուպցիայի կանխարգելման նշանակությունը,
- բացատրել կոռուպցիոն բնույթի իրավախախտումների առանձնահատկությունները, տեսակները, տարանջատման հիմքերը, կոռուպցիոն բնույթի հանցագործությունները այլ տեսակի հանցագործություններից տարանջատելու սկզբունքները,
- գնահատել հանրային ֆինանսների կառավարման ոլորտում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը նեդրումների գրավչության, տնտեսական աճի և շուկայական մրցակցության, ազդեցության գնահատման տեսանկյունից:

Արդյունքների նման եռաշերտ դասակարգման իմաստն այն է, որ դասընթացում կարևորվում է ոչ միայն այն, թե սովորողն ինչ գիտելիք է ստացել, այլև՝ ինչ կիրառական հմտություններ է ձեռք բերել և ինչ արժեքներ է յուրացրել: Հակակոռուպցիոն գիտելիքը անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման համար: Կայուն արդյունք ստանալու համար շատ կարևոր է, որ որոշում կայացնողները կրեն հակակոռուպցիոն արժեքներ և իրենց վարքագծով իրացնեն դրանք:

	Կրեդիտ	ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ	ՄՈԴՈՒԼԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
1. «Կոռուպցիայի ներածություն»	1	սովորողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ կոռուպցիայի էության, տեսակների, պատճառների և հետևանքների, Հայաստանում կոռուպցիայի դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ	սովորողներին հասու դարձնել կոռուպցիան ընկալելու հիմնական մոտեցումներին, տրամադրել գիտելիքներ կոռուպցիայի էության և կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ
2. «Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ»	1	սովորողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և դրա իրականացման սկզբունքների վերաբերյալ	սովորողներին հասու դարձնել Հայաստանում հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական խնդիրներին, տրամադրել գիտելիքներ Հայաստանի հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ, նրանց շրջանում զարգացնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և փորձաքննության, այդ թվում՝ իրավական ակտերի ազդեցության գնահատման գործիքները կիրառելու, հակակոռուպցիոն ռազմավարության, գործողությունների ծրագրերի ու միջոցառումների մշակման մոնիտորինգի ու գնահատման ունակություններ
3. «Հանրային ծառայության բարեվարքության համակարգ»	1	սովորողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ հանրային կառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգի վերաբերյալ	սովորողների շրջանում ձևավորել պետության և յուրաքանչյուր քաղաքացու համար կոռուպցիայի կանխարգելման կարևորության ընկալում, սովորողներին տրամադրել գիտելիքներ հանրային ծառայությունում բարեվարքության համակարգի առկայության և գործնական կիրառման անհրաժեշտության վերաբերյալ, նրանց մեջ զարգացնել բարեվարքության կառավարման գործիքները կիրառելու ունակություններ:

4. «Կոռուպցիային առնչվող իրավակարգավորումներ»	1	սովորողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների, դրանց տեսակների, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, դրանց քննության և բացահայտման առանձնահատկությունների, այդ ոլորտում տարբեր մարմինների համագործակցության վերաբերյալ	սովորողներին հասու դարձնել կոռուպցիոն բնույթի իրավախախտումների առանձնահատկություններին, տեսակներին, տարանջատման հիմքերին, կոռուպցիոն բնույթի հանցագործությունները այլ տեսակի հանցագործություններից տարանջատելու սկզբունքներին, տրամադրել գիտելիքներ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների որակման, քննության մեթոդիկայի առանձնահատկությունների վերաբերյալ, նրանց մեջ զարգացնել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության մեթոդիկան կիրառելու ունակություններ
5. «Կոռուպցիան քաղաքական գործունեության մեջ»	1	սովորողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ քաղաքական գործունեության մեջ կոռուպցիոն դրսևորումների, դրանց տեսակների և այս ոլորտում կոռուպցիայի հնարավոր կանխարգելման միջոցների վերաբերյալ	տալ քաղաքական կոռուպցիայի սահմանումը և դրա դեմ պայքարի ռազմավարության հիմնական մոտեցումներն ու տարրերը, սովորեցնել ձեռք բերված գիտելիքները կիրառել քաղաքական կազմակերպությունների և պետական մարմինների գործունեության քաղաքական վերլուծության մեջ, հաղորդել պետական և տեղական մակարդակներում կոռուպցիայի հիմնախնդրի լուծման կառուցողական և անարդյունավետ մոտեցումները պարզելու ունակություն
6. «Կոռուպցիան տնտեսական գործունեության մեջ»	1	սովորողներին փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ կոռուպցիայի տնտեսական բովանդակության, ինչպես նաև տնտեսության վրա ազդեցության և տնտեսական փոխհարաբերություններում դրա գնահատման, կանխարգելման և չեզոքացման վերաբերյալ	սովորողներին ծանոթացնել կոռուպցիոն տնտեսական մոդելների վերլուծության գործիքներին, տնտեսական և գործարար գործընթացներում կոռուպցիայի դրսևորման՝ փողերի լվացման, ստվերային տնտեսության, տնտեսական մրցակցության սահմանափակման և այլ ձևերին, հանրային ֆինանսների կառավարման ոլորտում հնարավոր կոռուպցիոն ռիսկերին, փոխանցել գիտելիքներ՝ տնտեսության, մասնավորապես նեդրումների գրավչության, տնտեսական աճի և շուկայական մրցակցության վրա կոռուպցիայի ազդեցության գնահատման վերաբերյալ
ԸՆԴԱՄԵՆԸ	6		

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հասկանալ	Ճանաչել
1. «Կոռուպցիայի ներածություն»	«կոռուպցիա» երևույթի էությունը, կոռուպցիայի մակարդակի գնահատման մեթոդները, ցուցիչները, կոռուպցիան ծնող հիմնական պատճառներն ու հետևանքները, հանրային կառավարման ոլորտում «լավ կառավարման» հիմնական սկզբունքները, գնահատման ցուցիչները	կոռուպցիայի դասակարգման հիմնական սկզբունքները, հատկանիշները և դրանց առանձնահատկությունները, կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները
2. «Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ»	հանրային կառավարման ոլորտում հակակոռուպցիոն քաղաքականության գաղափարախոսությունը, ուղղությունները, միջոցները և ակնկալվող արդյունքների բովանդակությունը	հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն քաղաքականության հայաստանյան ինստիտուցիոնալ մոդելը, հակակոռուպցիոն մարմինների և հանրային հսկողություն իրականացնող կառույցների դերակատարումները՝ ըստ կոռուպցիայի դեմ պայքարի նշանակության
3. «Հանրային ծառայության բարեվարքության համակարգ»	հանրային կառավարման ոլորտում բարեվարքության գաղափարախոսությունը և դրա բաղադրիչները	բարեվարքության հայաստանյան ինստիտուցիոնալ մոդելը, բարեվարքության համակարգի հիմնական տարրերը՝ տարբերակելով դրանք ըստ կոռուպցիայի կանխարգելման նշանակության

Իմանալ	Կարողանալ
«կոռուպցիա» երևույթի հիմնական բնորոշումները, կոռուպցիայի հիմնական տեսակները, դրանց դասակարգումը, կոռուպցիայի գնահատման հիմնական մեթոդները, ցուցիչները	տալ կոռուպցիայի սահմանումը, բացատրել «կոռուպցիա» երևույթի հատկանիշների առանձնահատկությունները, կիրառել կոռուպցիայի գնահատման մեթոդոլոգիան, մեկնաբանել կոռուպցիա ծնող պատճառները և դրանց հետևանքները, դասակարգել կոռուպցիայի հիմնական տեսակները, վերլուծել Հայաստանում կոռուպցիայի առանձնահատկությունները, ներկայացնել ինքնուրույն դիրքորոշում կոռուպցիայի առկայության կամ բացակայության վերաբերյալ, ներկայացնել առաջարկություններ
հակակոռուպցիոն քաղաքականության օրենսդրական կարգավորումները, հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մոնիտորինգի, կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա հակակոռուպցիոն (բարեվարքության) գործողությունների ծրագրերի մշակման, նորմատիվ իրավական ակտերի կարգավորման, հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման ու գնահատման գործիքակազմերը, միջազգային հակակոռուպցիոն կառույցների կողմից Հայաստանի հակակոռուպցիոն քաղաքականության մոնիտորինգի իրականացման կառուցակարգերը	գնահատել ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականությունը, գործնականում կիրառել կոռուպցիոն ռիսկերի և նորմատիվ իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման ու գնահատման մեթոդները, հակակոռուպցիոն ծրագրերի կամ միջոցառումների իրականացման արդյունքների և ընթացքի մոնիտորինգի գործիքները, մեկնաբանել միջազգային պարտավորություններով ՀՀ ստանձնած հանձնառությունները, վերլուծել հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները և դրանք տարբերակել կոռուպցիայի դեմ պայքարի միջոցներից, գնահատել հակակոռուպցիոն միջոցառումներից ակնկալվող արդյունքները օրենսդրական կարգավորումների շրջանակում և ներկայացնել ինքնուրույն դիրքորոշում: Համեմատել հակակոռուպցիոն ռազմավարությամբ և միջոցառումների ծրագրով նախատեսված առանձին դրույթները միջազգային պարտավորությունների հետ և ներկայացնել առաջարկություններ դրանց փոփոխության կամ կատարելագործման ուղղությամբ, քննադատորեն վերլուծել և ձևակերպել օրենսդրական նոր կարգավորումները կամ փոփոխությունները և ներկայացնել այլընտրանքային լուծումներ:
հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության օրենսդրական կարգավորումները, սկզբունքները, վարքագծի կանոնագրքերի, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների ու նվերների ընդունման արգելքների բովանդակությունն ու իմաստը, հայտարարագրման համակարգի նշանակությունը կոռուպցիայի կանխարգելման գործում	գործնական օրինակների վրա ընտրել և կիրառել բարեվարքության գործիքների (վարքագծի կանոններ, շահերի բախում, անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, հայտարարագրեր) օրենսդրական համապատասխան կարգավորումները կամ նորմերը, մեկնաբանել բարեվարքության հիմնական բաղադրիչների օրենսդրական կարգավորումները՝ ըստ բովանդակության, տարբերակել և վերլուծել շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքին վերաբերելի ռիսկերը, գնահատել դրանք օրենսդրական կարգավորումների շրջանակում և իրավիճակի լուծման ինքնուրույն դիրքորոշում ներկայացնել, համեմատել բարեվարքության օրենսդրորեն գործող կարգավորումները միջազգային փորձի հիմնական դրույթների հետ և ներկայացնել առաջարկություններ դրանց փոփոխության կամ կատարելագործման ուղղությամբ, քննադատորեն վերլուծել և ձևակերպել օրենսդրական նոր կարգավորումներով կամ փոփոխություններով այլընտրանքային լուծումներ

4. «Կոռուպցիային առնչվող իրավակարգավորումներ»	կոռուպցիոն բնույթի իրավախախտումների առանձնահատկությունները, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հատկանիշները և դրանց բաղադրիչները, հանցագործությունների քննության մեթոդիկան	օրենսդրական ակտերում ամրագրված կոռուպցիոն բնույթի իրավախախտումները, դրանց տարրերը, դասակարգումը, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների տարանջատման սկզբունքները, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման հիմնական քայլերը
5. «Կոռուպցիան քաղաքական գործունեության մեջ»	քաղաքական կոռուպցիայի դերն ու տեղը հասարակության սոցիալ-քաղաքական կյանքում և հասարակությանը դրա պատճառած վնասը, քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրները և գործիքները, կոռումպացված քաղաքական և տնտեսական իշխանության սերտաճում՝ օլիգարխիկ իշխանություն, դրա առաջացման և դրսևորման առանձնահատկություններն անցումային տնտեսությամբ երկրներում, օլիգարխիկ իշխանության բացասական հետևանքները, կոռուպցիայի կանխարգելման նպատակով կուսակցությունների և դրանց քարոզարշավների ֆինանսավորման առավել թափանցիկ իրականացման անհրաժեշտությունը, քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց հայտարարագրման ինստիտուտի և իրական սեփականատերերի բացահայտման կարևորությունը	քաղաքացիական հասարակության դերը քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարում, քաղաքական կոռուպցիան և ԶԼՄ-ները, քաղաքական կոռուպցիան և եկեղեցին, վերջինների հնարավոր դերը կոռուպցիայի դեմ պայքարում, Հանրային ծառայողների քաղաքական չեզոքության և զսպվածության սկզբունքի կարևորությունը, կուսակցությունների ֆինանսավորման կոռուպցիոն ռիսկերի առկայությունը, դրանց ֆինանսների և նյութական արժեքների հայտարարագրման անհրաժեշտությունը, ժամանակակից պետությունում ընտրական ինստիտուտների կառուցվածքն ու կազմավորման առանձնահատկությունները, քաղաքական կազմակերպությունը բնորոշող բնութագրիչները՝ կախված քաղաքական մշակույթի առանձնահատկություններից, կառավարման ձևից, հասարակության զարգացման մակարդակից

հանցագործությունների որակման հիմնահարցերը, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների համար նախատեսված պատասխանատվության տեսակները և կիրառման հիմքերը, կոռուպցիոն հանցագործությունների քննության հիմնական ուղղությունները, միջազգային կազմակերպությունների համագործակցության ուղղությունները կոռուպցիայի դեմ պայքարում, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հետևանքների վերացման հիմնական ուղղությունները	տալ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների սահմանումը, բացատրել դրանց հատկանիշների առանձնահատկությունները, դասակարգել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հիմնական տեսակները, վերլուծել Հայաստանում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության առանձնահատկությունները, գործնական օրինակների վրա որակել կոռուպցիոն հանցագործությունը՝ ըստ տեսակի, ներկայացնել ինքնուրույն դիրքորոշում կոռուպցիոն հանցագործության կամ այլ կոռուպցիոն իրավախախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ, ներկայացնել առանձին կոռուպցիոն հանցագործության քննության և մեթոդիկայի ուղղություններն ու առանձնահատկությունները
քաղաքական կոռուպցիայի սահմանումը, դրա էությունը, տեսակները և առանձնահատկությունները, դրան հակազդելու հնարքները, կուսակցությունների ֆինանսավորման աղբյուրները, ապակենտրոնացած և կենտրոնացած (համակարգային) կոռուպցիա, կուսակցությունների գործունեության մշտադիտարկման և վերահսկողության անհրաժեշտություն, կուսակցությունների և դրանց քարոզարշավների ֆինանսավորման կանոնների խախտումների համար «համաչափ, արդյունավետ և զսպող» բնույթի պատժամիջոցների կիրառում, կոռուպցիայի ներթափանցումը ընտրական և հանրաքվեների գործընթացների ոլորտ, վարչական ռեսուրսի և դրա բաղադրիչների չարաշահում, միջազգային կոռուպցիայի բացահայտված խոշոր դրսևորումներ, կոռուպցիայի դեմ պայքարի եզրաբանական բառապաշարը և հակակոռուպցիոն կրթության շնորհիվ ձեռք բերած գիտելիքները կիրառելու հնարավորություն	գնահատել տարբեր գործընթացներում քաղաքական կոռուպցիոն ռիսկերը և ստացած գիտելիքները կիրառել հակակոռուպցիոն գործընթացներում, ինքնուրույն ուսումնասիրել, վերլուծել և որակել քաղաքական կոռուպցիոն բնույթի հանցագործությունները, այդ թվում՝ ֆինանսական մեքենայությունների միջոցով կատարվող, կիրառել ձեռք բերած գիտելիքները՝ կոռուպցիոն վարքագծին նպաստող պատճառներն ու պայմանները պարզելու, վերացնելու, հետևաբար նաև կանխելու համար, քննադատորեն վերլուծել Հայաստանում քաղաքական կոռուպցիոն բնույթի հանցագործությունների առանձնահատկությունները, ներկայացնել քաղաքական կոռուպցիոն հանցագործությունների օրինակներ, գնահատել որոշ օրենսդրական ակտերի կատարելագործման նշանակությունը քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում, ներկայացված քաղաքական գործընթացներում գնահատել կոռուպցիոն ռիսկեր և տալ դրանցից խուսափելու հնարավոր լուծումներ, մեկնաբանել Հայաստանում քաղաքական կոռուպցիայի դեմ տարվող պայքարի արդյունքները

6. «Կոռուպցիան տնտեսական գործունեության մեջ»	կոռուպցիայի սոցիալ-տնտեսական դրդապատճառները, տնտեսական մոդելները, ազդեցության մեխանիզմները տարբեր տնտեսությունների կարճաժամկետ և երկարաժամկետ զարգացման վրա, ստվերային տնտեսության և փողերի լվացման կապը կոռուպցիոն գործունեության հետ, կորպորատիվ կոռուպցիայի դրսևորումները և առանձնահատկությունները, հանրային ֆինանսների կառավարման ոլորտում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը	կոռուպցիոն դրսևորումների վտանգները տնտեսական աճի, ներդրումների գրավչության, շուկայական մրցակցության և աղքատության հաղթահարման առումով, ներառող (inclusive) և կորզող կամ չներառող (extractive) տնտեսական ինստիտուտների դերը և նշանակությունը կոռուպցիոն գործունեության մեջ

կոռուպցիայի՝ տնտեսական աճի վրա ազդեցության կառուցակարգերը, պետություն-մասնավոր հատված սերտաճման պայքարի մեթոդները, գործարար աշխարհի և քաղաքական գործիչների հանցավոր համագործակցության կանխարգելման խնդիրները, անօրինական ֆինանսական հոսքերի և փողերի լվացման դեմ պայքարի ձևերը կոռուպցիոն դրսևորման համատեքստում, կոռուպցիան հանրային ֆինանսների կառավարման ոլորտում	համեմատել և վերլուծել կոռուպցիայի ազդեցությունը տարբեր տնտեսությունների և տնտեսական համակարգերի վրա, բացահայտել ուղղակի և անուղղակի կապերը կոռուպցիայի և տնտեսական մի շարք հանցագործությունների միջև, գնահատել մի շարք օրենքների և օրինագծերի դերը և նշանակությունը կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում, ընդերքօգտագործման և լիցենզավորում պահանջող այլ տնտեսական գործունեությունների կարգավորումներում գտնել կոռուպցիոն ռիսկերը և ներկայացնել հնարավոր այլընտրանքային լուծումներ ու ինքնուրույն դիրքորոշում, գնահատել ՀՀ պետական տնտեսական ինստիտուտների ներառականությունը, կանխատեսել և մեկնաբանել երկրում կոռուպցիայի դեմ տարվող պայքարի տնտեսական արդյունքները, վերլուծել կոռուպցիոն դրսևորումները հանրային ֆինանսների կառավարման մեջ, «ստվերային տնտեսություն», «անօրինական ֆինանսական հոսքեր», «հարկերից խուսափման վարքագիծ», «կորպորատիվ կոռուպցիա» հասկացությունները կոռուպցիոն դրսևորումների համատեքստում

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՓԱԹԵԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի յուրաքանչյուր փաթեթ կազմված է առանձին մոդուլներից: Մի քանի ընդհանուր բնույթի մոդուլներ կարող են ներառվել բոլոր փաթեթներում: Այդպիսիք են, մասնավորապես, «Կոռուպցիայի ներածություն», «Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ» և «Հանրային ծառայության բարեվարքության համակարգ» մոդուլները:

1-ին, 2-րդ և 3-րդ մոդուլները պարտադիր ներառվում են բոլոր փաթեթներում, իսկ մյուս մոդուլները կարող են ընտրել սովորողները՝ ելնելով թիրախային խմբի կարիքներից:

ՊԱՐՏԱԴԻՐ	ԸՆՏՐՈՎԻ	ԸՆՏՐՈՎԻ	ԸՆՏՐՈՎԻ
Ընդհանուր	***Իրավական բնույթի հարցեր***	***Քաղաքական բնույթի հարցեր***	***Տնտեսական բնույթի հարցեր***
ՄՈԴՈՒԼ 1. Կոռուպցիայի ներածություն	**ՄՈԴՈՒԼ 4.** Կոռուպցիային առնչվող իրավակարգավորումներ	**ՄՈԴՈՒԼ 5.** Կոռուպցիան քաղաքական գործունեության մեջ	**ՄՈԴՈՒԼ 6.** Կոռուպցիան տնտեսական գործունեության մեջ
ՄՈԴՈՒԼ 2. Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ			
ՄՈԴՈՒԼ 3. Հանրային ծառայության բարեվարքության համակարգ			

Աղյուսակ N 1

Մոդուլների ընդհանուր ժամաքանակը

N	Մոդուլի անվանումը	Դասախոսություն /ժամ/	Գործնական պարապմունք /ժամ/	Ինքնուրույն աշխատանք /ժամ/	Ընդհանուր ժամաքանակը /ժամ/
1.	Կոռուպցիայի ներածություն	15	15	70	**100**
2.	Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ	17	13	70	**100**
3.	Հանրային ծառայության բարեվարքության համակարգ	17	14	69	**100**
4.	Կոռուպցիային առնչվող իրավակարգավորումներ	14	15	71	**100**

5.	Կոռուպցիան քաղաքական գործունեության մեջ	12	12	36	**60**
6.	Կոռուպցիան տնտեսական գործունեության մեջ	12	12	56	**80**
Ընդամենը		**87**	**81**	**372**	**540**

Մոդուլների բովանդակության վերաբերյալ մանրամասները քննարկվում են յուրաքանչյուր մոդուլին վերաբերող առանձին բաժնում:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԵՎ ԱՅՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դասընթացը հաջողությամբ ավարտելու համար սովորողը պետք է ներկա լինի դասընթացով նախատեսված առկա (դասախոսի մասնակցությամբ) և առցանց (հեռավար) դասաժամերին, ակտիվորեն մասնակցի քննարկումներին, խմբային աշխատանքներին և առաջադրված խնդիրների լուծմանը, դասընթացի շրջանակում կատարի ինքնուրույն աշխատանքներ:

Դասընթացը հաջողությամբ ավարտելու դեպքում սովորողը կստանա համապատասխան հավաստագիր:

Դասընթացի նյութերի յուրացման ցուցանիշը յուրաքանչյուր թեմայից թեստային առաջադրանքների, գործնական առաջադրանքների արդյունքներով գնահատված նյութի յուրացման մակարդակն է:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄՈԴՈՒԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մոդուլների թեմաները

Դասընթացի բաղկացուցիչ մոդուլների և դրանց թեմաների ընտրությունը կատարվել է միջազգային փորձի և հայաստանյան իրողությունների վերլուծության հիման վրա:

Դասընթացում ներառված են հետևյալ մոդուլները՝

1. «Կոռուպցիայի ներածություն»
2. «Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ»
3. «Հանրային ծառայության բարեվարքության համակարգ»
4. «Կոռուպցիային առնչվող իրավակարգավորումներ»
5. «Կոռուպցիան քաղաքական գործունեության մեջ»
6. «Կոռուպցիան տնտեսական գործունեության մեջ»

Յուրաքանչյուր մոդուլ ունի իր հատուկ կրթական արդյունքները, որոնք համահունչ են դասընթացի ընդհանուր նպատակին և արդյունքներին (տե՛ս «Դասընթացից ակնկալվող ընդհանուր արդյունքներ» բաժինը):

Հաշվի առնելով Հայաստանում հանրային ծառայության առանձնահատկությունները՝ մոդուլները կարելի է հարմարեցնել հանրային ծառայողների զբաղեցրած պաշտոնների խմբերին:

Դասընթացը մշակելիս առանձին ուշադրություն է դարձվել այն հանգամանքին, որ սովորողները հասուն և փորձառություն ունեցող քաղաքացիներ են: Հաշվի է առնվել նաև այն, որ սովորողները՝

- իրենց անձնական փորձը (ինչպես դրական, այնպես էլ բացասական) կիրառում են ուսուցման ժամանակ,
- ունեն պարտականություններ և պարտավորություններ, որոնք կենտրոնացում են պահանջում գործնական խնդիրների վրա,
- նախընտրում են, որ դասընթացում մեծ տեղ հատկացվի գործնական խնդիրներին, ինչը հնարավորություն կտա առավել հեշտ կողմնորոշվելու իրական կյանքում հանդիպող խնդիրները լուծելիս,
- ուսումնական գործընթացում և քննարկումների ժամանակ հանդես են գալիս որպես հավասար գործընկերներ:

Ելնելով վերոնշյալից՝ դասընթացի մոդուլները մշակվել են այնպես, որ դրանք սովորողին տրամադրեն ստանալու աստիճանաբար խորացող գիտելիքներ՝ ներառելով հնարավորինս շատ հակակոռուպցիոն ոլորտի իրական խնդիրներ, որոնք իրապես մտահոգում են սովորողներին:

ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

Սովորողը դասընթացի արդյունքում ստանում է կրեդիտներ:

Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգում (ԿՓԿԵՀ) կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է սովորողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը: Սովորողի ստացած գիտելիքի որակը կրեդիտով չի չափվում, այլ ակադեմիական առաջադիմության գնահատականներով:

Կրեդիտը դասընթացի մոդուլով նախանշված կրթական արդյունքներին հասնելու համար սովորողից պահանջվող ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավոր է:

Մեկ կրեդիտը համարժեք է սովորողի 30 ժամ լրիվ ուսումնական բեռնվածությանը (դասախոսություն և գործնական պարապմունք): Կրեդիտը ներառում է մասնակցությունը դասախոսություններին և գործնական պարապմունքներին, թեստային և գործնական առաջադրանքների կատարումը: Ուսումնառած մոդուլների համար տրվող կրեդիտները պետք է լինեն ամբողջ թվեր: Կրեդիտը հաշվարկվում է միայն մոդուլի ուսումնառության ավարտից և դրական գնահատական ստանալուց հետո:

Կրթական արդյունքն այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել սովորողը դասընթացի ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացի մոդուլով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման աստիճանը: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

Կրեդիտը տրվում է միայն մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Սովորողը կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը վաստակում է դասընթացի ստուգման (գնահատականների կամ գնահատման միավորների) արդյունքների հիման վրա:

Պարտադիր ընդհանուր դասընթացի գումարային կրեդիտը 3 է (3 մոդուլ, յուրաքանչյուրը՝ 1 կրեդիտ):

Մոդուլների մատուցման եղանակները և գործիքները

Դասընթացի անցկացման հնարավոր ձևաչափերն ընտրվում են՝ ելնելով թիրախային խմբի առանձնահատկություններից, ինչպես նաև քննարկվող հարցերի բնույթից: Նախատեսվող ձևաչափերը մասնավորապես ներառում են՝

- քննարկումներ,
- խմբային աշխատանքներ,
- ինքնուրույն աշխատանքներ,
- շրջած դասախոսություններ (երբ մասնակիցները դասախոսի հսկողության ներքո իրենք են պատրաստում և ներկայացնում նյութերը կամ թեմաները),
- իրավիճակային դեպքերի վերլուծություն (քեյս ստադիներ),
- հարցաշարեր:

Դասընթացի համար օգտագործվում են տարաբնույթ նյութեր՝ տպագիր կամ էլեկտրոնային տեքստեր, տեսանյութեր, աուդիոնյութեր և այլն:

Դասընթացի մատուցման եղանակները նույնպես տարաբնույթ են: Ըստ թեմաների բնույթի, բարդության և ծավալի՝ կիրառվում են դասընթացներ ինչպես առկա կամ անմիջական շփմամբ, այնպես էլ առցանց կամ այդ երկու եղանակների համակցությամբ:

Մատուցման եղանակները հարմարեցվում են հայաստանյան իրողություններին:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Դասընթացի ընթացքում նախատեսվում են ինքնուրույն աշխատանքներ և լսարանային կամ առցանց դասեր:

Ինքնուրույն աշխատանքը համապատասխան մոդուլով նախատեսված թեմաների վերաբերյալ լսարանային կամ առցանց դասերից դուրս ժամանակահատվածում սովորողի կողմից անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացն է:

Լսարանային կամ առցանց դասերը դասացուցակով սահմանված ժամկետներում

անցկացվող դասաժամերն են, որոնց մասնակցում է սովորողը: Դրանք կարող են անցկացվել դասախոսությունների կամ գործնական աշխատանքների ձևով:

Լսարանային կամ առցանց դասերի չափորոշիչներն են՝

1) մեկ ակադեմիական ժամը՝ 40 րոպե,

2) մեկ լսարանային կամ առցանց դասը (երկու ակադեմիական ժամ)՝ 80 րոպե,

3) մեկ օրվա ընթացքում՝ ոչ ավելի, քան 8 ակադեմիական ժամ (երեկոյան ժամերին՝ ոչ ավելի, քան 4 ակադեմիական ժամ),

4) յուրաքանչյուր երկու ակադեմիական ժամից հետո՝ ընդմիջում 10 րոպե, իսկ 4-րդ և 5-րդ ակադեմիական ժամերի միջև՝ ընդմիջում 20 րոպե:

Մեկ խմբում առավելագույնը կարող է լինել ոչ ավելի, քան 25 սովորող:

Դասընթացի կանոնները և պահանջները

Դասախոսություններ, գործնական և ինքնուրույն աշխատանք

Դասախոսություններն անցկացվում են դասական եղանակով՝ կիրառելով նաև այլ՝ լսարանի հետ երկխոսության, առանձին հարցերի շուրջ կարճ քննարկումների, կարծիքների համադրման և ամփոփման եղանակներ:

Գործնական աշխատանքը ներառում է նախատեսված իրավիճակային խնդիրների վերլուծություն, քննարկումներ, PPT ներկայացումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում ինչպես առանձին խմբերով, այնպես էլ խմբի կազմում:

Ինքնուրույն աշխատանքը ներառում է մոդուլով նախատեսված թեմաների վերաբերյալ գրականության ընթերցում, անհատական շնորհանդեսների, ակնարկների, ելույթների պատրաստում, մասնակցություն հանձնարարված խմբային աշխատանքներին:

Նախապատրաստական բոլոր աշխատանքները պետք է ավարտվեն համապատասխան թեմայով դասից առաջ: Դասընթացին մասնակցելը պարտադիր է:

Սովորողները պետք է ակտիվորեն մասնակցեն քննարկումներին և պատրաստ լինեն կատարելու առաջադրանքներ դասերի ընթացքում: Դասընթացի պահանջների փոփոխության դեպքում սովորողը կտեղեկացվի խմբի էլեկտրոնային փոստի կամ բանավոր հայտարարության միջոցով: Սովորողները պետք է տեղեկացված լինեն դասընթացի փոփոխությունների մասին, նույնիսկ եթե բացակայում են դասից:

Էլեկտրոնային փոստով հաղորդակցության կանոնները

Դասընթացի ծրագիրը, հայտարարությունները և ուսումնական նյութերը հասանելի կլինեն ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կայքէջի www.paara.am հասցեով կամ կուղարկվեն սովորողի նշած էլեկտրոնային հասցեով: Կատարված բոլոր առաջադրանքները պետք է ներկայացվեն դասախոսի նշած էլեկտրոնային հասցեով:

Նշված էլեկտրոնային հասցեին նամակներ են ուղարկվում, երբ անհրաժեշտ է՝

- նշանակել լրացուցիչ անհատական խորհրդատվություն,
- ծանուցել դասից բացակայելու մասին՝ նշելով բացակայության պատճառը,
- տեղեկացնել դասընթացի ծրագրի, ժամանակացույցի կամ լրացուցիչ նյութերի փոփոխությունների վերաբերյալ հայտարարությունները չստանալու կամ կրկնակի ուղարկելու մասին:

Դասընթացի նյութերի, դասերի կամ կրեդիտների վերաբերյալ հարցերը պետք է տրվեն դասերից հետո կամ անհատական խորհրդատվության ժամանակ:

Դասի ընթացքում պահանջվող կանոնները

Չի կարելի ուշանալ դասախոսություններից, գործնական աշխատանքների դասերից: Դասաժամին քննարկումները պետք է լինեն աշխույժ և հետաքրքիր: Մեկնաբանություններ անելիս հարկ է լինել բարեկիրթ, հարգել այլոց տեսակետը: Ուրիշների փաստարկների հետ անհամաձայնությունը նույնպես անհրաժեշտ է արտահայտել բարեկրթորեն:

Առաջադրանք գրելու վարքագծի կանոնները

Սովորողները պարտավոր են կատարել դասընթացի ընթացքում իրենց տրված առաջադրանքները՝ անհատապես աշխատելով դրանց վրա: Միայն համատեղ ծրագրի իրականացման դեպքում են սովորողները խմբային աշխատանք կատարում: Աշխատանքում պարտավոր են հղումներ անել և վկայակոչել բոլոր աղբյուրներն ու հրապարակումները: Առանց հղումների հետազոտությունները համարվում են գրագողություն: Գրագողություն կատարած սովորողը կզրկվի դասընթացի համար ուսումնական կրեդիտներ ստանալու իրավունքից:

Գրավոր առաջադրանքներ կատարելիս սովորողները պարտավոր են առաջնորդվել ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող ընթացակարգերով:

Գրադարանային նյութերի, ԶԼՄ-ների և տեղեկատվական տեխնոլոգիայի օգտագործում

Դասընթացի արդյունավետ յուրացման նպատակով սովորողներին խորհուրդ է տրվում օգտագործել գրադարանային ինչպես առկա, այնպես էլ առցանց նյութեր: Չնայած առաջարկվող նյութերը լրացուցիչ են և ոչ հիմնական, առաջադրվող խնդիրների վերաբերյալ լիարժեք պատկերացում ունենալու համար խորհուրդ է տրվում կարդալ դրանք: Եթե առաջարկվող հիմնական և լրացուցիչ աղբյուրներից ու նյութերից բացի այլ նյութերի անհրաժեշտություն կա, ապա սովորողները կարող են դիմել դասավանդող դասախոսին կամ դասընթացի ղեկավարին: Խրախուսվում է անհրաժեշտության դեպքում աուդիո-վիզուալ օժանդակ սարքեր օգտագործելը: Եթե սովորողները հարցեր ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների կամ ծրագրային գործիքակազմերի կիրառման վերաբերյալ, ապա կարող են դիմել Ակադեմիայի գրադարանի աշխատակիցներին կամ խորհրդակցել SS հրահանգչի հետ: Դասընթացների ընթացքում թույլատրվում է ունենալ դյուրակիր համակարգիչներ, IPads և նման այլ սարքեր, քանի դեռ դրանք օգտագործելու արգելք սահմանված չէ: Դասի ընթացքում սովորողները պարտավոր են անջատել բջջային հեռախոսները կամ դրանք փոխադրել «լուռ» ռեժիմի: Եթե սովորողի հեռախոսն անջատված չէ կամ փոխադրված չէ «լուռ» ռեժիմի, և/կամ սովորողը դասի ընթացքում օգտագործում է հեռախոսը, ապա նրան հանձնարարվելու է լքել լսարանը

և չի թույլատրվելու վերադառնալ: Լսարանային հանձնարարությունների կատարման ընթացքում, որպես կանոն, չի թույլատրվում օգտվել դյուրակիր համակարգիչներից, բջջային հեռախոսներից և նյութերից: Ավարտական թեստավորման ընթացքում չի թույլատրվում օգտվել դյուրակիր համակարգիչներից:

Դասընթացին մասնակցությունը գնահատելիս հաշվի է առնվում ոչ միայն սովորողի ֆիզիկական մասնակցությունը լսարանային կամ առցանց դասախոսություններին ու գործնական աշխատանքներին, այլև դրանց ընթացքում ցուցաբերած ակտիվությունը, մասնակցությունը թեմաների քննարկմանը: Ակնկալվում է նաև, որ սովորողը դասընթացից առաջ պետք է ամբողջությամբ կատարած լինի տնային առաջադրանքները: Բացառիկ դեպքերում, երբ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կարգավորումներով սովորողի բացակայությունը հարգելի է ճանաչվում, վերջինս դասից առաջ պետք է այդ մասին տեղեկացնի դասախոսին կամ դասընթացի ղեկավարին: Դասընթացին մասնակցության գրանցումները կկատարվեն դասաժամի ընթացքում՝ սկզբում կամ վերջում՝ «Դասաժամի մասնակցության ցուցակը» ստորագրելու միջոցով (բացառությամբ առցանց դասընթացի): Դասաժամին 15 րոպեից ուշ ներկայացած կամ դրա ավարտից շուտ հեռացած սովորողները կհամարվեն չհաճախած կամ դասաժամից բացակա:

Գնահատման եղանակ

Մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո սովորողի գնահատականը ձևավորվելու է մոդուլի առանձին թեմաների վերաբերյալ գործնական առաջադրանքների, տեսական նյութի թեստի արդյունքների, ինչպես նաև դասընթացին մասնակցության գնահատումների հանրագումարից՝ հիմք ընդունելով «Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգի» սանդղակը (տե՛ս N 2 աղյուսակ): Մոդուլի յուրաքանչյուր թեմայի ավարտին՝ գործնական դասաժամի ընթացքում կամ գնահատման համար նախատեսված առանձին դասաժամի ժամանակ թեման վարող դասախոսը գնահատում է գործնական առաջադրանքի կատարումը: Գնահատման համար գործնական դասաժամի սկզբին թեման վարող դասախոսը դասընթացի կազմակերպչից ստանում է գնահատման թերթիկը՝ N 3 աղյուսակի գնահատման սանդղակով: Գործնական դասընթացի գնահատումը դասախոսն իրականացնում է իր ակադեմիական ազատության շրջանակներում՝ լսարանին տեղեկացնելով կոնկրետ գործնական առաջադրանքի կատարման հիմնական պահանջների գնահատման մոտեցումների ու չափորոշիչների մասին: Դասախոսը գնահատումը կատարում է գործնական դասաժամի ավարտին և առաջադրանքների գնահատման արդյունքները ներկայացնում է մասնակիցներին: Յուրաքանչյուր թեմայի ավարտին դասախոսը դասընթացի կազմակերպչին է փոխանցում ինչպես գործնական առաջադրանքների գնահատված արդյունքները, այնպես էլ սովորողների մասնակցության արդյունքները՝ գնահատված N 3 աղյուսակով սահմանված սանդղակով, ստորագրում է գնահատման թերթիկը՝ այդ ամենին կցելով թեստային առաջադրանքները, ակնարկները, խմբային ներկայացման նյութերը:

Մոդուլի ավարտին ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի պատասխանատուն ամփոփում է յուրաքանչյուր մասնակցի

առանձին թեմաներով գնահատման արդյունքները և N 2 աղյուսակով սահմանված սանդղակով հաշվարկում է մոդուլի ավարտական գնահատականը:

Դասընթացի/մոդուլի ավարտական գնահատումն իրականացվում է 100 միավորանոց համակարգով, որի 80 միավորը կազմավորվում է գործնական աշխատանքների (ակնարկ, խմբային աշխատանք, բանավոր ելույթ) և թեստային հարցերի գնահատումներից, իսկ 20 միավորը տրվում է դասընթացին մասնակցության համար (տե՛ս N 3 աղյուսակ):

Աղյուսակ N 2

Դասընթացի/մոդուլի գնահատման սանդղակ

Գնահատականը	**Գնահատումը**	
	100 միավորանոց համակարգով	**Տառային նիշով՝ կրեդիտային համակարգում**
Գերազանց	96-100 91-95 86-90	A+ A A-
Լավ	81-85 76-80 71-75	B+ B B-
Բավարար	61-70 51-60 40-50	C+ C C-
Անբավարար	<40	D
Չներկայացած		F

Աղյուսակ N 3

Մոդուլի/դասընթացի ավարտական գնահատման բաղադրիչները

Մոդուլի գնահատման բաղադրիչները					
Ակնարկ (Essay)	**Խմբային աշխատանքի ներկայացում PPT**	**Բանավոր ելույթ (դասախաղի արդյունքներ)**	**Թեստ**	**Մասնակ-ցություն**	**Ընդամենը**
20	20	20	20	20	

Թեստային առաջադրանքը կազմված է մի քանի պատասխանից (առնվազն չորս)՝ մեկ ճիշտ պատասխանի ընտրության սկզբունքով: Թեստի հարցերի յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցի պատասխանը «0» է գնահատվում նաև թեստային առաջադրանքում մեկից ավելի պատասխան նշելու, ջնջումների առկայության, նշում չկատարելու դեպքերում: Յուրաքանչյուր թեմայի համար նախատեսված թեստի հարցերի քանակը կախված է հարցի գնահատման միավորների քանակից՝ ոչ ավելի, քան 20 միավոր հանրագումարով: Դասախոսության վերջում՝ թեստային առաջադրանքից առաջ, դասախոսը սովորողներին ներկայացնում է թեստային հարցաշարում ներառված թեմաները: Օրինակ՝ թեստային առաջադրանքը պարունակելու է հարցեր հակակոռուպցիոն նոր ռազմավարությամբ նախատեսված ինստիտուցիոնալ նոր կառույցների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ՀՀ վարչապետին կից հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի, այդ խորհրդում հասարակական կազմակերպությունների ներկայացվածության, ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքային նոր ստորաբաժանման՝ Հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի վարչության նպատակների, խնդիրների, գործառույթների ու լիազորությունների վերաբերյալ:

Ակնարկի գնահատումն ուղղակիորեն կախված չէ կատարված աշխատանքի էջերի քանակից: Մեկնաբանությունները պետք է շարադրված լինեն որպես թեզեր: Աշխատանքի ծավալը սովորաբար պետք է լինի առնվազն 2 և ոչ ավելի, քան 4 էջ (տիտղոսաթերթ չի պահանջվում, թղթի ձևաչափը՝ A-4, տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5): Միևնույն ժամանակ, ակնարկի գնահատականը կարող է իջեցվել սովորողի սեփական կարծիքը հակիրճ, սեղմ արտահայտելու անկարողության համար: Եթե առկա են այլ հեղինակների աշխատանքներից մեջբերումներ կամ այլոց գաղափարներ, ապա պարտադիր պետք է համապատասխան հղում կատարել:

ՄՈԴՈՒԼ 1.
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մոդուլի համառոտ նկարագրություն

«Կոռուպցիայի ներածություն» մոդուլը «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի պարտադիր մոդուլներից է: Այն հաջողությամբ ավարտելն ապահովում է կրթական **1 կրեդիտ:**

Մոդուլի նպատակն է՝ սովորողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ կոռուպցիայի էության, տեսակների, պատճառների և հետևանքների, Հայաստանում կոռուպցիայի դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ:

Մոդուլի խնդիրներն են՝ սովորողներին հասու դարձնել կոռուպցիան ընկալելու հիմնական մոտեցումներին, տրամադրել գիտելիքներ կոռուպցիայի էության և կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ:

Արդյունքներ

Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո սովորողը պետք է՝

⇨ **հասկանա** «կոռուպցիա» երևույթի էությունը, կոռուպցիայի մակարդակի գնահատման մեթոդները, ցուցիչները, կոռուպցիան ծնող հիմնական պատճառներն ու հետևանքները, հանրային կառավարման ոլորտում «լավ կառավարման» հիմնական սկզբունքները, գնահատման ցուցիչները,

⇨ **ճանաչի** կոռուպցիայի դասակարգման հիմնական սկզբունքները, հատկանիշները և դրանց առանձնահատկությունները, կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները,

⇨ **իմանա** կոռուպցիա երևույթի հիմնական բնորոշումները, կոռուպցիայի հիմնական տեսակները, դրանց դասակարգումը, կոռուպցիայի գնահատման հիմնական մեթոդները, ցուցիչները,

⇨ **կարողանա** տալ կոռուպցիայի սահմանումը, բացատրել «կոռուպցիա» երևույթի հատկանիշների առանձնահատկությունները, կիրառել կոռուպցիայի գնահատման մեթոդոլոգիան, մեկնաբանել կոռուպցիա ծնող պատճառները և դրանց հետևանքները, դասակարգել կոռուպցիայի հիմնական տեսակները, վերլուծել Հայաստանում կոռուպցիայի առանձնահատկությունները, ներկայացնել ինքնուրույն դիրքորոշում կոռուպցիայի առկայության կամ բացակայության վերաբերյալ, ներկայացնել առաջարկություններ:

Կապը ՀՀ պետական կառավարման ակադեմիայում դասավանդվող այլ մոդուլների կամ թեմաների հետ

Այս մոդուլը կարող է անցկացվել «Հանրային կառավարում», «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում», «Հանրային ֆինանսների կառավարում», «Իրավագիտություն», «Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն», «Գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն» կրթական ծրագրերով սովորողների համար:

Հիմնական հասկացություններ և հապավումներ

ՀՀ ՊԿԱ - Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա
ԿԿՀ - Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ԵԱՀԿ - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՏՀԶԿ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԵԽ - Եվրոպայի խորհուրդ
ԵՄ- Եվրոպական միություն
ԿԲ - Կենտրոնական բանկ
ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին
ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն
ԳԼԿ - Գործընկերություն հանուն լավ կառավարման
ԶԼՄ - Զանգվածային լրատվական միջոցներ
ՀՌԻՄԾ - Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիր
ՀԲԻ - Համաշխարհային բանկի ինստիտուտ
ԹԻ - Թրանսփարենսի Ինթերնեշնլ
ԹԻՀԿ - Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Հիմնական թեմաներ

Թեմա 1. Կոռուպցիան հասկանալու կամ ընկալելու մոտեցումները, կոռուպցիայի սահմանումը և հատկանիշները

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- պետության կառավարման հիմնական ձևերը, «լավ կառավարումը» ժողովրդավարական հասարակությունում, թափանցիկություն և հաշվետվողականություն, հանրային կառավարման ոլորտում «լավ կառավարման» գաղափարախոսությունը, հանրային ծառայությունների ապահովում, «լավ կառավարման», թափանցիկության, հաշվետվողականության և մասնակցային գործընթացների նոր միտումների պարզաբանումները,
- «կոռուպցիա» հասկացության հիմնական գիտական բնորոշումները, կոռուպցիայի վերաբերյալ տարբեր մոտեցումների առանձնահատկությունները,
- «կոռուպցիա» երևույթի հիմնական բնութագրական հատկանիշները, կոռուպցիայի հատկանիշների և դրանց տարրերի առանձնահատկությունները,
- կոռուպցիայի գնահատման մեթոդները, ցուցիչները. ԹԻ *«կոռուպցիայի ընկալման համաթիվ», «կոռուպցիայի համաշխարհային բարոմետր», «օրինավորության ազգային համակարգի գնահատում»,* դրանց ձևավորման աղբյուրները և հաշվարկման մեթոդոլոգիան,
- «լավ կառավարման»՝ ՀԲԻ-ի կողմից հաշվարկվող ցուցանիշների ու ցուցիչների համակարգը՝ *«կարգավորման որակի ինդեքսը», «կառավարման արդյունավետության ինդեքսը», «օրենքի գերակայության ինդեքսը», «ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքսը», «քաղաքական կայունության և ճնշումների*

բացակայության ինդեքսը», «կոռուպցիայի վերահսկման ինդեքսը», ինչպես նաև *«Ֆրիդոմ հաուս»* միջազգային կազմակերպության կողմից հաշվարկվող *«քաղաքական իրավունքների ինդեքսը» և «քաղաքացիական ազատությունների ինդեքսը»,* դրանց ձևավորման աղբյուրները, հաշվարկման մեթոդոլոգիան:

Գործնական աշխատանք

Դասախոսության ընթացքում ներկայացված թեմաները կքննարկվեն լսարանում: Այնուհետև դասաժամին ներկա սովորողները կբաժանվեն 3-4 հոգուց կազմված խմբերի, և յուրաքանչյուր խմբին կհանձնարարվի կատարել հետևյալ առաջադրանքներից մեկը.

- ՀԲԻ-ի «Worldwide Governance Indicators» կայքից դուրս բերել *«կոռուպցիայի վերահսկման համաթվի (Control of Corruption)»*՝ Հայաստանի և ԵԱՏՄ անդամ մյուս երկրների համար վերջին հինգ տարիների մեծությունները, համադրել դրանք և փորձել վերլուծել դրանց միջև տարբերությունները՝ ըստ երկրների և տարիների: Նույն համադրումը և վերլուծությունը կատարել՝ հիմք ընդունելով Հայաստանի և հարևան երկրների համաթվերի մեծությունները վերջին հինգ տարիներին:
- Վերը նշված առաջադրանքը կատարել՝ վերցնելով ԹԻ «կոռուպցիայի ընկալման համաթվի» ցուցանիշները: Նույն առաջադրանքը կատարել՝ վերցնելով «Ֆրիդոմ հաուսի» «Պետություններն անցումային փուլում» (Nations in Transit) ուսումնասիրության «կոռուպցիա» ենթահամաթվի ցուցանիշները: Այս դեպքում, հաշվի առնելով ուսումնասիրության մեջ ընդգրկված երկրները, Հայաստանի և ԵԱՏՄ անդամ մյուս երկրների ցուցանիշներից բացի, համադրել և վերլուծել Հայաստանի և Արևելյան գործընկերության անդամ մյուս երկրների վերջին հինգ տարիների ցուցանիշները:
- Յուրաքանչյուր համադրության վերաբերյալ քննարկումներ, մեկնաբանություններ ու կարծիքների փոխանակում՝ ուշադրություն դարձնելով, թե որքանով են միևնույն երկրի նշված երեք համաթվերն իրարից տարբերվում: Մասնակիցների բանավոր ելույթներ:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Մուրադյան Մ. Հ., Պետությունը և կոռուպցիան. սոցիալական հիմնախնդրի միջազգային և ներպետական իրավական լուծումները, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Եր., հեղ. հրատ., 2012, 130 էջ
- Цагикян С. Ш., Противодействие коррупции в Армении. - СПб. «Антарес», 2006, 296 с.
- Барбашин М. Ю., Институциональная демократия и социальные дилеммы: опыт постсоветских трансформаций. - Saarbrucken, Germany: LAP Lambert Academic Publishing, 2011. - 168 с.
  https://www.isras.ru/files/File/publ/Barbashin_Institutsionalnaya_demokratiya.pdf
- Основные понятия и концепции антикоррупционной деятельности. Учебное пособие. Council of Europe, 2015, https://rm.coe.int/-/16806eed0c
- Introduction to Corruption. The World Bank, http://siteresources.worldbank.org/PSGLP/Resources/corruptionunit1.pdf

- Freedom house *"Freedom in the world 2019"*, https://freedomhouse.org/sites/default/files/Feb2019_FH_FITW_2019_Report_ForWeb-compressed.pdf.
- Transparency International *"Corruption Perception Index 2019"*, https://www.transparency.org/files/content/pages/2019_CPI_Report_EN.pdf
- The Worldwide Governance Indicators: Methodology and Analytical Issues. World Bank Policy Research Working Paper No. 5430, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1682130
- «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի 2016 թ. հարցումը Հայաստանում», https://transparency.am/hy/gcb/2016
- «2019 թ. Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն», https://transparency.am/hy/publications/view/333
- «Հայաստանի օրինավորության ազգային համակարգի գնահատում 2014», https://transparency.am/files/publications/1430407491-0-887324.pdf?v=4
- Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ), https://transparency.am/hy/cpi
- Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր (ԿՀԲ), https://transparency.am/hy/gcb
- The Worldwide Governance Indicators,
  https://info.worldbank.org/governance/wgi/Home/Documents
  https://databank.worldbank.org/source/worldwide-governance-indicators#
- Worldwide Governance Indicators (WGI) country data report for Armenia, 1996-2014 (English), http://documents.worldbank.org/curated/en/683781467995410518/Country-data-report-for-Armenia-1996-2014

Լրացուցիչ

- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում, www.arlis.am
- Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա, www.arlis.am
- Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա, www.arlis.am
- «Ինչպես պայքարել կոռուպցիայի դեմ», ԵԱՀԿ, Տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակ
- ՀՀ Կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1272-Ն որոշում, https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/430.pdf
- «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի գնահատում», https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/1409.pdf
- Антикоррупционные реформы в Армении. Третий раунд мониторинга Стамбульского плана действий по борьбе с коррупцией https://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-RUS.pdf
- J. Edgardo Campos, Sanjay Pradhan. *The Many Faces of Corruption: Tracking Vulnerabilities at the Sector Level*. The World Bank. 2007.
- Ծաղիկյան Ս., Սարգսյան Գ., Կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը.- ՀՀ «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ, 2010
- Коррупция: политические, экономические, организационные и правовые проблемы. Под. ред. В. В. Лунеева, М., 2001

- Nate Haken, J. J. Messner, Krista Hendry, Patricia Taft, Kendall Lawrence, Felipe Umaña, T*he Failed States Index 2013,* https://fundforpeace.org/wp-content/uploads/2018/08/cfsir1306-failedstatesindex2013-06l.pdf
- Տարոն Աճեմօղլու, Ջեյմս Ռոբինսոն, «Ինչու են ձախողվում պետությունները», 2018

Թեմա 2. Կոռուպցիայի պատճառները և հետևանքները

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- հասկացություն կոռուպցիայի պատճառների, պայմանների և ռիսկերի, դրանց տարբերակման վերաբերյալ,
- կոռուպցիայի հիմնական պատճառները՝ իրավունքի (օրենքի) գերակայության ոտնահարումը, իշխանությունների տարանջատման ոչ լիարժեքությունը, սոցիալապես և նյութապես խոցելի, ուռճացված պետական ապարատը, անարդյունավետ պետական կառավարումը, ստվերային տնտեսությունը, օրենսդրական բացերը, իրավապահ մարմինների և դատական համակարգի անբավարար գործունեությունը, մարդու քաղաքացիական իրավունքների, գործող օրենսդրության, սոցիալական արդարության պաշտպանության մեխանիզմների անկատարությունը և այլն,
- կոռուպցիայի հետևանքները, սոցիալական հետևանքների բնորոշումը, հետևանքների հիմնական հատկանիշները:

Գործնական աշխատանք

Լսարանում ձևավորված 3-4 հոգուց կազմված խմբերին հանձնարարել խմբային աշխատանք: Յուրաքանչյուր խումբ պետք է կատարի մեկ խնդիր (առաջադրանք).

- ընտրել 2-3 երկիր և, կրկնելով Թեմա 1-ի առաջադրանքները, դուրս բերել դրանց կոռուպցիայի համաթվերը (ԹԻ-ի *կոռուպցիայի ընկալման համաթիվ,* Համաշխարհային բանկի *կոռուպցիայի կառավարման համաթիվ* կամ «Ֆրիդոմ հաուսի» *կոռուպցիա ենթահամաթիվ*),
- կիրառելով դասախոսության արդյունքում ստացած գիտելիքները՝ բացատրել և հիմնավորել այդ երկրների *կոռուպցիայի համաթվերի* միջև առկա տարբերությունները ծնող պատճառները և այդ համաթվերի մեծությունների միջոցով վերլուծել դրանց հետևանքները:

Խմբերն աշխատանքը ներկայացնում են բանավոր՝ զուգակցելով PPT ձևաչափով ներկայացմամբ կամ flipchart-ով:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Ծաղիկյան Ս. Շ., Կոռուպցիա: Պատճառները, հետևանքները/ խմբ.՝ Վ. Հկոբյան, Եր., Անտարես, 2003, 173 էջ
- Մուրադյան Մ. Հ., Պետությունը և կոռուպցիան. սոցիալական հիմնախնդրի միջազգային և ներպետական իրավական լուծումները,- ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Եր., հեղ. հրատ., 2012, 130 էջ

Լրացուցիչ

- U4 Anti-corruption Research Center, *Anti-corruption basics*, https://www.u4.no/topics/anti-corruption-basics/basics
- International Monetary Fund, *Corruption Around the World: Causes, Consequences, Scop, and Curres*. 1998, https://www.imf.org/external/pubs/ft/wp/wp9863.pdf
- UK Department for International Development, *Why corruption matters: understanding causes, effects and how to address them*. 2015, https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/406346/corruption-evidence-paper-why-corruption-matters.pdf
- Susan Rose-Ackerman, *The Political Economy of Corruption - Causes and Consequences*. 1996., https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/11629/multi_page.pdf?sequence=1&isAllowed=y

Թեմա 3. Կոռուպցիայի դրսևորումները, տեսակները և դրանց դասակարգումը

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- կոռուպցիայի հիմնական դրսևորումները, դրանց էությունը և առանձնահատկությունները,
- կոռուպցիայի տեսակները՝ հանրային և մասնավոր կոռուպցիա, գործառական, քաղաքական, վարչական կոռուպցիա, անդրազգային և ներպետական կոռուպցիա և այլն, դրանց էությունը և առանձնահատկությունները,
- կոռուպցիայի ձևերի և տեսակների դասակարգման վերաբերյալ տարբեր գիտական մոտեցումները, դասակարգման հիմքերը և հիմնական խմբերի դասակարգումը:

Գործնական աշխատանք

Լսարանում ձևավորված 3-4 հոգուց կազմված խմբերին հանձնարարել խմբային աշխատանք.

- դասախոսության մեջ նկարագրված կոռուպցիայի վարչական, քաղաքական և մասնավոր սեկտորի տեսակներից ներկայացնել մեկական օրինակ, այնուհետև նկարագրել դրանց առանձնահատկությունները, պատճառները և հետևանքները:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Цагикян С. Ш., Противодействие коррупции в Армении. - СПб. «Антарес», 2006, 296 с.
- J. Bussell. *Typologies of corruption: a pragmatic approach*. University of California. 2016
- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում, www.arlis.am
- Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա, www.arlis.am
- Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա, www.arlis.am
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, www.arlis.am
- ՀՀ քրեական օրենսգիրք, www.arlis.am
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, www.arlis.am
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am

Լրացուցիչ

- J. Edgardo Campos, Sanjay Pradhan. *The Many Faces of Corruption: Tracking Vulnerabilities at the Sector Level*. The World Bank. 2007.
- Introduction to Corruption. The World Bank, http://siteresources.worldbank.org/PSGLP/Resources/corruptionunit1.pdf
- «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիա, www.arlis.am

Թեմա 4. Հայաստանում կոռուպցիայի դրսևորման առանձնահատկությունները

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ պատմական ակնարկ,
- Հայաստանում կոռուպցիայի հիմնական պատճառները և դրանց հետևանքները,
- կոռուպցիան ժամանակակից Հայաստանում:

Գործնական աշխատանք

Դասախոսության ընթացքում ներկայացված թեմաները կքննարկվեն լսարանում՝ դրանք տեղայնացնելով: Լսարանում ձևավորված 3-4 հոգուց կազմված խմբերին հանձնարարել կատարել խմբային աշխատանք.

- ուսումնասիրել և վեր հանել Հայաստանի տարբեր ոլորտներից կոռուպցիայի որևէ դրսևորում, նկարագրել այն և ներկայացնել լսարանին,
- սովորողների հետ քննարկումների արդյունքում ներկայացնել ընտրված ոլորտում կոռուպցիայի տարածվածության հիմնական պատճառները, հետևանքները, դրանց պատճառահետևանքային կապը,
- աշխատանքը ներկայացնել գրավոր և համապատասխան հիմնավորումներով,
- աշխատանքը ներկայացնելիս կարելի է օգտագործել մագնիսամարկերային գրատախտակներ (ֆլիպչարթ), իսկ հիմնական եզրահանգումները կարելի է ներկայացնել PPT ձևաչափով:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Կոռուպցիա: Պատճառները, հետևանքները /Ս. Շ. Ծաղիկյան, խմբ.՝ Վ. Հակոբյան: Երևան: Անտարես, 2003. 173 էջ
- Цагикян С. Ш., Противодействие коррупции в Армении. - СПб. «Антарес», 2006.– 296 с.
- Մուրադյան Մ. Հ., Պետությունը և կոռուպցիան. սոցիալական հիմնախնդրի միջազգային և ներպետական իրավական լուծումները,- ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Եր., հեղ. հրատ., 2012, 130 էջ

Դասացուցակ

Մոդուլի ընդհանուր ծանրաբեռնվածությունը հինգ շաբաթ է՝ **100** ժամ *(դասախոսություն՝ 15 ժամ, գործնական աշխատանք՝ 15 ժամ, ինքնուրույն աշխատանք՝ 70 ժամ)*:

TN	Թեմայի անվանումը	Դասաժամի ծավալը	Դասաժամի տեսակը	Եղանակը
1.	**Կոռուպցիան հասկանալու կամ ընկալելու մոտեցումները, կոռուպցիայի սահմանումը և հատկանիշները**	6	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		6	գործնական աշխատանք	վերլուծություն, քննարկումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		20	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, ելույթների պատրաստում
2.	**Կոռուպցիայի պատճառները և հետևանքները**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	իրավիճակային խնդիրների վերլուծություն, քննարկումներ, PPT ներկայացումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		20	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, մասնակցություն հանձնարարված խմբային աշխատանքներին

TN	Թեմայի անվանումը	Դասա-ժամի ծավալը	Դասաժամի տեսակը	Եղանակը
3.	**Կոռուպցիայի դրսևորումները, տեսակները և դրանց դասա-կարգումը**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	քննարկումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		15	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, ակնարկների, ելույթների պատրաստում
4.	**Հայաստանում կոռուպցիայի դրսևորման առանձնահատ-կությունները**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	քննարկումներ, PPT ներկայացումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		15	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, ելույթների պատրաստում, մասնակցություն հանձնարարված խմբային աշխատանքներին

Մոդուլը հաջողությամբ ավարտելը

Գնահատման նյութեր

Քննություն կամ ստուգարք

- Թեստային առաջադրանք մոդուլում ներառված որևէ թեմայի տեսական հարցադրումների վերաբերյալ

Գործնական աշխատանքներ

1. «Կոռուպցիան հասկանալու կամ ընկալելու մոտեցումները, կոռուպցիայի սահմանումը և հատկանիշները» թեմայի գործնական աշխատանքի ընթացքում սովորողները պետք է կատարեն հետևյալ առաջադրանքը.

- ՀԲԻ-ի «Worldwide Governance Indicators» կայքից դուրս բերել *«կոռուպցիայի վերահսկման համաթվի (Control of Corruption)»*՝ Հայաստանի և ԵԱՏՄ անդամ մյուս

երկրների համար վերջին հինգ տարիների մեծությունները, համադրել դրանք և փորձել վերլուծել դրանց միջև տարբերությունները՝ ըստ երկրների և տարիների: Նույն համադրումը և վերլուծությունը կատարել՝ հիմք ընդունելով Հայաստանի և իր հարևան երկրների համաթվերի մեծությունները վերջին հինգ տարիներին:

- Նշված առաջադրանքը կատարել՝ վերցնելով ԹԻ «կոռուպցիայի ընկալման համաթվի» ցուցանիշները: Նույն առաջադրանքը կատարել՝ վերցնելով *«Ֆրիդոմ հաուսի»* «Պետություններն անցումային փուլում» (Nations in Transit) ուսումնասիրության «կոռուպցիա» ենթահամաթվի ցուցանիշները: Այս դեպքում, հաշվի առնելով ուսումնասիրության մեջ ընդգրկված երկրները, Հայաստանի և ԵԱՏՄ անդամ մյուս երկրների ցուցանիշներից բացի, համադրել և վերլուծել Հայաստանի և Արևելյան գործընկերության անդամ մյուս երկրների վերջին հինգ տարիների ցուցանիշները:
- Յուրաքանչյուր համադրության վերաբերյալ քննարկումներ, մեկնաբանություններ ու կարծիքների փոխանակում՝ ուշադրություն դարձնելով նաև, թե որքանով են իրարից տարբերվում միևնույն երկրի նշված երեք համաթվերը: Մասնակիցների բանավոր ելույթներ:

Ելույթի գնահատումը կիրականացվի՝ հաշվի առնելով՝

- ՀԲԻ-ի կայքից օգտվելու կարողությունը,
- համապատասխան ցուցիչի բովանդակությունը, չափելիությունը և արժեքների մեծությունը, հաշվարկված մեծությունների շարքի ստացման ունակությունը,
- «լավ կառավարման» համապատասխան արժեքին կամ սկզբունքին համապատասխանության վերաբերյալ կատարված եզրահանգումների և առաջարկությունների որակը:

2. «Կոռուպցիայի պատճառները և հետևանքները» թեմայի գործնական աշխատանքի շրջանակում 3-4 հոգանոց խմբերից յուրաքանչյուրին կհանձնարարվի հետևյալ լսարանային աշխատանքը.

- ընտրել 2-3 երկիր և, կրկնելով Թեմա 1-ի առաջադրանքները, դուրս բերել դրանցում կոռուպցիայի համաթվերը (ԹԻ-ի *«Կոռուպցիայի ընկալման համաթիվ»*, Համաշխարհային բանկի *«Կոռուպցիայի կառավարման համաթիվ»* կամ *«Ֆրիդոմ հաուսի» «Կոռուպցիայի ենթահամաթիվ»*),
- կիրառելով դասախոսության արդյունքում ստացած գիտելիքները՝ բացատրել և հիմնավորել այդ երկրների կոռուպցիայի համաթվերի միջև առկա տարբերությունները ծնող պատճառները և այդ համաթվերի մեծությունների միջոցով վերլուծել դրանց հետևանքները:

Խմբերն աշխատանքը ներկայացնում են բանավոր՝ զուգակցելով PPT պրեզենտացիայով կամ flipchart-ով:

Նշված հարցերի պատասխանների հիման վրա կկատարվի գնահատում:

3. «Կոռուպցիայի դրսևորումները, տեսակները և դրանց դասակարգումը» թեմայի գործնական աշխատանքի շրջանակում յուրաքանչյուր խմբին կհանձնարարվի՝

- ինքնուրույն բերել դասախոսության մեջ նկարագրված կոռուպցիայի վարչական, քաղաքական և մասնավոր սեկտորի տեսակներից մեկական օրինակ, ներկայացնել այդ օրինակների առանձնահատկությունները, պատճառները և հետևանքները,

- ինքնուրույն ուսումնասիրել միջազգային կամ ներպետական մակարդակում հնչեղություն ստացած որևէ կոռուպցիոն դրսևորում (սկանդալ), ներկայացնել այդ դրսևորման առանձնահատկությունները, պատճառները և հետևանքները:

Նշված հարցերի պատասխանների հիման վրա կկատարվի գնահատում:

4. «Հայաստանում կոռուպցիայի դրսևորման առանձնահատկությունները» թեմայի գործնական աշխատանքի շրջանակում խմբերից յուրաքանչյուրին կհանձնարարվի՝

- ուսումնասիրել և վեր հանել Հայաստանում որևէ ոլորտում կոռուպցիոն դրսևորում, նկարագրել այն և ներկայացնել լսարանին,
- համատեղ քննարկումների արդյունքում ներկայացնել ընտրված ոլորտում կոռուպցիայի տարածվածության հիմնական պատճառները, հետևանքները, նրանց պատճառահետևանքային կապը,
- աշխատանքը ներկայացնել գրավոր և համապատասխան հիմնավորումներով,
- ներկայացման համար կարելի է օգտագործել մագնիսամարկերային գրատախտակներ (ֆլիպչարթ), իսկ հիմնական եզրահանգումները ներկայացնել PPT ձևաչափով:

ՄՈԴՈՒԼ 2.
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մոդուլի համառոտ նկարագրություն

«Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ» մոդուլը «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի պարտադիր մոդուլներից է: Այն հաջողությամբ ավարտելն ապահովում է **1 կրեդիտ:**

Մոդուլի նպատակն է՝ սովորողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և դրա իրականացման սկզբունքների վերաբերյալ:

Մոդուլի խնդիրներն են՝ սովորողներին հասու դարձնել Հայաստանում հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական խնդիրներին, տրամադրել գիտելիքներ Հայաստանի հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ, նրանց շրջանում զարգացնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և փորձաքննության, այդ թվում՝ իրավական ակտերի ազդեցության գնահատման գործիքները կիրառելու, հակակոռուպցիոն ռազմավարության, գործողությունների ծրագրերի ու միջոցառումների մշակման մոնիտորինգի ու գնահատման ունակություններ:

Արդյունքներ

Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո սովորողը պետք է՝

⇨ **հասկանա** հանրային կառավարման ոլորտում հակակոռուպցիոն քաղաքականության գաղափարախոսությունը, ուղղությունները, միջոցները և ակնկալվող արդյունքների բովանդակությունը,

⇨ **ճանաչի** հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն քաղաքականության հայաստանյան ինստիտուցիոնալ մոդելը, հակակոռուպցիոն մարմինների և հանրային հսկողություն իրականացնող կառույցների դերակատարումները՝ ըստ կոռուպցիայի դեմ պայքարի նշանակության,

⇨ **իմանա** հակակոռուպցիոն քաղաքականության օրենսդրական կարգավորումները, հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մոնիտորինգի, կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա հակակոռուպցիոն (բարեվարքության) գործողությունների ծրագրերի մշակման, նորմատիվ իրավական ակտերի կարգավորման հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման ու գնահատման գործիքակազմերը, միջազգային հակակոռուպցիոն կառույցների կողմից Հայաստանի հակակոռուպցիոն քաղաքականության մոնիտորինգի իրականացման կառուցակարգերը,

⇨ **կարողանա** գնահատել ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականությունը, գործնականում կիրառել կոռուպցիոն ռիսկերի և նորմատիվ իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման ու գնահատման մեթոդները, հակակոռուպցիոն ծրագրերի կամ միջոցառումների իրականացման արդյունքների ու ընթացքի մոնիտորինգի գործիքները, մեկնաբանի միջազգային պարտավորություններով ՀՀ ստանձնած հանձնառությունները, վերլուծել հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները և դրանք տարբերակել կոռուպցիայի դեմ պայքարի միջոցներից, գնահատել հակակոռուպցիոն միջոցառումներից ակնկալվող արդյունքները օրենսդրական կարգավորումների շրջանակում և ներկայացնել ինքնուրույն դիրքորոշում, համեմատել հակակոռուպցիոն ռազմավարությամբ և միջոցառումների ծրագ-

րով նախատեսված առանձին դրույթները միջազգային պարտավորությունների հետ և ներկայացնել առաջարկություններ դրանց փոփոխության կամ կատարելագործման ուղղությամբ, քննադատորեն վերլուծել և ձևակերպել օրենսդրական նոր կարգավորումները կամ փոփոխությունները և ներկայացնել այլընտրանքային լուծումներ:

Կապը ՀՀ պետական կառավարման ակադեմիայում դասավանդվող մոդուլների կամ թեմաների հետ

Կարևոր է, որ այս մոդուլն անցնելուց առաջ սովորողները ծանոթ լինեն «Կոռուպցիայի ներածություն» մոդուլին: Այն կարող է անցկացվել «Հանրային կառավարում», «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում», «Հանրային ֆինանսների կառավարում», «Իրավագիտություն», «Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն», «Գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն» կրթական ծրագրերով սովորողների համար:

Հիմնական հասկացություններ և հապավումներ

ՀՀ ՊԿԱ - Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա
ԿԿՀ - Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ԵԱՀԿ - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՏՀԶԿ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ/OECD)
ԵԽ - Եվրոպայի խորհուրդ
ԵՄ- Եվրոպական միություն
ԵԽ ԳՐԵԿՈ - Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ (ԳՐԵԿՈ/GRECO)
ԿԲ - Կենտրոնական բանկ
ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին
ՀՀ ԱԱԾ – Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն
ՀՀ ՊԵԿ - Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե
ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն
ԳԼԿ - Գործընկերություն հանուն լավ կառավարման
ԿԱԳ - Կարգավորման ազդեցության գնահատում
ԶԼՄ - Զանգվածային լրատվական միջոցներ
ՀՌԻՄԾ - Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիր

Թեմա 1. Հակակոռուպցիոն քաղաքականություն: Ռազմավարություններ ու ծրագրեր, դրանց իրականացման մոնիտորինգի համակարգը

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- հակակոռուպցիոն քաղաքականության հիմնարար արժեքներն ու սկզբունքները, հայեցակարգային ուղղությունները, հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունների ձևավորման սկզբունքները, ուղղությունները,
- հակակոռուպցիոն քաղաքականության մշակման ու իրականացման գործում հանրային ինստիտուտների դերը հանրային ծառայությունների որակի և մատչելիության ապահովման, քաղաքացիական հասարակության հետ շարունակական երկխոսության, որոշումների կայացման, իրականացման և վերահսկման գործում,
- հակակոռուպցիոն քաղաքականության ռազմավարական փաստաթղթերի ու միջոցառումների ծրագրերի մշակման իրավական հիմքերը, դրանց կարգավիճակը, տեղն ու դերը պետական ծրագրերի համակարգում,
- Հայաստանի հակակոռուպցիոն քաղաքականության ռազմավարությունները, դրանց իրականացման ծրագրերը, այդ ծրագրերի հիմնական նպատակները, խնդիրները, ուղղությունները, նախանշած արդյունքները և միջոցառումների համակարգը,
- հակակոռուպցիոն ռազմավարությունների ու ծրագրերի միջոցով հակակոռուպցիոն քաղաքականության սկզբունքների կիրառման պրակտիկան, սահմանված առաջնահերթություններն ու դրանց հասնելու ուղիները,
- նախկին հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի արդյունքների համեմատական վերլուծությունը և քաղած դասերը,
- հակակոռուպցիոն քաղաքականության մշակման ու իրականացման գործում ՀՀ միջազգային համագործակցության եղանակները, ձևերը, մասնավորապես, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի, ԳՐԵԿՈ անդամ-երկրների, ՏՀԶԿ հակակոռուպցիոն Ստամբուլյան գործողությունների ծրագրերի և այլ միջազգային նախաձեռնություններով ստանձնած պարտավորությունների կատարման վիճակը,
- հակակոռուպցիոն ռազմավարությունների ու դրանց իրականացման ծրագրերի մոնիտորինգի կազմակերպման և գնահատման մեխանիզմները, կիրառվող մեթոդիկաները՝ պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միավորումների կողմից:

Գործնական աշխատանք

ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի առանձին միջոցառման օրինակով կազմել այդ միջոցառման մոնիտորինգի զեկույց:

Այս աշխատանքը կատարելու համար լսարանը բաժանել խմբերի: Մոնիտորինգի զեկույցում պետք է նշվի, թե որքանով է նշված միջոցառման իրականացումը կապակցված ակնկալվող արդյունքին, արդյոք այն բխո՞ւմ է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից, ի՞նչ ցուցիչներ են պլանավորված

միջոցառման գնահատման համար, արդյոք այս միջոցառման կատարման մասով պլանավորված ցուցիչները պատկերացում տալիս են ակնկալվող արդյունքի մասին: Նշված հարցերի պատասխանների հիման վրա շարադրել սեփական մեկնաբանությունները և ներկայացնել առաջարկություններ ծրագրային միջոցառումների փոփոխության վերաբերյալ (ոչ ավելի, քան 2 էջ):

Այս վարժությունները կարելի է ձևակերպել նաև որպես խմբային «դեպքերի ուսումնասիրություն» և յուրաքանչյուր խմբի կողմից անհամապատասխանության բացահայտման վերաբերյալ զեկույցի ներկայացում (PPT):

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Ինչպես պայքարել կոռուպցիայի դեմ», ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակ
- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում, www.arlis.am
- «Kuala Lumpur Statement on Anti-Corruption Strategies» Kuala Lumpur, 21-22 October 2013, https://www.unodc.org/documents/southeastasiaandpacific/2013/10/corruption/Kuala_Lumpur_Statement_on_Anti-Corruption_Strategies_Final_21-22_October_2013.pdf
- Արտասահմանյան երկրների հակակոռուպցիոն քաղաքականության համեմատական վերլուծություն, http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2018/11/Aram_Manukyan_Hakakorupcion.pdf
- ՀՀ Կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշում, https://www.e-gov.am/gov-decrees/item/31390/
- ՀՀ Կառավարության 2014 թվականի ապրիլի 10-ի «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգին հավանություն տալու մասին» N 14 արձանագրային որոշում, www.arlis.am
- ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, www.arlis.am
- ՀՀ Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1141-Ն որոշում, https://www.e-gov.am/gov-decrees/item/26398/
- ՀՀ Կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին N 1272-Ն որոշում», https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/430.pdf
- ՀՀ Կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1522-Ն որոշում, www.arlis.am

- ՀՀ Կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին» N 2 արձանագրային որոշում, https://www.e-gov.am/protocols/item/459/
- Основные понятия и концепции антикоррупционной деятельности. Учебное пособие. Council of Europe, 2015, https://rm.coe.int/-/16806eed0c.

Լրացուցիչ

- Anti-corruption reforms in Armenia 4th round of monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, http://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf
- Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում, գնահատման չորրորդ փուլ, 8 դեկտեմբերի 2017 թվական, GrecoRC4(2017)15, https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupca/greco.pdf; https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia
- 2019 թ. Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, https://transparency.am/hy/publications/view/333
- «Self-assessment checklists. Armenia» United Nations Convention against Corruption, http://moj.am/storage/uploads/00.UNCAC_IRM_2nd_circle.pdf
- Հավելված 2. ՀՌԻՄԾ 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի իրականացման մոնիտորինգի արդյունքների հաշվետվության կազմման ուղեցույց: «Հաշվետվություն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի իրականացման մոնիտորինգի փորձագիտական խմբի», 2010 թ. ապրիլ-հուլիս, փորձագետներ՝ Արմեն Խուդավերդյան, Սամվել Մանուկյան, Երևան, 2010
- «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի գնահատում» https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/1409.pdf

Թեմա 2. Հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմիններ

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- հանրային կառավարման համակարգում ինստիտուցիոնալ մարմինների դերակատարումը հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման գործում,
- հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների միջազգային փորձը, դրանց ձևավորմանը և գործունեությանը ներկայացվող հիմնական սկզբունքները, միջազգայնորեն ընդունված մոդելները, առավելություններն ու բացերը,
- Հայաստանի հակակոռուպցիոն մարմինների համակարգը, առաքելությունն ու գործառույթները,
- առանձին ինստիտուցիոնալ կառույցների (կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, հակակոռուպցիոն կոմիտե, հակակոռուպցիոն մասնագիտացված դատարաններ, հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ, հատուկ քննչական ծառայություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ ոստիկանություն, ՀՀ ԱԱԾ, ՀՀ ՊԵԿ, ՀՀ հաշվեքննիչ պալատ, ՀՀ վարչապետի վերահսկողական ծա-

ռայություն, պետական մարմինների ներքին աուդիտի միավորներ և այլն) դերն ու գործառույթները, նրանց միջև փոխգործակցության եղանակները,

- հանրային կառավարման ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ նոր կառույցների՝ հակակոռուպցիոն կոմիտեի, հակակոռուպցիոն դատարանների, ՀՀ գլխավոր դատախազության մասնագիտացված ստորաբաժանման, ՀՀ վարչապետին կից հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիտորինգի կառուցվածքային միավորի նպատակներն ու գործառույթները,
- կոռուպցիայի կանխարգելման ՀՀ ինստիտուցիոնալ մոդելը, դրա համապատասխանությունը միջազգայնորեն ընդունված մոդելներին,
- կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթներն ու դերակատարումը հակակոռուպցիոն քաղաքականության մշակման ու իրականացման գործում, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի նախագծերի փորձագիտական վերլուծության, կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մշակման, այդ ծրագրերի մոնիտորինգի և գնահատման իրականացման, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման ծրագրերի ու միջոցառումների իրականացման, իրավասու մարմնին կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի ներկայացման, կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկմանն ուղղված առաջարկությունների ներկայացում,
- կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին կանխարգելման նոր գործիքակազմերի վերապահման միտումները և նախանշվող օրենսդրական նախագծերը:

Գործնական աշխատանք

1. Նախապես ընտրել և լսարանում ձևավորված 3-4 հոգուց կազմված խմբերին բաժանել հակակոռուպցիոն քաղաքականության ինստիտուցիոնալ կառույցների անվանումները, ապա հանձնարարել խմբերին՝

- ուսումնասիրել այդ կառույցների նպատակները, խնդիրները, գործառույթներն ու լիազորությունները,
- համադրել միջազգային փորձից հայտնի համապատասխան կառույցների նպատակները, խնդիրներն ու գործառույթները,
- վերլուծել, դասակարգել՝ ըստ կառույցների հիմնական նպատակների, խնդիրների և գործառույթների,
- նախապատրաստել առաջարկություններ այդ կառույցների վերակազմավորման կամ նորերի ձևավորման, կամ էլ դրանց նոր գործառույթներ ու գործիքակազմեր վերապահելու վերաբերյալ:

Գործնական դասաժամին յուրաքանչյուր խումբ առաջարկությունները ներկայացնում է PPT ձևաչափով, համապատասխան հիմնավորումներով և գնահատվում է:

2. Հանձնարարել լսարանին գրել թեստ՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ վարչապետին կից հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործառույթների ու լիազորությունների վերաբերյալ:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Ինչպես պայքարել կոռուպցիայի դեմ», ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակ
- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում, www.arlis.am
- «Jakarta Statement on Principles for Anti-Corruption Agencies» https://www.unodc.org/documents/corruption/WG-Prevention/Art_6_Preventive_anti-corruption_bodies/JAKARTA_STATEMENT_en.pdf
- ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, www.arlis.am
- ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808–Ն որոշում, www.arlis.am, https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/voroshumNrv098-new.pdf
- ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N704-Լ որոշում, www.arlis.am
- ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 13-ի «Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 113-Լ հրաման, https://www.moj.am/storage/uploads/Havelvac_1.anticorruption.pdf
- Հակակոռուպցիոն քաղաքականություն, Արմեն Խուդավերդյան, ԹԻՀԿ հանրային կառավարման գծով խորհրդատու, https://reforms.am/reforms/anti-corruption/
- «ՀՀ հակակոռուպցիոն ոլորտը՝ պատկերավոր և պարզեցված», Հակակոռուպցիոն կառույցները Հայաստանում, ինֆոգրաֆիկա, ԹԻՀԿ, 2021, https://transparency.am/hy/media/infographics/article/4555

Լրացուցիչ

- Специализированные институты по борьбе с коррупцией: Обзор моделей. Организация экономического сотрудничества и развития. Сеть по борьбе с коррупцией для стран Восточной Европы и Центральной Азии https://www.oecd.org/corruption/acn/39972100.pdf
- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի 2011 թ. արդյունքների մոնիտորինգի հաշվետվություն (2011 թ. առաջին կիսամյակ), https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/915.pdf
- «Կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն» ՀՀ դատախազության կանոնադրություն, http://www.prosecutor.am/am/

Թեմա 3. Կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը և ազդեցության գնահատումը: Կոռոպցիոն ռիսկերի հիման վրա պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մշակումը

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման էությունը և նշանակությունը, «կոռուպցիոն ռիսկ» հասկացությունը, հիմնական տեսակները և դրանց չեզոքացման մեթոդները,
- կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդիկան և հակակոռուպցիոն միջոցառումների պլանների մշակման մեթոդաբանությունը,
- Նորմատիվ իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատումը (ԿԱԳ) և հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման ու գնահատման փոխհարաբերակցությունը և միջազգային պրակտիկան:

Գործնական աշխատանք

1. Լսարանում ձևավորված 3-4 հոգուց կազմված խմբերին հանձնարարել խմբային աշխատանք՝ երկու փուլով.

- *Առաջին փուլ.* յուրաքանչյուր խումբ նախապես ընտրում է պետական մարմնի որևէ ոլորտի (ցանկը կտրամադրվի) որևէ գործառույթ և «բացահայտում» կոռուպցիոն ռիսկերը՝ հաշվի առնելով մեթոդիկայի պահանջները:
- Ռիսկերը վերհանելուց հետո խումբը մշակում է առաջարկություններ՝ դրանց չեզոքացման, այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտի նախագծում փոփոխություններ կատարելու մասին:
- Խմբերը միմյանց են փոխանցում իրենց մշակած առաջարկությունները իրավական ակտերում փոփոխությունների վերաբերյալ:
- *Երկրորդ փուլ.* հիմք ընդունելով իրավական ակտի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները՝ խումբը կատարում է նախագծի հակակոռուպցիոն փորձագիտական գնահատում:
- Վերջում բոլոր խմբերը ներկայացնում են և՛ առաջին, և՛ երկրորդ փուլերում կատարած առաջարկությունները PPT ձևաչափով և համապատասխան հիմնավորումներով:

2. 3-4 հոգուց կազմված խմբերին հանձնարարել խմբային աշխատանք՝ երեք փուլով.

- *Առաջին փուլ.* յուրաքանչյուր խումբ պետական մարմնի որևէ ոլորտից (ցանկը կտրամադրվի) նախապես ընտրում է այդ ոլորտի գործառույթներից մեկը և «բացահայտում» կոռուպցիոն ռիսկերը՝ հաշվի առնելով մեթոդիկայի պահանջները:
- Խմբերը միմյանց են փոխանցում բացահայտված ռիսկերի վերաբերյալ առաջարկությունները՝ համապատասխան ձևաչափով:
- *Երկրորդ փուլ.* ստացված կոռուպցիոն ռիսկերի հիման վրա կատարվում է դրանց գնահատում և դասակարգում, որից հետո խմբերը կրկին փոխանակում են կատարված աշխատանքը:
- *Երրորդ փուլ.* գնահատված կոռուպցիոն ռիսկերի հիման վրա իրականացվում է դրանց չեզոքացման կամ հակակոռուպցիոն (բարեվարքության) միջոցառումների պլանի մշակման աշխատանք:

• Արդյունքում խմբերը կատարած առաջարկությունները ներկայացնում են PPT ձևաչափով և համապատասխան հիմնավորումներով:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Մ.Հ. Մուրադյան, Պետությունը և կոռուպցիան. սոցիալական հիմնախնդրի միջազգային և ներպետական իրավական լուծումները,- ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Եր., հեղ. հրատ., 2012, 130 էջ
- Tilman Hoppe, Anti-Corruption Assessment of Laws ("Corruption Proofing"): Comparative Study and Methodology http://rai-see.org/wp-content/uploads/2015/06/Comparative_Study-Methodology_on_Anti-corruption_Assessment_of_Laws.pdf
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Կոռուպցիոն ռիսկերի գնահատման և հակակոռուպցիոն միջոցառումների (բարեվարքության) պլանների մշակման և իրականացման ուղեցույց», նախագիծ, ԹԻՀԿ, 2020 թ.
- ՀՀ Կառավարության որոշում 2019 թվականի սեպտեմբերի 26-ի «Կարգավորման ազդեցության գնահատման ապակենտրոնացված համակարգի ներդրման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1323-Լ որոշում, www.arlis.am
- ՀՀ Կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի «Կարգավորման ազդեցության գնահատման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 46-Լ որոշում, www.arlis.am

Լրացուցիչ

- Malkhasyan H., Graser A., Burjanadze G., Evoyan, M., Natsvlishvili V., *Proportio nality and Human Rights in German, Armenian and Georgian Constitutional Adjudication*, Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ), Tbilisi, 2017. http://lawlibrary.info/ge/books/CLS_Issue-2_Proportionality-and-HRs-in-const-adjudication_DE_AM_GE.pdf
- «Руководство по оценке коррупционных рисков и разработки планов противодействия коррупции» Светлана Винборн, Валентин Сысоев, Владимир Ткаченко, Программы развития финансового сектора Украины (USAID / FINREP-II), Киев, Украина, июнь 2015
- «Manual for the integrity plan development» Publisher: Anti-corruption Agency.2012 Anti-corruption Agency #1, Carice Milice Street, 11000 Belgrade, Serbia. http://www.acas.rs/wp-content/uploads/2010/07/Manual_for_Integirty_plan_developmnet.pdf
- «Manual on Integrity Planning and Integrity Management 2015». Milena Minkova. UNDP Public Administration Reform (PAR)in Kosovo project.2015. https://www.undp.org/content/dam/kosovo/docs/SAEK/undp-manual-layout-english-version.pdf

Թեմա 4. Հանրային վերահսկողությունը և ազդարարման համակարգը

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

• հանրային վերահսկողության մեխանիզմները և դրանց արդյունավետությունը ժողովրդավարական հասարակությունում,

- տեղեկատվության ազատությունը որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիք,
- լրատվամիջոցների և հետաքննող լրագրողների դերը կոռուպցիայի դեմ պայքարում,
- հանրային քննարկումները՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի միջոց,
- ազդարարումը և դրա նշանակությունը հանրային վերահսկողության մեջ և կոռուպցիայի դեմ պայքարում,
- ազդարարմանն առնչվող միջազգային իրավական ռեժիմը,
- ազդարարմանն առնչվող օրենսդրությունը՝ կարգավորումները, բացերը, առնչվող պետական կառույցները:

Գործնական աշխատանք

Հանձնարարել գրել էսսե հետևյալ թեմաներով.

1. Հանրային քննարկումների անցկացման կարգը և ժամկետները: Առաջադրանք է տրվել կազմել նախագիծ կոռուպցիայի դեմ պայքարում սովորողների դերի բարձրացման մասին: Օրենքի նախագիծն արդեն կազմվել է, իսկ սովորողի խնդիրն է հերթականությամբ ներկայացնել հանրային քննարկումը կազմակերպելու, անցկացնելու և ավարտելու քայլերը: Սովորողը պետք է գրի էսսե:

2. Հրապարակման ենթակա տեղեկությունները: Անձը ՀՀ արտաքին գործերի նախարարության տեղեկատվության ազատության պատասխանատուն է: Նախարարությունում պատրաստվում է առաջարկների փաթեթ՝ ՀՀ դեսպանատների պահպանման ծախսերը կրճատելու վերաբերյալ: Տեղական լրատվամիջոցներից մեկից հարցում է ստացվում ՀՀ դեսպանատներում համակարգչային տեխնիկայի պահպանման տարեկան ծախսերի մասին: Սովորողը պետք է գրի էսսե և ներկայացնի քայլերի հերթականությունը՝ հարցումը ստանալու պահից:

3. Հետաքննող լրագրություն: Անձը հետաքննող լրագրող է և ստանում է անանուն տեղեկություն, որ ՀՀ առողջապահության փոխնախարարներից մեկը Երևան քաղաքի պոլիկլինիկաներից մեկի տնօրենի պաշտոնում աշխատանքի է տեղավորել իր խորթ եղբորը: Սովորողը պետք է նկարագրի ստացված տեղեկության ճշմարտացիությունը պարզելու ուղղությամբ կատարվելիք քայլերի հերթականությունը, ինչպես նաև ներկայացնի հետագա քայլերը:

4. Ազդարարման պատասխանատու: Անձը ՀՀ նախարարություններից մեկում ազդարարման պատասխանատուն է: Ներքին ազդարարման կարգով ստանում է տեղեկություն, որ նախարարը զբաղվում է հովանավորչությամբ: Սովորողը պետք է գրի էսսե և ներկայացնի քայլերի հերթականությունը ազդարարումը ստանալու պահից:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- ՀՀ Սահմանադրություն
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, www.arlis.am
- ՀՀ Կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1146-Ն որոշում, www.arlis.am
- ՀՀ Կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշում, www.arlis.am
- ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, www.arlis.am
- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում, www.arlis.am
- Խաչիկ Հարությունյան, «Ազդարարի ուղեցույց», Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Երևան, 2019, 41 էջ, https://transparency.am/wbl-files/files/azdarar.pdf
- «Ինչպե՞ս պայքարել կոռուպցիայի դեմ», ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակ

Լրացուցիչ

- The role of whistleblowers and whistleblowers protection. OECD, http://www.oecd.org/corruption/anti-bribery/OECD-The-Role-of-Whistleblowers-in-the-Detection-of-Foreign-Bribery.pdf
- Strenghts and weaknesses in G20 whistleblower protection laws. Blueprint for free speech, https://blueprintforfreespeech.net/wp-content/uploads/2015/10/Breaking-the-Silence-Strengths-and-Weaknesses-in-G20-Whistleblower-Protection-Laws1.pdf
- A best practice guide for whistleblowing legislation. Transparency International, https://www.transparency.org/whatwedo/publication/best_practice_guide_for_whistleblowing_legislation
- Exploring the role of digital civil society portals in improving Right to Information regimes, https://www.u4.no/publications/exploring-the-role-of-digital-civil-society-portals-in-improving-right-to-information-regimes
- Media and corruption, https://www.u4.no/publications/exploring-the-role-of-digital-civil-society-portals-in-improving-right-to-information-regimes
- Fake news and corruption, https://knowledgehub.transparency.org/helpdesk/fake-news-and-corruption
- Does more transparency improve accountability? https://knowledgehub.transparency.org/helpdesk/does-more-transparency-improve-accountability
- The role of media and investigative journalism in combatting corruption, https://www.oecd.org/corruption/the-role-of-media-and-investigative-journalism-in-combating-corruption.htm

Դասացուցակ

Մոդուլի ընդհանուր ծանրաբեռնվածությունը հինգ շաբաթ է՝ **100** ժամ *(դասախոսություն՝ 17 ժամ, գործնական աշխատանք՝ 13 ժամ, ինքնուրույն աշխատանք՝ 70 ժամ)*:

TN	Թեմայի անվանումը	Դասաժամի ծավալը	Դասաժամի տեսակը	Եղանակը
1.	**Հակակոռուպցիոն քաղաքականություն: Ռազմավարություններ ու ծրագրեր, դրանց մոնիտորինգի համակարգը**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	իրավիճակային խնդիրների վերլուծություն, քննարկումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում, քննարկումներ, PPT ներկայացումներ
		15	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, ակնարկների, ելույթների պատրաստում, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի առանձին միջոցառման օրինակով մոնիտորինգի զեկույցի կազմում
2.	**Հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն քաղաքականության ինստիտուցիոնալ մարմիններ**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	իրավիճակային խնդիրների վերլուծություն, քննարկումներ, PPT ներկայացումներ, թեստային առաջադրանքի կատարում
		20	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, անհատական շնորհանդեսների, ելույթների պատրաստում, հանձնարարված «Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ կառույցի գործառույթները» թեմայով խմբային աշխատանքի նախապատրաստում

TN	Թեմայի անվանումը	Դասա-ժամի ծավալը	Դասաժամի տեսակը	Եղանակը
3.	**Կոռուպցիոն ռիսկերի բացա-հայտումը և ազդեցության գնահատումը: Կոռուպցիոն ռիսկերի հիման վրա պետական կառավարման և տեղական ինքնակառա-վարման մար-մինների հակակո-ռուպցիոն միջոցառումների ծրագրերի մշակումը**	6	դասախոսություն	Տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	կոռուպցիոն ռիսկերի վերհանման դեպքի կազմում, քննարկումներ, PPT ներկայացումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		20	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, անհատական շնորհանդես-ների, ելույթների պատրաստում, հանձնարարված խմբային աշխատանքների պատրաստում
4.	**Հանրային վերահսկո-ղությունը և ազդարարման համակարգը**	5	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		4	գործնական աշխատանք	իրավիճակային խնդիրների վերլուծություն՝ էսսեների տեսքով
		15	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, էսսեների կազմում

Մոդուլը հաջողությամբ ավարտելը

Գնահատման նյութեր

Քննություն կամ ստուգարք

Թեստային առաջադրանք մոդուլում ներառված որևէ թեմայի տեսական հարցադրումների վերաբերյալ

Գործնական աշխատանքներ

1. «**Հակակոռուպցիոն քաղաքականություն: Ռազմավարություններ ու ծրագրեր, դրանց մոնիտորինգի համակարգը**» թեմայի ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում «ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների ծրագրի» առանձին միջոցառման օրինակով նախապատրաստել այդ միջոցառման մոնիտորինգի զեկույցի (ակնարկի) շարադրանքը:

Այս աշխատանքի ընթացքում լսարանը բաժանվում է խմբերի: Յուրաքանչյուր սովորող հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումներից (ՀՀ Կառավարու-

թյան 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման N 2 հավելված) ընտրում է 2019-2020 թթ. վերաբերելի արդյունքներից մեկը, որը կգրանցի խմբի ավագը: Մյուս սովորողները չեն կարող ընտրել նույն թեման:

Մոնիտորինգի զեկույցում պետք է նշվի՝

- որքանո՞վ է նշված միջոցառման իրականացման ակնկալվող արդյունքը կապակցված միջոցառման վերստուգիչ ցուցանիշի հետ,
- արդյոք այն բխո՞ւմ է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից,
- ի՞նչ ցուցիչներ են նախատեսված միջոցառման գնահատման համար
- որքանո՞վ է ակնկալվող արդյունքը արտացոլվել օրենսդրական ակտերում և իրականացվել գործնականում,
- առկա՞ է արդյոք ակնկալվող արդյունքի իրավական հիմքը, եթե այո, ապա նշել այն և աղբյուրը,
- իրավական հիմքից զատ, նշել՝ գործնականում այն կատարվա՞ծ է, թե՞ ոչ, նշել կատարման փաստը հավաստող տեղեկատվությունը և դրա աղբյուրը:

Նշված հարցերի պատասխանների հիման վրա շարադրել սեփական մեկնաբանությունները և ներկայացնել առաջարկություններ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրային միջոցառումների արդյունքների և վերստուգիչ ցուցիչի փոփոխության անհրաժեշտության կամ նոր միջոցառում նախատեսելու վերաբերյալ և ներկայացնել մասնակիցներին PPT ձևաչափով:

Ակնարկի գնահատումը ուղղակիորեն կախված չէ կատարված աշխատանքի ներկայացված էջերի քանակից: Մեկնաբանությունները պետք է շարադրված լինեն որպես թեզեր: Աշխատանքի ծավալը սովորաբար պետք է լինի առնվազն 2 և ոչ ավելի, քան 4 էջ (տիտղոսաթերթ չի պահանջվում, թղթի ձևաչափը՝ A-4, տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5): Միևնույն ժամանակ, ակնարկի գնահատականը կարող է իջեցվել սովորողի սեփական կարծիքը հակիրճ, սեղմ արտահայտելու անկարողության համար: Տեքստում նկարազարդումներ (դիագրամներ, գծապատկերներ, աղյուսակներ, նկարներ և այլն) կարող են ներառվել խելամտության սահմաններում:

2. Կատարել թեստային առաջադրանք՝ **«Հայաստանի հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն քաղաքականության ինստիտուցիոնալ մարմինները» թեմայով**

- Թեստային առաջադրանքը կազմված է լինելու մի քանի պատասխաններից՝ մեկ ճիշտ պատասխանի ընտրության սկզբունքով: Այն բաղկացած է 20 հարցից՝ 10 հարց պարունակող թեստային 2 առաջադրանքից: Յուրաքանչյուր հարց գնահատվելու է 2 միավոր: Սխալ պատասխանը գնահատվելու է 0 միավոր:
- Թեստային հարցաշարը ներառում է հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված ինստիտուցիոնալ նոր կառույցների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ՀՀ վարչապետին կից հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի, այդ խորհրդում հասարակական կազմակերպությունների ներկայացվածության, ՀՀ արդարադատության նախարարության «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիտորինգի» կառուցվածքային նոր միավորների, հակակոռուպցիոն կոմիտեի և մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանների նպատակների,

խնդիրների, գործառույթների ու լիազորությունների վերաբերյալ թեմաներ:

3. Հանձնարարել լսարանի 3-4 հոգուց կազմված խմբերին կատարել խմբային աշխատանք՝ **«Կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը և ազդեցության գնահատումը: Կոռուպցիոն ռիսկերի հիման վրա պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մշակումը»** թեմայով

- Յուրաքանչյուր խմբի կտրամադրվեն կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և հակակոռուպցիոն (բարեվարքության) միջոցառումների ձևաթղթերը, գնահատման սանդղակները, մեթոդիկան:
- Յուրաքանչյուր խումբ պետք է նախապես ընտրի որևէ պետական մարմնի գործունեության կոնկրետ ոլորտ (օրինակ՝ անձնակազմի կառավարում, գնումներ, իրավական ակտերի նախագծերի մշակում կամ ծառայության մատուցում և այլն), ուսումնասիրի և վեր հանի տվյալ ոլորտի կոռուպցիոն ռիսկերը, իրականացնի իրավական ակտերում կոռուպցիոն ռիսկերի առկայության գնահատում:
- Ռիսկերը վեր հանելուց հետո խումբը մշակում է առաջարկություններ տվյալ ռիսկերի չեզոքացման ուղղությամբ, այդ թվում՝ տվյալ մարմնի գործունեության կարգավորման նորմատիվ իրավական ակտի նախագծում փոփոխություններ կատարելու մասին:
- Ներկայացված առաջարկությունները խմբերը փոխանակում են և իրականացնում փորձագիտական գնահատում՝ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների վերաբերյալ:
- Խմբերը աշխատանքը ներկայացնում են PPT ձևաչափով և համապատասխան հիմնավորումներով:

4. «Հանրային վերահսկողություն, տեղեկատվության ազատություն, ազդարարներ, իրավական պաշտպանություն» թեմայով կտրվի չորս էսսեից բաղկացած առաջադրանք և կանցկացվի դերախաղ:

Գործնական աշխատանքների գնահատականը ձևավորվելու է հետևյալ առաջադրանքների արդյունքներով.

- ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների ծրագրի» առանձին միջոցառման ակնկալվող արդյունքի օրինակով մոնիտորինգի զեկույց» թեմայով ակնարկի (Essay) ներկայացում,
- «Հայաստանի հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն քաղաքականության ինստիտուցիոնալ մարմիններ» թեմայով անցկացված թեստային առաջադրանք,
- «Կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը և ազդեցության գնահատումը: Կոռուպցիոն ռիսկերի հիման վրա պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մշակումը» թեմայով խմբային աշխատանք,
- «Հանրային վերահսկողություն, տեղեկատվության ազատություն, ազդարարներ, իրավական պաշտպանություն» թեմայով դերախաղ:

ՄՈԴՈՒԼ 3.
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մոդուլի համառոտ նկարագրություն

«Հանրային ծառայության բարեվարքության համակարգ» մոդուլը «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի պարտադիր մոդուլներից է: Այն հաջողությամբ ավարտելն ապահովում է **1 կրեդիտ:**

Մոդուլի նպատակն է՝ սովորողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ հանրային կառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգի վերաբերյալ:

Մոդուլի խնդիրն է՝ սովորողների շրջանում ձևավորել պետության և յուրաքանչյուր քաղաքացու համար կոռուպցիայի կանխարգելման կարևորության ընկալում, սովորողներին տրամադրել գիտելիքներ հանրային ծառայությունում բարեվարքության համակարգի առկայության և գործնական կիրառման անհրաժեշտության վերաբերյալ, նրանց մեջ զարգացնել բարեվարքության կառավարման գործիքները կիրառելու ունակություններ:

Արդյունքներ

Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո սովորողը պետք է՝

⇨ **հասկանա** հանրային կառավարման ոլորտում բարեվարքության գաղափարախոսությունը և դրա բաղադրիչները,

⇨ **ճանաչի** բարեվարքության հայաստանյան ինստիտուցիոնալ մոդելը, բարեվարքության համակարգի հիմնական տարրերը՝ տարբերակելով դրանք ըստ կոռուպցիայի կանխարգելման նշանակության,

⇨ **իմանա** հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության օրենսդրական կարգավորումները, սկզբունքները, վարքագծի կանոնագրքերի, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների ու նվերների ընդունման արգելքների բովանդակությունն ու իմաստը, հայտարարագրման համակարգի նշանակությունը կոռուպցիայի կանխարգելման գործում,

⇨ **կարողանա** գործնական օրինակների վրա ընտրել և կիրառել բարեվարքության գործիքների (վարքագծի կանոններ, շահերի բախում, անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, հայտարարագրեր) օրենսդրական համապատասխան կարգավորումները կամ նորմերը, մեկնաբանել բարեվարքության հիմնական բաղադրիչների օրենսդրական կարգավորումները ըստ բովանդակության, տարբերակել և վերլուծել շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքին վերաբերելի ռիսկերը, գնահատել դրանք օրենսդրական կարգավորումների շրջանակում և իրավիճակի լուծման ինքնուրույն դիրքորոշում ներկայացնել, համեմատել բարեվարքության օրենսդրորեն գործող կարգավորումները միջազգային փորձի հիմնական դրույթների հետ և ներկայացնել առաջարկություններ դրանց փոփոխության կամ կատարելագործման ուղղությամբ, քննադատորեն վերլուծել և ձևակերպել օրենսդրական նոր կարգավորումներով կամ փոփոխություններով այլընտրանքային լուծումները:

Կապը ՀՀ պետական կառավարման ակադեմիայում դասավանդվող այլ մոդուլների կամ թեմաների հետ

Կարևոր է, որ այս մոդուլից առաջ սովորողներն անցած լինեն «Կոռուպցիայի ներածություն», «Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ» մոդուլները: Այն կարող է անցկացվել «Հանրային կառավարում», «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում», «Հանրային ֆինանսների կառավարում», «Իրավագիտություն», «Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն», «Գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն» կրթական ծրագրերով սովորողների համար:

Հիմնական հասկացություններ և հապավումներ

ՀՀ ՊԿԱ - Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա
ԿԿՀ - Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ԵԱՀԿ - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՏՀԶԿ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ/OECD)
ԵԽ - Եվրոպայի խորհուրդ
ԵՄ - Եվրոպական միություն
ԿԲ - Կենտրոնական բանկ
ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին
ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն
ԳԼԿ - Գործընկերություն հանուն լավ կառավարման

Հիմնական թեմաներ

Թեմա 1. Բարեվարքության հայեցակարգը, տեսական մոտեցումները և հիմնական տարրերը

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

• «բարեվարքություն» և «էթիկա» հասկացությունները, դրանց սահմանումները, ցույց կտրվի դրանց տարբերությունը, կխոսվի բարեվարքության և էթիկայի սերտ կապի մասին,

• բարեվարքության շրջանակը հանրային ծառայությունում, Բաց կառավարման սկզբունքները քաղաքացիների և կառավարության տեսանկյունից, Էթիկայի էությունը և ծագման հիմքերը,

• ընդհանուր էթիկական արժեքները և սկզբունքները, բարեվարքությանը վերաբերող պահանջները (ազնվություն և արդարամտություն, ճշտապահություն, բարյացակամություն և պատասխանատվություն, համեստություն և անկեղծություն, շփման ժամանակ հարգալից վերաբերմունք և կոռեկտություն, կատարողական կարգապահություն, որակներ, որոնք բացատրվում են, այսպես կոչված, «ակվարիումի Էֆեկտով» և այլն),

• բարեվարքությունը՝ որպես մասնագիտական պատասխանատվություն («մասնագիտական պատիվ» և «մասնագիտական արժանապատվություն», «պատիվ» և «ծառայություն» հասկացությունները),

• Միացյալ Թագավորությունում 1994 թ. Լորդ Նոլանի գլխավորությամբ մշակված «Հասարակական կյանքի յոթ սկզբունքները»,

• էթիկան՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիք. ինչպե՞ս փոխել էթիկական մշակույթը, էթիկական երկընտրանք,

• բարեվարքության կառավարում, Էթիկական մշակույթի ձևավորումն ու պահպանումը «լավ կառավարման» համատեքստում, Էթիկայի կառավարման ՏՀԶԿ սկզբունքները,

• ԵՄ հանրային ծառայության համակարգերում էթիկական քաղաքականությունների իրականացումը և դրանց արդյունավետության չափումը: ԵՄ անդամ պետությունների կողմից կիրառվող էթիկական գործիքները.

1. կանոններ, չափանիշներ, կարգավորումներ

2. ամբողջականության պատասխանատու պաշտոնյաներ

3. էթիկական արժեքների կառավարում

4. էթիկական աուդիտ

5. համացանցի միջոցով հանրային ծառայողների ինքնագնահատում

6. էթիկական մթնոլորտի հետազոտություն

7. շահերի հայտարարագրում

8. էթիկական խախտումների մասին ազդարարների պաշտպանություն (protection of whistle blowers).

9. պաշտոնների ռոտացիա

10. էթիկական վերապատրաստումներ՝ էթիկական երկընտրանքների ներառմամբ

11. խոցելի պաշտոնների վերլուծություն

12. գիտակցության բարձրացման այլ մեխանիզմներ

13. էթիկական առաջնորդություն

Գործնական աշխատանք

Սովորողներին կտրվի երկու գործնական առաջադրանք.

1. Հարց ու պատասխանի մեթոդի կիրառում. ինչ ենք հասկանում էթիկա ասելով, ինչ ենք հասկանում բարեվարքություն ասելով: (*Օրինակ՝ մշակույթի մաս կազմող չափանիշներ, իրավական կարգավորումներ: Էթիկան ավելին է, քան օրենքին ենթարկվելը):*

Ներկայացրե՛ք էթիկայի կանոններին հակասող վարքագծի օրինակներ: Ողջունելի են սեփական փորձից բերված դրական ու բացասական օրինակները:

2. 2-րդ առաջադրանքը կատարելիս մասնակիցները կկազմեն բարեվարքության և էթիկայի համեմատական սխեմա: Հիմնախնդիրը քննարկելու համար կձևավորվեն ժամանակավոր փոքր խմբեր, որոնք սահմանափակ ժամանակում պետք է կազմեն բարեվարքության և էթիկայի համեմատական սխեմա:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- «Թափանցիկ և բաց կառավարում», Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, Եվրոպայի խորհուրդ, մարտ 2019, https://rm.coe.int/booklet-a6-transparency-coll-public-ethic-arm/168094ee2f
- «Հանրային կառավարման սկզբունքները. շրջանակ ԵՀՔ երկրների համար», http://www.sigmaweb.org/publications/EnP-Principles-of-Public-Administration-Overview-ARM.pdf
- Բարեվարքություն, https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf
- Cooper L. T. and Menzel C. D., Achieving Ethical Competence for Public Service Leadership, M. E. Sharpe, New York, 2013, p. 6.
- Байтов Г. Н., Этика и нормы госслужбы, С - ПБ/Питер, 2003, - 288 с. 15. Балашов Л. Этика, Учебное пособие, Москва, ИТК «Дашков и К», 2003, -137 с.
- ՄԱԿ-ի կանոնադրություն, http://www.un.am/up/file/1.%20Un%20Charter_arm.pdf:
- ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, www.arlis.am
- OECD Principles for Integrity in Public Procurement, 2009, pp. 21-51, https://www.oecd.org/gov/ethics/48994520.pdf.
- Основные понятия и концепции антикоррупционной деятельности. Учебное пособие. Council of Europe, 2015, 75-95 с., https://rm.coe.int/-/16806eed0c.
- Սարգսյան Տաթևիկ Կոմիտասի, ԻԳ. 00. 02. «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, *«Էթիկական նորմերը պետական կառավարման համակարգում. առաջատար եվրոպական երկրների փորձի կիրառման հեռանկարները ՀՀ-ում»*, Երևանի պետական համալսարան. 2016, http://etd.nla.am/38/1/atenaxosutyun.pdf
- DAVID LYOnS, Ethics and the rule of law, Cambridge University Press 1984, 239 p., https://www.amazon.ca/Ethics-Rule-Law-David-Lyons/dp/0521277124

Լրացուցիչ

- Տեղական և տարածքային ընտրված ներկայացուցիչների քաղաքական բարեվարքության վերաբերյալ վարքագծի եվրոպական կանոնագիրք, https://rm.coe.int/1680718a7a
- Հարություն Ալեքսանյան, Ելեն Գոլդբերգ, Բարեվարքության եզրույթների բառարան, Եր., «Էդիթ Պրինտ», 2016, 128 էջ, https://hy.wiktionary.org/բարեվարքություն
- Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կոմպետենցիաներ, https://www.gov.am/am/announcements/item/346/
- Шеламова Г. М., Психология и этика профессиальной деятельности, учеб. пос., М., 2008

Թեմա 2. Վարքագծի հիմնական սկզբունքները, վարքագծի կանոնները և կանոնագրքերը, դրանց մեկնաբանությունները և կառավարման գործիքակազմերը

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

• բարեվարքության վարքագծի կանոնները՝ արգելքներ և սահմանափակումներ, բարեխղճության կարգավորում, թափանցիկություն և տեղեկատվության հասանելիություն,

• վարքագծի կանոնները և դրանց կիրարկումը կոռուպցիայի կանխարգելման գործընթացներում,

• վարքագծի կանոնագիրքը՝ որպես կառավարման կարևոր գործիք, վարքագծի կանոնները տարբեր ոլորտներում (առողջապահություն, կրթություն, գործարար միջավայր և այլն), Էթիկայի կանոնակարգման արդյունավետության նախապայմանները,

• հանրային ծառայողի վարքագծի ընդհանուր սկզբունքները և էթիկական պահանջները, հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ,

• վարքագծի կանոնների իրավաբանական բովանդակությունը հանրային ծառայությունում, բարեվարքության համակարգի տարրերը,

• հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները, վարքագծի սկզբունքները (հանրությանը ծառայելու գիտակցումը, հավատարմությունը հանրային շահին, բարեկրթությունը, հարգալիրությունը, բարեխղճությունը, օբյեկտիվությունը),

• հանրային ծառայողների վարքագծին վերաբերող միջազգային հիմնական կանոնների ներկայացում՝ զուգահեռներ անցկացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում ամրագրված հանրային ծառայողների վարքագծին կամ էթիկային վերաբերող կանոնների հետ և կատարելով վերլուծություն,

• Եվրոպական միության անդամ պետությունների էթիկայի կանոնակարգերում դիտարկվող էթիկային առնչվող հարցեր,

• հանրային ծառայության վարքագծի կանոնները, դրանց վերահիմաստավորման արդի նախադրյալները,

• հանրային ծառայողների՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները (սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը),

• քաղաքացիական ծառայողների՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները (սահմանում է քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետը),

• դատավորի վարքագծի ընդհանուր կանոնները,

• դատախազի վարքագծի կանոնները:

Գործնական աշխատանք

Գործնական առաջադրանքները վերաբերում են հանրային ծառայողների վարքագծի կանոններին և սկզբունքներին, ինչպես նաև վարքագծի կանոնագրքերին՝ որպես կառավարման կարևոր գործիք (օրինակ՝ «Վարքագծի կանոնագրքի հավելյալ արժեքը», «Համոզել ղեկավարին, որ կազմակերպությունում էթիկայի հետ կապված

փոփոխությունների անհրաժեշտություն կա» և այլ վարժություններ):

Գործնական առաջադրանքների ժամանակ կանցկացվեն խմբային քննարկման համար նախատեսված՝ էթիկայի խնդիրներին առնչվող դեպքերի վերաբերյալ վարժություններ (հանրային միջոցների անբարեխիղճ օգտագործում կամ չարաշահում, պետական գնումների անցկացման կանոններ և այլն):

1. Վարժություն՝ էթիկայի հետ կապված փոփոխությունների անհրաժեշտությունը

Պետք է համոզել ղեկավարին, որ Ձեր կազմակերպությունում էթիկայի հետ կապված փոփոխությունների անհրաժեշտություն կա: Օրինակ՝ խումբը որոշում է ստեղծել վարքագծի կանոնագիրք/ուղեցույց, ընտրում է անհրաժեշտ գործիքները և որոշում, թե ինչպես է կազմվելու ուղեցույցը:

Ձևավորվում է 4-5 մասնակցից բաղկացած չորս խումբ, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է մեկ դերախաղ: Մասնակիցներին պետք է բացատրել, որ էթիկայի մշակույթը բարձրացնելու համար անհրաժեշտ է, որ վերադասը/ղեկավարը այսպիսի վարքագծի ջատագով լինի:

Մասնակիցներից մեկը ստանձնում է վերադասի/ղեկավարի դերը: Խմբերից յուրաքանչյուրն ընտրում է մեկ անձի, որը, օգտագործելով վերապատրաստման ընթացքում սովորած գիտելիքները, 5 րոպեանոց ելույթ է ներկայացնում վերադասին/ղեկավարին՝ վերջինիս համոզելու համար, որ անհրաժեշտ է ավելի մեծ ակտիվություն ցուցաբերել էթիկայի կանոններին հակասող վարքագծի դեմ պայքարի հարցում թե՛ իր աշխատանքում, թե՛ կազմակերպության մասշտաբով: Սա ներկայացման փուլն է և տևում է 20 րոպե:

2. Թեստային առաջադրանք հիշյալ մոդուլի 1-ին և 2-րդ թեմաների տեսական հարցադրումների վերաբերյալ (բարեվարքության հայեցակարգ, ընդհանուր էթիկական արժեքներ և սկզբունքներ, վարքագծի կանոններ, սկզբունքներ, վարքագծի կանոնագրքեր)

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, www.arlis.am
- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, www.arlis.am
- «Դատախազության մասին», www.arlis.am
- ՀՀ գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 10-ի N 27 հրամանը՝ դատախազի վարքագծի կանոններից բխող պահանջների վերաբերյալ, http://www.prosecutor.am/myfiles/files/decrees/Varqagci-kanonnery.pdf
- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի

կողմից 2003 թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում, www.arlis.am
- Բարեվարքություն, https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf
- «Թափանցիկ և բաց կառավարում», Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, Եվրոպայի խորհուրդ, 2019թ. մարտ, https://rm.coe.int/booklet-a6-transparency-coll-public-ethic-arm/168094ee2f
- Международный кодекс поведения государственных должностных лиц, Принят резолюцией 51/59 Генеральной Ассамблеи от 12 декабря 1996 года, https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/int_code_of_conduct.shtml
- Recommendation no. R (2000) 10 of the Committee of Ministers to Member states on codes of conduct for public officials (Adopted by the Committee of Ministers at its 106th Session on 11 May 2000), http://siteresources.worldbank.org/InTLAWJUSTInST/Resources/CouncilEuropeCodeConductEng.pdf
- Типовой кодекс этики и служебного поведения государственных служащих Российской Федерации и муниципальных служащих, одобрен решением президиума Совета при Президенте Российской Федерации по противодействию коррупции от 23 декабря 2010 года (протокол N 21), http://docs.cntd.ru/document/420254359
- ԵԽ-ի «Հանրային պաշտոնյաների էթիկայի տիպային կանոնագրքի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթուղթ, CoE «Recommendation no. R (2000) 10 of the Committee of Ministers to Member states on codes of conduct for public officials». Appendix to Recommendation no. R (2000) 10. Model code of conduct for public officials. Interpretation and application. https://rm.coe.int/16805e2e52
- Վաչե Քալաշյան, «ՀՀ պետական պաշտոնյաների էթիկայի կանոնները և դրանց կիրարկումը կոռուպցիայի կանխարգելման գործընթացներում», https://cyberleninka.ru/article/n/ehticheskie-kanony-gossluzhashchih-ra-i-ih-primenenie-v-processe-predotvrashcheniya-korrupcii/viewer
- Основные понятия и концепции антикоррупционной деятельности. Учебное пособие. Council of Europe, 2015, 75-95 c., https://rm.coe.int/-/16806eed0c.

Լրացուցիչ

- Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշում
- Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 11-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնի գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման, պաշտոնների ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների և պարտականությունների, անվանացանկի վարման, ինչպես նաև տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանությունը հաստատելու մասին» N 3-Ն որոշում

- «Հանրային կառավարման սկզբունքները. շրջանակ ԵՀՔ երկրների համար», http://www.sigmaweb.org/publications/EnP-Principles-of-Public-Administration-Overview-ARM.pdf
- Սարգսյան Տաթևիկ Կոմիտասի, ԻԳ.00.02. «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, *«Էթիկական նորմերը պետական կառավարման համակարգում. առաջատար եվրոպական երկրների փորձի կիրառման հեռանկարները ՀՀ-ում», 2016 թ.*, Երևանի պետական համալսարան, http://etd.asj-oa.am/38/1/atenaxosutyun.pdf
- Տեղական և տարածքային ընտրված ներկայացուցիչների քաղաքական բարեվարքության վերաբերյալ վարքագծի եվրոպական կանոնագիրք, https://rm.coe.int/1680718a7a
- Бочарников И. В., Зарубежный опыт противодействия коррупции, Аналитический вестник Аналитического управления Аппарата Совета Федерации Федерального Собрания Российской Федерации. 2007. n 6(351). С. 39 - 62.
- ՀՀ Կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշում, www.arlis.am
- ՀՀ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» N 439-Ն որոշում, www.arlis.am
- Cisco Systems, Inc. Գործարար վարքագծի կանոններ 2019, https://www.cisco.com/c/dam/en_us/about/cobc/2019/armenian-2019.pdf

Թեմա 3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախում: Անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, նվերների ընդունման արգելք

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

• շահերի բախման սահմանումը միջազգային կազմակերպությունների փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությունը, շահերի բախման տեսակները, դրանց դրսևորման եղանակները, շահերի բախման իրավիճակների կառավարման մեթոդները, եղանակներն ու գործիքները, մեթոդական մոտեցումները (ցույց կտրվեն շահերի բախման և կոռուպցիայի տարբերություններն ու նմանությունները, կնշվեն շահերի բախման այն իրավիճակները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կոռուպցիոն ռիսկերի),

• անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների արգելքների ստեղծման անհրաժեշտությունը, դրանց նպատակայնությունը, օրենսդրական կարգավորումները և կիրառման գործիքակազմերը, դրանց խախտումների համար պատասխանատվության միջոցները, հանրային պաշտոնյաների ու ծառայողների կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում այլ պաշտոն զբաղեցնելու, առևտրային կազմակերպություններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից, վճարովի այլ աշխատանք կատարելու, անհամատեղելիության պահանջների պահպանման օրենսդրական կարգավորումները, դրանց պահպանման առկա գործիքակազմերը, կիրարկման հնարավորությունները,

• բիզնեսը հանրային ծառայությունից և քաղաքական իշխանությունը մասնագիտական պրոֆեսիոնալ գործունեությունից տարանջատման խնդիրները, յուրաքանչյուր անհամատեղելիության պահանջի տեսակի համար մշակված օրինակներ, դրանց գործողության ընթացակարգերը, հանրային պաշտոնյաների առանձին խմբերի ու հատկապես հանրային ծառայության առանձին տեսակները կանոնակարգող օրենսդրության մեջ անհամատեղելիության պահանջների կարգավորումների առանձնահատկությունները,

• հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների այլ սահմանափակումները, որոնք կդիտարկվեն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ներքոշարադրյալ սահմանափակումների էության ներկայացմամբ.

«1) լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը ծառայության մեջ է կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկվում է իր կողմից.

2) որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

3) իր պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար.

4) հոնորար ստանալ պաշտոնեական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.

5) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.

6) համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ.

7) պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում:»,

• նվերներ ընդունելու արգելքը. դասախոսության ժամանակ կդիտարկվի «նվեր» հասկացությունը, տարբերությունը պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված և դրանով չպայմանավորված նվերների միջև: Սովորողներին կտրամադրվի նվերների ընդունման արգելքի և վարքագծի կանոնների պահպանման միջև փոխադարձ կապը, որով նրանք հնարավորություն կունենան տարանջատելու պաշտոնեական պարտականություններով պայմանավորված նվերների առկայությունը: Կներկայացվի նվերների ստացման կամ տրամադրման արգելքի պահպանման կառավարման կամ կարգավորման գործիքները, ինչպիսիք են հայտարարագրումը, ռեեստրների վարումը, դրանց հրապարակումը, պաշտոնեական պարտականություններով պայմանավորված ստացված նվերների հանձնման գործընթացները:

Շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների արգելքի յուրաքանչյուր տեսակի համար կներկայացվի դրա նպա-

տակայնությունը, կապը վարքագծի հիմնական սկզբունքների ու կազմակերպության վարքագծի կանոնների հետ, դրանց կիրարկման գործիքակազմերը, կմեկնաբանվի վերոնշյալ սահմանափակումների խախտումների հետևանքները՝ պատասխանատվության միջոցների կիրառման տեսանկյունից:

Գործնական աշխատանք

1. Սովորողներին կհանձնարարվի ՀՀ մամուլի հրապարակումներից կամ սոցիալական ցանցերից դուրս գրել շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների արգելքի յուրաքանչյուր տեսակին համապատասխան գործնական օրինակներ (դեպքեր):

2. Լսարանում ձևավորված խմբերը կքննարկեն այդ օրինակների համապատասխանությունը շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների արգելքի օրենսդրորեն սահմանված դրույթներին: Այնուհետև յուրաքանչյուր խումբ կներկայացնի քննարկման արդյունքները և մշակած առաջարկությունները՝ բացահայտված շահերի բախման կամ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների արգելքի իրավիճակների կառավարման կամ լուծման գործիքակազմերի կիրառման տեսանկյունից:

Այս առաջադրանքը կարելի է ձևակերպել նաև որպես խմբային «դեպքերի ուսումնասիրություն» տնային աշխատանք կամ թեստ:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Ինչպես պայքարել կոռուպցիայի դեմ», ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակ
- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում (գլուխ 2, կանխարգելման միջոցներ), www.arlis.am
- «Հանրային հատվածում շահերի բախման կառավարման» ուղեցույց, Հավելված, Հանրային ծառայությունում շահերի բախման կառավարման ՏՀՃԿ ուղեցույցի մասին Խորհրդի հանձնարարական, 28-ը մայիսի 2003թ. - C(2003)107
- Руководство ОЭСР по разрешению конфликтов интересов на государственной службе, OECD, June 2003
- Политика и практика конфликтов интересов в девяти странах-членах ЕС: сравнительный обзор, SIGMA Содействие улучшению в управлении и менеджменте Совместная инициатива ОЭСР и Европейского Союза, в основном финансируемая ЕС, Проф. Мануэль Виллориа-Мендиета Университет Рей Хуан Карлос, Мадрид, Испания, декабрь 2005 г.
- Антикоррупционные реформы в Армении. Третий раунд мониторинга Стамбульского плана действий по борьбе с коррупцией https://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-RUS.pdf
- «Շահերի բախման համակարգը և դրա կառավարումը ՀՀ հանրային ծառայության ոլորտում», ԹԻՀԿ հետազոտական զեկույց, https://transparency.am/hy/publication/256

- Շահերի բախումը տեղական և տարածքային մակարդակներում, Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, ԵԽ, մարտ 2019
- Նեպոտիզմի դեմ պայքարը տեղական և տարածքային մարմիններում, Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, ԵԽ, մարտ 2019

Լրացուցիչ

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, «Շահերի բախման կարգավորումը հանրային ծառայությունում» ուղեցույց, http://www.oecd.org/gov/ethics/48994419.pdf
- Հանրային ծառայությունում շահերի բախումը կարգավորող օրենսդրության վերլուծության և առաջարկությունների զեկույց (2015), https://transparency.am/files/publications/1435321403-0-425779.pdf
- Պետական մարմիններում շահերի բախման մոնիտորինգ (2014), https://transparency.am/files/publications/1415891883-0-674564.pdf
- Շահերի բախման կարգավորումը, որպես կոռուպցիոն ռիսկերը կանխարգելող գործիք (2016) (համառոտագիր), https://transparency.am/files/publications/1481981448-0-846412.pdf
- Գույքի և եկամուտների հայտարարագրումը, որպես շահերի բախման կանխարգելման և հանրային հաշվետվողականության ապահովման գործիք (2016), https://transparency.am/hy/publications/view/148 (համառոտագիր)

Թեմա 4. Գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

• գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման նպատակները, մոդելները (մոնիստական և դուալիստական)՝ որպես «ապօրինի հարստացման» և անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և այլ սահմանափակումների խախտումների բացահայտման գործիք,

• հայտարարատուների շրջանակը, ընտանիքի կազմը, գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրումը, ներկայացման պարտականությունը, ժամկետները, հայտարարագրերի հրապարակումը, հրապարակման ենթակա տվյալների շրջանակը, իրական սեփականատերերի ինստիտուտը, քաղաքական ազդեցություն ունեցող անձինք,

• հայտարարագրի բովանդակությունը և հայտարարագրում ներառվող կամ պահանջվող տվյալները, հայտարարագրերի վերլուծությունը, վերլուծության մեթոդները, հայտարարագրում արձանագրված անհամապատասխանությունները, ընտրանքի մեթոդները, արժանահավատության ստուգման եղանակները,

• «ապօրինի հարստացում» երևույթի բնորոշումն ու սահմանումը, անհամապատասխանության ռիսկերի դուրսբերման մեթոդները, «Կարմիր դրոշ» ռիսկերի արձանագրումը,

• հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով սահմանված ժամկետներում չներկայացնելը կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը, կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայաց-

նելու դեպքում վարչական պատասխանատվության միջոցները և դրանց կիրառման պայմանները,

• հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը և հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու դեպքերում քրեական պատասխանատվության միջոցները և դրանց կիրառման պայմանները:

Գործնական աշխատանք

1. Ծանոթացում գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի ռեեստրին, ռեեստրի հետ աշխատանք, հայտարարատուների ընտրանք, ռիսկային հայտարարագրերի դուրսբերում, ծանոթացում էլեկտրոնային հայտարարագրման սկզբունքներին:

2. Կհանձնարարվի ԿԿՀ-ի հրապարակած հայտարարագրերի ռեեստրում գտնել հրապարակման ենթակա տվյալների հիման վրա հնարավոր անհամապատասխանությունները:

3. Հրապարակված ընտրանքային հայտարարագրերի օրինակով հայտարարագրերի վերլուծության մեթոդների կիրառում, նախօրոք ընտրված, պրոբլեմային հայտարարագրերից հնարավոր անհամապատասխանությունների բացահայտում, օրինակներ: Չհրապարակվող տվյալների որոնում Հայաստանի պետական մարմինների այլ բաց ռեգիստրներից: Ընտրողների ռեգիստր, սոցիալական ցանցեր, արտերկրի բաց ռեգիստրներ:

Այս վարժությունները կարելի է ձևակերպել նաև որպես խմբային «դեպքերի ուսումնասիրություն» և յուրաքանչյուր խմբի կողմից անհամապատասխանության բացահայտման վերաբերյալ զեկույցի ներկայացում (PPT):

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Ինչպես պայքարել կոռուպցիայի դեմ», ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակ
- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում (գլուխ 2, կանխարգելման միջոցներ), www.arlis.am
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդ. 169.28, www.arlis.am
- ՀՀ քրեական օրենսգիրք, www.arlis.am
- Борьба против коррупции в Восточной Европе и Центральной Азии «Декларации активов для государственных служащих» Инструмент для предотвращения коррупции https://www.oecd.org/daf/anti-bribery/48973261.pdf
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի «Հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, ինչպես նաև հայտարարագրի լրացմանը ներկայացվող

պահանջները սահմանելու մասին» N 04-Ն որոշում, http://cpcarmenia.am/files/legislation/351.pdf

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 18-ի «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի լրացման ուղեցույցը հաստատելու մասին» N 04-Լ որոշում, http://cpcarmenia.am/files/legislation/352.pdf
- ՀՀ Կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի, հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների, հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրի օրինակելի ձևերը սահմանելու մասին» N 102-Ն որոշում, www.arlis.am
- Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայտարարատու պաշտոնատար անձի հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերում, հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում, ինչպես նաև հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող անձին սեփականության իրավունքով պատկանող՝ հարկային տարվա գույքի, եկամուտների մասին հայտարարագրերում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը, բովանդակությունը և ձևը սահմանելու մասին» N 1835-Ն որոշում, www.arlis.am
- Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի մարտի 12-ի «Հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 306-Ն որոշում, www.arlis.am
- ՀՀ Կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին պետական կառավարման առանձին մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված անհատական տվյալների տեղեկատվական բազաներից տվյալների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշում, https://www.arlis.am/

Լրացուցիչ

- Գույքի և եկամուտների հայտարարագրումը, որպես շահերի բախման կանխարգելման և հանրային հաշվետվողականության ապահովման գործիք (2016) https://transparency.am/hy/publications/view/148 (համառոտագիր)
- «Практическое пособие по обработке и анализу деклараций об имуществе и доходах публичных должностных лиц» Восточное партнерство - Проект механизма Совета Европы «Надлежащее государственное управление и противодействие коррупции», Подготовлено постоянным советником проекта Тильманом Хоппе при участии эксперта Совета Европы Валтса Калниньша, январь 2014 г. www.coe.int/eap-corruption

• Сьюзан Роуз Аккерман, «Коррупция и государство: Причины, следствия, реформы» Перевод с английского О.А. Алякринского, «Логос», М., 2003, 356 с.

Թեմա 5. Բարեվարքության համակարգի կառավարումը: Հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովները: Բարեվարքության հարցերով կազմակերպիչը

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

• բարեվարքության համակարգի ենթակառուցվածքը կազմող տարրերի պահանջներն ապահովող կառույցների մոդելը, այդ պահանջների իրականացման նկատմամբ վերահսկողության, այդ թվում հանրային վերահսկողության կարևորությունը, իրավական դաշտը, կառույցների հաշվետվողականության կառուցակարգերը,

• Հայաստանում հանրային հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության հարցերը համակարգող մարմնի կամ մարմինների անհրաժեշտությունը,

• հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների ձևավորման առանձնահատկությունները հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակի համար,

• պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության համար էթիկայի առանձին հանձնաժողովների ձևավորման մոտեցումները, դրանց տարբերությունները, գործառույթներն ու լիազորությունների շրջանակը, գործունեության ապահովման պայմանները, ձևավորման տարբերությունները հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովների համեմատ,

• կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ որպես հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող որոշ խմբի պաշտոնյաների համար էթիկայի հանձնաժողովի գործառույթներ իրականացնողի, ինչպես նաև դատավորների, դատախազների, քննիչների ու պատգամավորների (Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողով, Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով, Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով) էթիկայի հանձնաժողովների ձևավորման առանձնահատկությունները, օրենսդրական կարգավորումները, առկա բացերն ու դրանց լրացմանը միտված առաջարկությունները (այս տեսանկյունից քննության կառնվի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքների մեկնաբանման, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների պահպանման միասնականությունն ապահովման գործում համակարգման գործառույթը),

• կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթները և լիազորությունները բարեվարքության առանձին տարրերի՝ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի և շահերի բախման կառավարման գործում, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց առանձին խմբերի համար բարեվարքության ստուգման գործառույթների էությունն ու գործիքակազմերը,

• հայտարարագրման համակարգում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթները և լիազորությունները՝ հայտարարագրման գործընթացի կանոնակարգման, հայտարարագրերի ստուգման, վերլուծության, դրանց հրապարակայնության ապահովման, հայտարարագրման գործընթացում խախտումների արձանագրման,

վարչական պատասխանատվության միջոցների կիրառման նպատակով վարույթների իրականացման և իրավապահ մարմիններին «ապօրինի հարստացման» ռիսկերի հայտնաբերման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման գործում,

• բարեվարքության հարցերով կազմակերպչի նոր ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը, կառույցի կազմավորման մոտեցումները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում այդ հաստիքների ստեղծման պայմանները, թիվը, բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթները, խնդիրները, նրա կապը էթիկայի հանձնաժողովների, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և տվյալ մարմնի ղեկավարի հետ, դերակատարումը հանրային պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների պահպանման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման և նվերների ստացման արգելքի, հայտարարագրման գործընթացների ապահովման գործում:

Գործնական աշխատանք

Հանձնարարվում է թեստային առաջադրանք՝ բարեվարքության համակարգի կառավարման գործիքակազմերի, էթիկայի հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների նպատակների, խնդիրների, գործառույթների ու լիազորությունների վերաբերյալ:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, www.arlis.am
- «Ինչպես պայքարել կոռուպցիայի դեմ», ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակ
- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում, (գլուխ 2, կանխարգելման միջոցներ), www.arlis.am
- ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, www.arlis.am
- Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը Հայաստանի հանրային կառավարման ոլորտում, զեկույց, ԹԻՀԿ 2021թ. https://transparency.am/hy/publication/244

Լրացուցիչ

- Специализированные институты по борьбе с коррупцией: Обзор моделей. Организация экономического сотрудничества и развития Сеть по борьбе с коррупцией для стран Восточной Европы и Центральной Азии https://www.oecd.org/corruption/acn/39972100.pdf
- «Հակակոռուպցիոն վերապատրաստման ձեռնարկ» ԵՄ/ԵԽ Գործընկերություն հանուն

լավ կառավարման (ԳԼԿ) «Պայքար կոռուպցիայի դեմ և Լավ կառավարման խթանում/Պայքար փողերի լվացման դեմ» (EaP-2): Ալբենա Կույումջիևա, Պեդրո Գոմես Պերեյրա, Վալց Կալնինիս և Արամ Խաղաղորդյան Եվրոպական խորհրդի փորձագետներ
- Основные понятия и концепции антикоррупционной деятельности. Учебное пособие. Council of Europe, 2015, https://rm.coe.int/-/16806eed0c.
- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի 2011 թ. արդյունքների մոնիտորինգի հաշվետվություն (2011 թ. առաջին կիսամյակ) https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/915.pdf

Դասացուցակ

Մոդուլի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմում է հինգ շաբաթ՝ **100** ժամ *(դասախոսություն՝ 17 ժամ, գործնական աշխատանք՝ 14 ժամ, ինքնուրույն աշխատանք՝ 69 ժամ)*:

TN	Թեմայի անվանումը	Դասաժամի ծավալը	Դասաժամի տեսակը	Եղանակը
1.	**Բարեվարքության հայեցակարգը, տեսական մոտեցումները և հիմնական տարրերը**	2	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		1	գործնական աշխատանք	իրավիճակային խնդիրների վերլուծություն, քննարկումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		9	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության խախտումների վերաբերյալ մամուլի հրապարակումներին հետևում, ակնարկների, ելույթների պատրաստում
2.	**Վարքագծի հիմնական սկզբունքները, վարքագծի կանոնները և կանոնագրքերը, դրանց մեկնաբանությունները և կառավարման գործիքակազմերը**	4	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		2	գործնական աշխատանք	իրավիճակային խնդիրների վերլուծություն, քննարկումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		12	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության խախտումների վերաբերյալ մամուլի հրապարակումներին հետևում, ակնարկների, ելույթների պատրաստում

Թ N	Թեմայի անվանումը	Դասա-ժամի ծավալը	Դասաժամի տեսակը	Եղանակը
3.	**Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախում, անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, նվերների ընդունման արգելք**	4	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		5	գործնական աշխատանք	իրավիճակային խնդիրների վերլուծություն, քննարկումներ, ակնարկի ներկայացում
		18	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության խախտումների վերաբերյալ մամուլի հրապարակումներին հետևում, ակնարկների, ելույթների պատրաստում
4.	**Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրում**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	իրավիճակային խնդիրների վերլուծություն, քննարկումներ, PPT ներկայացումներ, ռիսկային հայտարարագրերի դուրսբերում, վարժության կատարում, թեստային առաջադրանք
		15	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, անհատական շնորհանդեսների, ելույթների պատրաստում, հանձնարարված խմբային աշխատանքներին մասնակցություն
5.	**Բարեվարքության համակարգի կառավարումը: Հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովները: Բարեվարքության հարցերով կազմակերպիչը**	4	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	իրավիճակային խնդիրների վերլուծություն, քննարկումներ, PPT ներկայացումներ, թեստային առաջադրանք
		15	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, անհատական շնորհանդեսների, ակնարկների, ելույթների պատրաստում, մասնակցություն հանձնարարված խմբային աշխատանքներին

Գնահատման նյութեր

Քննություն կամ ստուգարք

Թեստային առաջադրանք մոդուլում ներառված բոլոր թեմաների տեսական հարցադրումների վերաբերյալ

Գործնական աշխատանքներ

1. Բարեվարքության հայեցակարգի, վարքագծի կանոնների, դրանց մեկնաբանությունների, կառավարման գործիքակազմերի, էթիկայի հանձնաժողովների, բարեվարքության հարցերով պատասխանատուների նպատակների, խնդիրների, գործառույթների ու լիազորությունների վերաբերյալ թեստային առաջադրանք:

2. «Շահերի բախում, անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, նվերների արգելք» թեմայի ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում շահերի բախմանը կամ անհամատեղելիության պահանջներին, կամ այլ սահմանափակումներին, կամ ստացված նվերների արգելքին վերաբերող՝ ՀՀ մամուլի հրապարակումներից կամ սոցիալական ցանցերից բերված օրինակի (դեպքի) նկարագրություն և դրա վերաբերյալ մեկնաբանության ակնարկի (Էսսե, Essay) շարադրանք:

Ակնարկում դեպքի մեկնաբանությունները պետք է ներառեն՝

➪ շահերի բախման կամ անհամատեղելիության պահանջի, այլ սահմանափակման, նվերների ընդունման արգելքի՝ օրենսդրորեն սահմանված դրույթներին համապատասխանությունը,

➪ ստեղծված իրավիճակի կառավարման կամ լուծման առաջարկվող գործիքակազմը,

➪ այդ գործիքակազմի կիրառման եղանակները և հնարավորությունները,

➪ առաջարկություններ, որոնք կարող են պարունակել օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն կամ միջազգային փորձի կիրառման հնարավորություններ:

Ակնարկի գնահատումը ուղղակիորեն կախված չէ ներկայացված աշխատանքի էջերի քանակից: Մեկնաբանությունները պետք է շարադրված լինեն որպես թեզեր: Աշխատանքի ծավալը սովորաբար պետք է լինի առնվազն 2 էջ և ոչ ավելի, քան 4 էջ (տիտղոսաթերթ չի պահանջվում, թղթի ձևաչափը՝ A-4, տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5): Միևնույն ժամանակ, ակնարկի գնահատականը կարող է իջեցվել, եթե սովորողը չի կարողացել սեփական կարծիքն արտահայտել սեղմ ու հակիրճ: Տեքստում նկարազարդումներ (դիագրամներ, գծապատկերներ, աղյուսակներ, նկարներ և այլն) կարող են ներառվել խելամտության սահմաններում:

3. «Գույքի, եկամուտների, ծախսերի ու շահերի հայտարարագրեր» թեմայի ավարտից հետո տասնօրյա ժամկետում խմբային աշխատանքի ներկայացում «ԿԿՀ-ի հրապարակած հայտարարագրերի ռեեստրից հրապարակման ենթակա տվյալների հիման վրա հնարավոր անհամապատասխանությունների բացահայտման վարժություն» թեմայով: Ելույթում անհրաժեշտ է՝

- անդրադառնալ հանձնաժողովի կայքէջի ռեեստրի նկարագրությանը,

- անդրադառնալ հայտարարատուների ընտրանքին,
- անդրադառնալ ռիսկային հայտարարագրերի դուրսբերման հնարավորություններին,
- հրապարակված ընտրանքային հայտարարագրի օրինակով ցույց տալ հայտարարագրերի վերլուծության մեթոդների կիրառման հնարավորությունը,
- որոնել չհրապարակվող տվյալներ ՀՀ պետական մարմինների այլ բաց ռեգիստրներից (ընտրողների ռեգիստր, իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստր, սոցիալական ցանցեր, արտերկրի բաց ռեգիստրներ և այլն),
- ներկայացնել առաջարկություններ հրապարակվող հայտարարագրերի տվյալների թափանցիկության ընդլայնման վերաբերյալ:

Ելույթը գնահատելիս հաշվի կառնվի ԿԿՀ-ի հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի որոնողական համակարգից օգտվելու կարողությունը, ռիսկային կամ պրոբլեմային հայտարարագրերի ընտրության հնարավորությունը, տեսական նյութի՝ հայտարարագրերի վերլուծության մեթոդիկայի, ռիսկերի գնահատման կիրառման հնարավորությունը, այլ ռեեստրներից տվյալների դուրսբերման և հայտարարագրերի տվյալների հետ համադրման հնարավորությունները, PPT ներկայացման որակը:

Գործնական աշխատանքների գնահատականը ձևավորվելու է՝

- «Շահերի բախում, անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, նվերների ընդունման արգելք» թեմայով դեպքի նկարագրության և դրա վերաբերյալ ներկայացված ակնարկի (Էսսե, Essay),
- «Գույքի, եկամուտների, ծախսերի ու շահերի հայտարարագրեր» թեմայով խմբային աշխատանքի PPT ձևաչափով ներկայացման,
- բարեվարքության հայեցակարգի, վարքագծի կանոնների, դրանց մեկնաբանությունների, կառավարման գործիքակազմերի, էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով պատասխանատուների վերաբերյալ թեմաներով թեստային առաջադրանքների գնահատման արդյունքներով:

ՄՈԴՈՒԼ 4.
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Մոդուլի համառոտ նկարագրություն

«Կոռուպցիային առնչվող իրավակարգավորումներ» մոդուլը «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի ընտրովի մոդուլներից է: Այն հաջողությամբ ավարտելն ապահովում է **1 կրեդիտ:**

Մոդուլի նպատակն է՝ սովորողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների, դրանց տեսակների, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, դրանց քննության և բացահայտման առանձնահատկությունների, այդ ոլորտում տարբեր մարմինների համագործակցության վերաբերյալ:

Մոդուլի խնդիրներն են՝ սովորողներին հասու դարձնել կոռուպցիոն բնույթի իրավախախտումների առանձնահատկություններին, տեսակներին, տարանջատման հիմքերին, կոռուպցիոն բնույթի հանցագործությունները այլ տեսակի հանցագործություններից տարանջատելու սկզբունքներին, տրամադրել գիտելիքներ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների որակման, քննության մեթոդիկայի առանձնահատկությունների վերաբերյալ, նրանց մեջ զարգացնել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության մեթոդիկան կիրառելու ունակություններ:

Արդյունքներ

Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո սովորողը պետք է՝

⇨ **հասկանա** կոռուպցիոն բնույթի իրավախախտումների առանձնահատկությունները, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հատկանիշները և դրանց բաղադրիչները, հանցագործությունների քննության մեթոդիկան,

⇨ **ճանաչի** օրենսդրական ակտերում ամրագրված կոռուպցիոն բնույթի իրավախախտումները, դրանց տարրերը, դասակարգումը, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների տարանջատման սկզբունքները, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման հիմնական քայլերը,

⇨ **իմանա** հանցագործությունների որակման հիմնահարցերը, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների համար նախատեսված պատասխանատվության տեսակները և կիրառման հիմքերը, կոռուպցիոն հանցագործությունների քննության հիմնական ուղղությունները, միջազգային կազմակերպությունների համագործակցության ուղղությունները կոռուպցիայի դեմ պայքարում, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հետևանքների վերացման հիմնական ուղղությունները,

⇨ **կարողանա** տալ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների սահմանումը, բացատրել դրանց հատկանիշների առանձնահատկությունները, դասակարգել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հիմնական տեսակները, վերլուծել Հայաստանում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության առանձնահատկությունները, գործնական օրինակների վրա որակել կոռուպցիոն հանցագործությունը ըստ տեսակի, ներկայացնել ինքնուրույն դիրքորոշում կոռուպցիոն հանցագործության կամ այլ կոռուպցիոն իրավախախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ, ներկայացնել առանձին կոռուպցիոն հանցագործության քննության և մեթոդիկայի ուղղություններն ու առանձնահատկությունները:

Կապը ՀՀ պետական կառավարման ակադեմիայում դասավանդվող այլ մոդուլների կամ թեմաների հետ

Կարևոր է, որ այս մոդուլից առաջ սովորողներն անցած լինեն «Կոռուպցիայի ներածություն», «Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ» և «Հանրային ծառայության բարեվարքության համակարգ» մոդուլները: Այս մոդուլը կարող է անցկացվել նաև «Իրավագիտություն», «Հանրային կառավարում», «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում», «Հանրային ֆինանսների կառավարում» կրթական ծրագրերով սովորողների համար:

Հիմնական հասկացություններ և հապավումներ

ՀՀ ՊԿԱ - Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա
ԿԿՀ - Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ԵԱՀԿ - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՏՀԶԿ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ/OECD)
ԵԽ - Եվրոպայի խորհուրդ
ԵՄ - Եվրոպական միություն
ԿԲ - Կենտրոնական բանկ
ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին
ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն
ԳԼԿ - Գործընկերություն հանուն լավ կառավարման

Հիմնական թեմաներ

Թեմա 1. Կոռուպցիոն իրավախախտումների առանձնահատկությունները և տեսակները

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- «կոռուպցիոն իրավախախտումներ» հասկացությունը, հատկանիշները, տեսակները և տարանջատման հիմքերը,
- կոռուպցիոն բնույթի քաղաքացիական իրավախախտումների (դելիկտների) ընդհանուր բնութագիրը, հատկանիշները և տարանջատումը այլ տեսակի իրավախախտումներից,
- կոռուպցիոն բնույթի վարչական իրավախախտումների (զանցանքների) ընդհանուր բնութագիրը, հատկանիշները, պատասխանատվության տեսակները,
- կոռուպցիոն բնույթի կարգապահական իրավախախտումների ընդհանուր բնութագիրը, հատկանիշները և տարանջատումը այլ տեսակի իրավախախտումներից,
- կոռուպցիոն բնույթի հանցագործությունների ընդհանուր բնութագիրը, հատկանիշները (սուբյեկտիվ և օբյեկտիվ) և այլ հանցագործություններից տարանջատման սկզբունքները, տեսակները և դասակարգումը,

• կոռուպցիոն բնույթի հանցագործությունների համար նախատեսված հիմնական և լրացուցիչ պատժատեսակները, դրանց բնութագիրը և առանձնահատկությունները: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության առանձնահատկությունները և տեսակները:

Գործնական աշխատանք

• Ներկայացված թեմաների քննարկում լսարանում:

• Սովորողներին ներկայացնել տարբեր իրադրություններ և հանձնարարել որոշել՝ արդյոք նկարագրվածը հանցագործության տարրեր պարունակո՞ւմ է, արդյոք այդ հանցագործությունը կոռուպցիոն բնույթի՞ է, հիմնավորել պատասխանները, տալ ճիշտ որակում՝ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածին հղում կատարելով, ինչպես նաև որոշել պատժատեսակը:

• Սովորողներից յուրաքանչյուրին հանձնարարել դուրս գրել կոռուպցիոն հանցագործության հինգ տեսակ, ներկայացնել դրանց կատարման օրինակներ և հիմնավորել պատասխանները:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

• Պաշտոնեական հանցագործությունների հիմնական տեսակների քրեաիրավական և քրեագիտական վերլուծություն: Գիտագործնական ձեռնարկ: XIII/Սարգսյան Գ., Խորխոռունի Ա., Թադևոսյան Զ., Մինասյան Ա., - «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ, Եր, 2010, 232 էջ

• Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Գիտագործնական մեկնաբանություններ: Եր., «Տիգրան Մեծ», 2015, 128 էջ, http://www.ccc.am/files/pashtoneakan.pdf

• Цагикян С. Ш., Противодействие коррупции в Армении. - СПб. «Антарес», 2006, 296 с.

• Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, 1040 էջ

• Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, 544 էջ

• ՀՀ քրեական օրենսգիրք, www.arlis.am

• Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, www.arlis.am

• ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, www.arlis.am

• «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am

Լրացուցիչ

• Սարգսյան Գ. Մ., Կաշառակերության հակազդման հիմնախնդիրները. – «ՀՀ դատախազության դպրոց» ՊՈԱԿ, Եր., 2012, 256 էջ

• ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում, www.arlis.am

• Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա, www.arlis.am

• Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա, www.arlis.am

Թեմա 2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման առանձնահատկությունները

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկայի ընդհանուր բնութագիրը,
- կոռուպցիոն հանցագործությունների առանձին տեսակների քննության մեթոդիկայի առանձնահատկությունները (պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու, կաշառք ստանալու, տալու և կաշառքի միջնորդության վերաբերյալ գործերի քննության, մեթոդիկայի առանձնահատկությունները, ապօրինի հարստացման, պաշտոնեական կեղծիքի և այլ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները),
- հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացում) բնութագիրը, որակման խնդիրները և քննության առանձնահատկությունները:

Գործնական աշխատանք

- Ներկայացված թեմաների քննարկում լսարանում:
- Սովորողներին ներկայացնել տարբեր կոռուպցիոն հանցագործությունների օրինակներ, որոնք պետք է բացահայտել՝ կիրառելով դասախոսության ընթացքում ներկայացված կոռուպցիոն հանցագործությունների առանձին տեսակների քննության մեթոդիկան:
- Այս վարժությունը կարելի է ձևակերպել նաև որպես խմբային «դեպքերի ուսումնասիրություն» և յուրաքանչյուր խմբի կողմից զեկույցի ներկայացում (PPT):

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Ենգիբարյան Վ. Գ., Հանցագործությունների քննության մեթոդիկա,- Եր., ԵՊՀ հրատ., 2014
- Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Գիտագործնական մեկնաբանություններ:-Եր., «Տիգրան Մեծ», 2015, 128 էջ, http://www.ccc.am/files/pashtoneakan.pdf
- Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս:- Եր., ԵՊՀ հրատ., 2012, 1040 էջ
- Криминалистика: учебник под ред. Т. В. Аверьянова, Р. С. Белкина, Ю. Г. Корухова, 4-е изд. перераб. и доп. 2015., 928 с.
- ՀՀ քրեական օրենսգիրք, www.arlis.am

Լրացուցիչ

- Белкин Р. С., Курс криминалистики. Учебное пособие для вузов в 3-х томах. 3-е изд., дополненное, 2001. Т. 3. 394 с.
- Аверьянова Т. В., Белкин Р. С., Корухов Ю. Г., Российская Е. Р., Криминалистика. Учебник для вузов. Под ред. заслуженного деятеля науки Российской Федерации, профессора

Р. С. Белкина. — М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА-ИНФРА • М), 2000. — 990 с.

Թեմա 3. Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների առավել ծանր դրսևորումների որակման և քննության առանձնահատկությունները

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- կոռուպցիոն բնույթի հանցագործությունների առավել ծանր դրսևորման՝ կաշառք ստանալու ընդհանուր բնութագիրը, հատկանիշները, որակման առանձնահատկությունները,
- կաշառք ստանալու կապը կաշառակերության այլ տեսակների՝ կաշառք տալու և կաշառքի միջնորդության հետ, դրանց հատկանիշները և որակման առանձնահատկությունները,
- կաշառք ստանալու, կաշառք տալու, կաշառքի միջնորդության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները (դատատնտեսագիտական, դատահամակարգչատեխնիկական, դատաապրանքագիտական, դատահետքաբանական և այլ տեսակի փորձաքննությունների նշանակման անհրաժեշտությունը):

Գործնական աշխատանք

Որպես տնային աշխատանք՝ հանձնարարել խնդիր:

Սովորողը պետք է՝

- ուսումնասիրի խնդրի ֆաբուլան և համապատասխան որակում տա խնդրի ֆաբուլայում ներկայացված հանցագործությանը,
- հանցագործությունը որակելուց հետո մշակի հանցագործության քննության ծրագիր,
- նկարագրի քննության հիմնական քայլերը և ձեռնարկվող միջոցները:

Քննության մեթոդիկան պետք է պարունակի հետևյալ հարցերը և դրանց պատասխանները.

- Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը կատարվել է կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին իր լիազորությունների շրջանակի մեջ մտնող, թե՞ ակնհայտ ապօրինի գործողության կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:
- Պաշտոնատար անձի բանկային հաշիվներում որոշակի ժամանակահատվածի կտրվածքով արտացոլված դրամական միջոցների շարժը համապատասխանո՞ւմ է նրա օրինական աշխատավարձի շարժին:
- Տվյալ պաշտոնատար անձը դասվո՞ւմ է եկամուտների վերաբերյալ պարտադիր հայտարարագիր ներկայացնող սուբյեկտների շարքում:
- Որտե՞ղ, ե՞րբ, ո՞ւմ միջոցով և ի՞նչ եղանակով է փոխանցվել կաշառքի առարկան:
- Կաշառք ստանալու ժամանակ, կաշառք տվողից բացի, այլ անձինք ներկա գտնվե՞լ են:
- Հանցանքը կատարել է անձա՞մբ, թե՞ միջնորդի միջոցով:
- Առկա չե՞ն արդյոք կաշառքի շորթման հատկանիշներ:
- Եթե առկա են շորթման հատկանիշներ, ապա անձի կոնկրետ ո՞ր իրավունքների կամ օրինական շահերի ոտնահարման սպառնալիքով է այն կատարվել և այլն:

Սովորողները աշխատանքը ներկայացնում են PPT ձևաչափով և համապատասխան հիմնավորումներով:

Լսարանում կքննարկվեն դասախոսության ընթացքում ներկայացված թեմաները:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Սարգսյան Գ. Մ., Կաշառակերության հակազդման հիմնախնդիրները, – Եր., «ՀՀ դատախազության դպրոց» ՊՈԱԿ, 2012, 256 էջ
- Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Գիտագործնական մեկնաբանություններ:- Եր., «Տիգրան Մեծ», 2015, 128 էջ, http://www.ccc.am/files/pashtoneakan.pdf
- Մարկոսյան Մ.Մ., Կաշառակերության քրեաիրավական բնութագիրը: Ուսումնական ձեռնարկ / ՀՀ ոստիկանության կրթահամալիր. Եր., հեղ.հրատ., 2012, 112 էջ
- Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս:- Եր., ԵՊՀ հրատ., 2012, 1040 էջ
- ՀՀ քրեական օրենսգիրք, www.arlis.am
- ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի, Երևանի Կենտրոն և Նորք-մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի և Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով. ՍԴՈ 1124
- Էդ. Զաքարյանի, Գ. Գևորգյանի և Վ. Վարդանյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.08.2014թ. թիվ ԵԿԴ/0002/01/13 որոշումը

Լրացուցիչ

- Պաշտոնեական հանցագործությունների հիմնական տեսակների քրեաիրավական և քրեագիտական վերլուծություն: Գիտագործանական ձեռնարկ: XIII/Սարգսյան Գ., Խորխոռունի Ա., Թադևոսյան Զ., Մինասյան Ա., «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ, Եր., 2010, 232 էջ
- Ա. Ավետիսյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.07.2011թ. թիվ ԵԱՆԴ/0091/01/09 որոշումը
- Էդ. Ադամյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 16.12.2014թ. թիվ ԵԷԴ/0048/01/14 որոշումը
- Ենգիբարյան Վ. Գ., Հանցագործությունների քննության մեթոդիկա: -Եր., ԵՊՀ հրատ., 2014

Թեմա 4. Ակտիվների վերադարձ. ապօրինի գույքի բռնագրավում, ռազմավարություն և գործիքներ, իրավական և ընթացակարգային ասպեկտները

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- ակտիվների վերականգնման քաղաքականությունը և միջազգային փորձը,
- ակտիվների վերականգնման հիմնական եղանակները, վերականգնման փուլերը,
- ակտիվների վերականգնմանն առնչվող Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը և միջազգային պարտավորությունները, ակտիվների վերադարձին առնչվող քրեական և քաղաքացիական իրավակարգավորումները,
- ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության և միջազգային պարտավորությունների ներքո:

Գործնական աշխատանք

Լսարանում կքննարկվեն դասախոսության ընթացքում ներկայացված թեմաները: Կհանձնարարվի նաև թեստային առաջադրանք:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Ակտիվների վերականգնման քաղաքականությունը հետհեղափոխական Հայաստանում (համառոտագիր), 2019 https://transparency.am/files/publications/1558462258-0-990243.pdf?v=4
- ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, www.arlis.am
- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Դատախազության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- Stolen Asset Recovery: A Good Practices Guide for non-Conviction Based Asset Forfeiture (2009) by Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, and Larissa Gray, https://openknowledge.worldbank.org/handle/10986/2172
- Asset Recovery Handbook: A Guide for Practitioners (2011) by Jean-Pierre Brun, Larissa Gray, Clive Scott, and Kevin Stephenson, https://openknowledge.worldbank.org/handle/10986/2172
- Barriers to Asset Recovery: An Analysis of the Key Barriers and Recommendations for Action (2011) by Kevin Stephenson, Larissa Gray, and Ric Power, https://openknowledge.worldbank.org/handle/10986/2172
- Few and Far. The Hard Facts on Stolen Asset Recovery (2014) by Larissa Gray, Kjetil Hansen, Pranvera Recica-Kirkbride, Linnea Mills, https://www.oecd.org/dac/accountable-effective-institutions/Hard%20Facts%20Stolen%20Asset%20Recovery.pdf
- Left out of the Bargain: Settlements in Foreign Bribery Cases and Implications for Asset Recovery (2014) by Jacinta Anyango Oduor, Francisca M. U. Fernando, Agustin Flah,

Dorothee Gottwald, Jeanne M. Hauch, Marianne Mathias, Ji Won Park, and Oliver Stolpe, https://openknowledge.worldbank.org/handle/10986/2172

Լրացուցիչ

- Politically Exposed Persons: Preventive Measures for the Banking Sector (2010) by Theodore S. Greenberg, Larissa Gray, Delphine Schantz, Carolin Gardner, and Michael Latham, https://openknowledge.worldbank.org/handle/10986/2172
- The Puppet Masters: How the Corrupt Use Legal Structures to Hide Stolen Assets and What to Do About It (2011) by Emile van der Does de Willebois, J.C. Sharman, Robert Harrison, Ji Won Park, and Emily Halter, https://openknowledge.worldbank.org/handle/10986/2172
- On the Take: Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption (2012) by Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, and Tammar Berger, https://openknowledge.worldbank.org/handle/10986/2172
- Public Office, Private Interests: Accountability through Income and Asset Disclosure (2012), https://openknowledge.worldbank.org/handle/10986/2172
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, www.arlis.am
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, www.arlis.am
- ՀՀ քրեական օրենսգիրք, www.arlis.am
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, www.arlis.am

Թեմա 5. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման մարմիններ

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- Հայաստանի Հանրապետությունում գործող կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարող հիմնական իրավապահ մարմինների կառուցվածքը, գործառույթները և լիազորությունները, նրանց նշանակությունը կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարում,
- Հակակոռուպցիոն կոմիտեի, մասնագիտացված հակակոռուպցիոն դատախազների և հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ինստիտուտների ներդրման նպատակահարմարությունը Հայաստանի Հանրապետությունում,
- կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցությունը, հիմնական ուղղությունները և լիազորությունները. կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված միջազգային մարմինները, լիազորությունները և ներպետական մարմինների հետ համագործակցությունը:

Գործնական աշխատանք

Որպես տնային աշխատանք՝ կհանձնարարվի նախապատրաստել առաջարկություններ դասախոսության ընթացքում ներկայացված խնդիրների վերաբերյալ, հիմնավորել այդ առաջարկությունները և նշել դրանց առավելությունները կոռուպցիայի դեմ պայքարի գործում: Սովորողներից յուրաքանչյուրի կողմից արված առաջարկությունները կներկայացվեն գործնական դասի ժամանակ և կքննարկվեն: Արդյունքները կգնահատվեն և կգրանցվեն որպես միջանկյալ արդյունք:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Specialised anti-corruption courts. A comparative mapping Matthew C., Sofie A. Schütte. 2016. U4/CMI, https://www.u4.no/publications/specialised-anti-corruption-courts-a-comparative-mapping.pdf
- ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, www.arlis.am
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, www.arlis.am
- «Դատախազության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- ՀՀ դատական օրենսգիրք, www.arlis.am
- «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, www.arlis.am

Լրացուցիչ

- «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- ՀՀ քրեական օրենսգիրք, www.arlis.am
- «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում, www.arlis.am
- Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա, www.arlis.am
- Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա, www.arlis.am

Դասացուցակ

Մոդուլի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմում է հինգ շաբաթ՝ **100** ժամ *(դասախոսություն՝ 14 ժամ, գործնական աշխատանք՝ 15 ժամ, ինքնուրույն աշխատանք՝ 71 ժամ)*:

TN	Թեմայի անվանումը	Դասա-ժամի ծավալը	Դասաժամի տեսակը	Եղանակը
1.	**Կոռուպցիոն իրավա-խախտումների առանձնահատ-կությունները և տեսակները**	3	դասախո-սություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	վերլուծություն, քննարկումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		15	Ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, ելույթների պատրաստում

Թ N	Թեմայի անվանումը	Դասաժամի ծավալը	Դասաժամի տեսակը	Եղանակը
2.	**Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման առանձնահատկությունները**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	քննարկումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		16	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, ակնարկների, ելույթների պատրաստում
3.	**Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների ամենածանր դրսևորումների որակման և քննության առանձնահատկությունները**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	քննարկումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		10	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, ակնարկների, ելույթների պատրաստում
4.	**Ակտիվների վերադարձ. ապօրինի գույքի բռնագրավում, ռազմավարություն և գործիքներ, իրավական և ընթացակարգային ասպեկտները**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	վերլուծություն, քննարկումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		15	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, ակնարկների, ելույթների պատրաստում
5.	**Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման մարմիններ**	2	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	վերլուծություն, քննարկումներ, PPT ներկայացումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		15	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, ելույթների պատրաստում, հանձնարարված աշխատանքներին մասնակցություն

Գնահատման նյութեր

Քննություն կամ ստուգարք

• Թեստային առաջադրանք մոդուլում ներառված բոլոր թեմաների տեսական հարցադրումների վերաբերյալ

Գործնական աշխատանքներ

1. **«Կոռուպցիոն իրավախախտումների առանձնահատկությունները և տեսակները»** գործնական աշխատանքի ընթացքում սովորողները պետք է՝

• ներկայացված տարբեր իրադրություններից որոշեն՝ արդյոք նկարագրվածը հանցագործության տարրեր պարունակո՞ւմ է, թե ոչ, արդյոք այդ հանցագործությունը կոռուպցիոն բնույթի՞ է, թե ոչ, հիմնավորեն պատասխանները, տան ճիշտ որակում՝ հղում կատարելով ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածին, ինչպես նաև որոշեն պատժատեսակը:

Սովորողներից յուրաքանչյուրին կհանձնարարվի դուրս գրել կոռուպցիոն հանցագործության հինգ տեսակ, ներկայացնել դրանց կատարման օրինակներ և հիմնավորել պատասխանները:

Արդյունքները կքննարկվեն, սովորողները կարտահայտեն իրենց կարծիքները և կմեկնաբանեն: Կհնչեն բանավոր ելույթներ: Ելույթները գնահատելիս հաշվի կառնվեն՝

• տվյալ հանցագործությունը որակելու, այն հիմնավորելու կարողությունը,
• կատարված եզրահանգումների որակը:

2. **«Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման առանձնահատկությունները»** թեմայի գործնական աշխատանքի շրջանակում՝

• դասախոսության արդյունքում ձեռք բերված գիտելիքների և նախապես տրամադրված խնդիրների վրա հիմնվելով՝ սովորողները պետք է որոշեն խնդրում նկարագրված յուրաքանչյուր իրավիճակի համապատասխանությունը կոռուպցիոն հանցագործությունների առանձին տեսակներից մեկին:

Այս վարժությունը կարելի է ձևակերպել նաև որպես խմբային «դեպքերի ուսումնասիրություն» և յուրաքանչյուր խմբի կողմից զեկույցի ներկայացում (PPT):

Նշված հարցերի պատասխանների հիման վրա կկատարվի գնահատում:

3. **«Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների առավել ծանր դրսևորումների որակման և քննության առանձնահատկությունները»** թեմայի գործնական աշխատանքի շրջանակում սովորողներին կառաջադրվի խնդիր:

Սովորողը պետք է՝

• ուսումնասիրի խնդրի ֆաբուլան և համապատասխան որակում տա խնդրի ֆաբուլայում ներկայացված հանցագործությանը,
• հանցագործությունը որակելուց հետո մշակի հանցագործության քննության ծրագիր,
• նկարագրի քննության հիմնական քայլերը և ձեռնարկվող միջոցները:

Քննության մեթոդիկան պետք է պարունակի հետևյալ հարցերը և դրանց պատասխանները.

- Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը կատարվել է կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին իր լիազորությունների շրջանակի մեջ մտնող, թե՞ ակնհայտ ապօրինի գործողության կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:
- Պաշտոնատար անձի բանկային հաշիվներում որոշակի ժամանակահատվածի կտրվածքով արտացոլված դրամական միջոցների շարժը համապատասխանո՞ւմ է նրա օրինական աշխատավարձի շարժին:
- Տվյալ պաշտոնատար անձը դասվո՞ւմ է եկամուտների վերաբերյալ պարտադիր հայտարարագիր ներկայացնող սուբյեկտների շարքում:
- Որտե՞ղ, ե՞րբ, ո՞ւմ միջոցով և ի՞նչ եղանակով է փոխանցվել կաշառքի առարկան:
- Կաշառք ստանալու ժամանակ, կաշառք տվողից բացի, այլ անձինք ներկա գտնվե՞լ են:
- Հանցանքը կատարել է անձա՞մբ, թե՞ միջնորդի միջոցով:
- Առկա չե՞ն արդյոք կաշառքի շորթման հատկանիշներ:
- Եթե առկա են շորթման հատկանիշներ, ապա անձի կոնկրետ ո՞ր իրավունքների կամ օրինական շահերի ոտնահարման սպառնալիքով է այն կատարվել և այլն:

4. «Ակտիվների վերադարձ. ապօրինի գույքի բռնագրավում, ռազմավարություն և գործիքներ, իրավական և ընթացակարգային ասպեկտները» թեմայի վերաբերյալ գործնական աշխատանքի ժամանակ լսարանում կքննարկվեն դասախոսության ընթացքում ներկայացված թեմաները: Կհանձնարարվի նաև թեստային աշխատանք:

5. «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման մարմինները» թեմայի վերաբերյալ մեկնաբանության ակնարկի (Essay) շարադրանք:

Որպես տնային աշխատանք՝ կհանձնարարվի նախապատրաստել առաջարկություններ դասախոսության ընթացքում ներկայացված խնդիրների վերաբերյալ, հիմնավորել այդ առաջարկությունները և նշել դրանց առավելությունները կոռուպցիայի դեմ պայքարի գործում: Սովորողներից յուրաքանչյուրի առաջարկությունները կներկայացվեն գործնական դասի ժամանակ և կքննարկվեն: Արդյունքները կգնահատվեն և կգրանցվեն որպես միջանկյալ արդյունք:

Ակնարկում մեկնաբանությունները պետք է ներառեն առաջարկություններ դասախոսության ընթացքում ներկայացված խնդիրների վերաբերյալ և դրանց հիմնավորումները: Ակնարկի գնահատումը ուղղակիորեն կախված չէ կատարված աշխատանքի էջերի քանակից: Մեկնաբանությունները պետք է շարադրված լինեն որպես թեզեր: Աշխատանքի ծավալը սովորաբար պետք է լինի առնվազն 2 և ոչ ավելի, քան 4 էջ (տիտղոսաթերթ չի պահանջվում, թղթի ձևաչափը՝ A-4, տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5): Միևնույն ժամանակ, ակնարկի գնահատականը կարող է իջեցվել սովորողի սեփական կարծիքը հակիրճ, սեղմ արտահայտելու անկարողության համար: Տեքստում նկարազարդումներ (դիագրամներ, գծապատկերներ, աղյուսակներ, նկարներ և այլն) կարող են ներառվել խելամտության սահմաններում:

Գործնական աշխատանքների գնահատականը ձևավորվելու է մոդուլում ընդգրկված բոլոր գործնական առաջադրանքների կատարման և դրանց արդյունքների համակցության արդյունքում:

ՄՈԴՈՒԼ 5.
ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մոդուլի համառոտ նկարագրություն

«**Կոռուպցիան քաղաքական գործունեության մեջ**» մոդուլը «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի ընտրովի մոդուլներից է: Այն հաջողությամբ ավարտելն ապահովում է **1 կրեդիտ**:

Մոդուլի նպատակն է՝ սովորողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ քաղաքական գործունեության մեջ կոռուպցիոն դրսևորումների, դրանց տեսակների և այս ոլորտում կոռուպցիայի հնարավոր կանխարգելման միջոցների վերաբերյալ:

Մոդուլի խնդիրներն են՝

- տալ քաղաքական կոռուպցիայի սահմանումը և դրա դեմ պայքարի ռազմավարության հիմնական մոտեցումներն ու տարրերը,
- սովորեցնել ձեռք բերված գիտելիքները կիրառել քաղաքական կազմակերպությունների և պետական մարմինների գործունեության քաղաքական վերլուծության մեջ,
- հաղորդել պետական և տեղական մակարդակներում կոռուպցիայի հիմնախնդրի լուծման կառուցողական և անարդյունավետ մոտեցումները պարզելու ունակություն:

Արդյունքներ

Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո սովորողը պետք է՝

⇨ **հասկանա** քաղաքական կոռուպցիայի դերն ու տեղը հասարակության սոցիալ-քաղաքական կյանքում և հասարակությանը դրա պատճառած վնասը, քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրները և գործիքները, կոռումպացված քաղաքական և տնտեսական իշխանության սերտաճում՝ օլիգարխիկ իշխանություն, դրա առաջացման և դրսևորման առանձնահատկությունները անցումային տնտեսություն ունեցող երկրներում, օլիգարխիկ իշխանության բացասական հետևանքները, կոռուպցիայի կանխարգելման նպատակով կուսակցությունների և դրանց քարոզարշավների ֆինանսավորման առավել թափանցիկ իրականացման անհրաժեշտությունը, քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց հայտարարագրման ինստիտուտի և իրական սեփականատերերի բացահայտման կարևորությունը,

⇨ **ճանաչի** քաղաքացիական հասարակության դերը քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարում, քաղաքական կոռուպցիան և ՀԼՄ-ները, քաղաքական կոռուպցիան և եկեղեցին, վերջինների հնարավոր դերը կոռուպցիայի դեմ պայքարում, հանրային ծառայողների քաղաքական չեզոքության և զսպվածության սկզբունքի կարևորությունը, կուսակցությունների ֆինանսավորման կոռուպցիոն ռիսկերի առկայությունը, դրանց ֆինանսների և նյութական արժեքների հայտարարագրման անհրաժեշտությունը, ժամանակակից պետությունում ընտրական ինստիտուտների կառուցվածքն ու կազմավորման առանձնահատկությունները, քաղաքական կազմակերպությանը բնորոշող բնութագրիչները՝ կախված քաղաքական մշակույթի առանձնահատկություններից, կառավարման ձևից, հասարակության զարգացման մակարդակից,

⇨ **իմանա** քաղաքական կոռուպցիայի սահմանումը, դրա էությունը, տեսակները և առանձնահատկությունները, դրան հակազդելու հնարքները, կուսակցությունների ֆինանսավորման աղբյուրները, ապակենտրոնացած և կենտրոնացած (համակարգային) կոռուպցիա, կուսակցությունների գործունեության մշտադիտարկման և վե-

ռահսկողության անհրաժեշտությունը, կուսակցությունների և դրանց քարոզարշավների ֆինանսավորման կանոնների խախտումների համար «համաչափ, արդյունավետ և զսպող» բնույթի պատժամիջոցների կիրառում, կոռուպցիայի ներթափանցումը ընտրական և հանրաքվեների գործընթացների ոլորտ, վարչական ռեսուրսի և դրա բաղադրիչների չարաշահում, միջազգային կոռուպցիայի բացահայտված խոշոր դրսևորումներ, կոռուպցիայի դեմ պայքարի եզրաբանական բառապաշարը և հակակոռուպցիոն կրթության շնորհիվ ձեռք բերած գիտելիքները կիրառելու հնարավորություն,

➪ **կարողանա** գնահատել տարբեր գործընթացներում քաղաքական կոռուպցիոն ռիսկերը և ստացած գիտելիքները կիրառել հակակոռուպցիոն գործընթացներում, ինքնուրույն ուսումնասիրել, վերլուծել և որակել քաղաքական կոռուպցիոն բնույթի հանցագործությունները, այդ թվում՝ ֆինանսական մեքենայությունների միջոցով կատարվող, կիրառել ձեռք բերած գիտելիքները՝ կոռուպցիոն վարքագծին նպաստող պատճառներն ու պայմանները պարզելու, վերացնելու, հետևաբար նաև կանխելու համար, քննադատորեն վերլուծել Հայաստանում քաղաքական կոռուպցիոն բնույթի հանցագործությունների առանձնահատկությունները, ներկայացնել քաղաքական կոռուպցիոն հանցագործությունների օրինակներ, գնահատել որոշ օրենսդրական ակտերի կատարելագործման նշանակությունը քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում, ներկայացված քաղաքական գործընթացներում գնահատել կոռուպցիոն ռիսկերը և գտնել դրանցից խուսափելու հնարավոր լուծումներ, մեկնաբանել Հայաստանում քաղաքական կոռուպցիայի դեմ տարվող պայքարի արդյունքները:

Կապը ՀՀ պետական կառավարման ակադեմիայում դասավանդվող այլ մոդուլների կամ թեմաների հետ

Կարևոր է, որ այս մոդուլից առաջ սովորողներն անցած լինեն «Կոռուպցիայի ներածություն», «Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ, «Հանրային ծառայության բարեվարքության համակարգ» և «Կոռուպցիային առնչվող իրավակարգավորումներ» մոդուլները: Միաժամանակ այն կարող է անցկացվել «Իրավագիտություն», «Հանրային կառավարում», «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում», «Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն», «Գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն» և «Քաղաքական ժուռնալիստիկա և PR տեխնոլոգիաներ» կրթական ծրագրերով սովորողների համար:

Հիմնական հասկացություններ և հապավումներ

ՀՀ ՊԿԱ - Հայաստանի Հանրապետություն պետական կառավարման ակադեմիա
ԿԿՀ - Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ԵԱՀԿ - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՏՀԶԿ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԵԽ - Եվրոպայի խորհուրդ
ԵՄ - Եվրոպական միություն
ԿԲ - Կենտրոնական բանկ

ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին
ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն
ԶԼՄ - Զանգվածային լրատվական միջոցներ

Հիմնական թեմաներ

Թեմա 1. Քաղաքական կոռուպցիա

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- քաղաքական կոռուպցիայի սահմանումը, դրա տեսակները և առանձնահատկությունները, քաղաքական կոռուպցիայի սուբյեկտները, քաղաքական կոռուպցիայի դերն ու տեղը հասարակության սոցիալ-քաղաքական կյանքում,
- հասարակությանը քաղաքական կոռուպցիայի պատճառած վնասը, ժողովրդավարությունը և կոռուպցիան, քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրները, քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարի գործիքները, քաղաքացիական հասարակության դերը քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարում, քաղաքական կոռուպցիան և ԶԼՄ-ները, քաղաքական կոռուպցիան և եկեղեցին,
- համակարգային կոռուպցիա, քաղաքական և տնտեսական իշխանության սերտաճում՝ օլիգարխիկ իշխանություն,
- օլիգարխիկ իշխանություն բացասական հետևանքները՝ մենաշնորհային տնտեսության, անազնիվ տնտեսական մրցակցություն, գնաճ և թույլ տնտեսական մրցունակություն միջազգային մակարդակում, ուղղակի և անուղղակի կորուստներ. օլիգարխիկ ռեժիմը՝ սպառնալիք երկրի ազգային անվտանգության համար:

Գործնական աշխատանք

- Ներկայացված խնդիրների քննարկում:
- Սովորողներից յուրաքանչյուրին հանձնարարել ներկայացնել ՀՀ-ում դրսևորված քաղաքական կոռուպցիայի օրինակներ, ընդ որում, չսահմանափակվելով միայն կաշառակերության օրինակներով: Նաև ներկայացնել, թե դրանցից յուրաքանչյուրը ինչպիսի բացասական հետևանքներ կարող է առաջացնել երկրի և հասարակության համար:
- Քաղաքական կոռուպցիայի՝ ԽՍՀՄ-ում և ՀՀ-ում (հետխորհրդային շրջան) բացահայտված և հասարակական մեծ արձագանք առաջացրած դեպքերի քննարկում:
- Քաղաքական կոռուպցիան հաճախ դրսևորվում է քաղաքական պաշտոններ զբաղեցնողների, հանրային ծառայողների, ինչպես նաև դատական համակարգում, դատախազությունում, ուժային կառույցներում և պետական գնումների բնագավառում աշխատողների գործունեության ընթացքում: Քննարկել թվարկված պաշտոնատար անձանց/աշխատողների հնարավոր կոռուպցիոն դրսևորումները և դրանց արդյունավետ հակազդման ու կանխարգելման հնարավորություններն ու ձևերը:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- 2019 թ. Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն (2020), https://transparency.am/en/publications/view/333
- Corruption as Statecraft: Using Corrupt Practices as Foreign Policy Tools (2019) https://transparency.am/files/publications/1574427517-0-281466.pdf?v=3
- The State of Corruption: Armenia, Azerbaijan, Georgia, Moldova and Ukraine (2015) https://transparency.am/files/publications/1436175393-0-361397.pdf
- Квон Д. А., Политическая коррупция: понятие цели, субъекты // Власть, 2015. Том. 23. n 7. С. 45-52. https://www.jour.isras.ru/index.php/vlast/article/view/1452/1428
- Лазарев Е. А., Политическая коррупция: объясняя природу постсоветских трансформаций. – Полис. Политические исследования. 2010. n 2. С. 106-121. https://www.politstudies.ru/index.php?id=4263&page_id=453

Լրացուցիչ

- Наронская А. Г., Политическая коррупция: сущность и особенности. XX Международная конференция памяти профессора Л. Н. Когана, 16-18 марта 2017 г., Екатеринбург: УрФУ, 2017. — С. 2048-2054. http://elar.urfu.ru/bitstream/10995/46759/1/klo_2017_228.pdf
- Нисневич Ю. А., Политическая коррупция: определение, формы проявления, механизм и ресурсы. Технологизация политических процессов в условиях глобализации: теория, опыт, перспективы. Материалы Международной научно-практической конференции, Москва, 19 октября 2012г. М.: Федерация мира и согласия, 2012. https://publications.hse.ru/mirror/pubs/share/folder/6lxafrpk03/direct/63968530
- Tom Parker, Perceptions of Political Corruption. Too Often the Harbingers of Stark Reality. 2020, https://www.independent.com/2020/02/22/perceptions-of-political-corruption/

Թեմա 2. Կուսակցությունների ֆինանսավորում

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- կուսակցությունների ֆինանսավորման աղբյուրները՝ պետական բյուջե, ունևոր կուսակցության անդամներ և համակրող աջակիցներ, լոբբիստական կազմակերպություններ, անդամավճար, անդամակցման/մուտքի, կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկվելու համար վճարներ և այլն. միջոցների հայթայթում նաև ակնհայտ կոռուպցիոն եղանակով՝ մեքենայությունների և կաշառքների, այդ թվում՝ հետվերադարձի (откат) միջոցով,
- կոռուպցիայի կանխարգելման նպատակով կուսակցությունների և դրանց քարոզարշավների ֆինանսավորման առավել թափանցիկ իրականացում, դրանց համապատասխանեցում միջազգային ստանդարտներին և եվրոպական երկրների լավագույն փորձի կիրառում, դրամական և անշարժ գույքի տեսքով նվիրատվությունների, ինչպես նաև նախընտրական ծախսերի առավելագույն չափի սահմանում, լոբբիզմի օրինականացում, որոշ դեպքերում՝ պետական միջոցների հատկացում գենդերային հավասարությանն ուղղված նախաձեռնություններին, պետական միջոցների հնարավոր հատկացում նաև հաշմանդամություն ունեցող

անձանց՝ երկրի քաղաքական կյանքին նրանց մասնակցությունը խթանելու նպատակով,

- կոռուպցիոն ռիսկերի առկայություն, ֆինանսների և նյութական արժեքների հայտարարագրում պետական ֆինանսական հատկացումների դեպքում, այդ մասով նաև հաշվետվությունների ներկայացման պահանջ և պետական համապատասխան մարմինների կողմից կուսակցությունների հաշիվների ստուգում, կուսակցությունների գործունեության մշտադիտարկման և վերահսկողության անհրաժեշտություն, վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը լայն լիազորություններով օժտում (աուդիտ, հետաքննություն), աուդիտի ենթարկվելիք կուսակցությունների ընտրության ոչ խտրական ընթացակարգերի առկայություն, կուսակցությունների և դրանց քարոզարշավների ֆինանսավորման կանոնների խախտումների համար «համաչափ, արդյունավետ և զսպող» բնույթի պատժամիջոցների կիրառում,
- քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց հայտարարագրման ինստիտուտ, իրական սեփականատերերի բացահայտման կարևորությունը,
- հանրային ծառայողների քաղաքական չեզոքության և զսպվածության սկզբունքը:

Գործնական աշխատանք

1. Դասախոսության ընթացքում ներկայացված նյութի քննարկում:

Կուսակցությունների ֆինանսավորման հիմնախնդիրները: Ֆինանսավորման աղբյուրները՝ պետության կողմից, ներքին և արտաքին դոնորներից: Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման սահմանափակումների և կարգավորման անհրաժեշտությունը՝ կոռուպցիոն դրսևորումները առավելագույնս կանխելու համար: Հիմնադրամի հանգանակության (ֆանդռեյզինգ) նշանակությունն ու ազդեցությունը ընտրական գործընթացների վրա:

2.Խմբային աշխատանք՝ սովորողների 4-5 հոգուց կազմված խմբերի մասնակցությամբ.

- Յուրաքանչյուր խումբ պետք է ուսումնասիրի և վեր հանի Հայաստանում կուսակցությունների ֆինանսավորմանն առնչվող կոռուպցիայի ժամանակակից դրսևորման որևէ դեպք, նկարագրի այն և ներկայացնի լսարանին:
- Այնուհետև ունկնդիրների հետ համատեղ քննարկումների արդյունքում յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի այդ դրսևորման դեմ պայքարելու արդյունավետ մեխանիզմ:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Կարծիք «Կուսակցությունների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի վերաբերյալ: ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ, https://www.osce.org/hy/odihr/437282?download=true
- Ֆերնանդո Կազալ Բերտոա, Գրանցում, ֆինանսավորում և վերահսկողություն. «լավագույն փորձը» հին և նոր Եվրոպայում, ուսումնասիրությունը պատվիրվել է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի կողմից՝ ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի պաշտոնական դիմումի հիման վրա, 2019:
- Декларации активов для государственных служащих. Инструмент для предотвращения

коррупции. Борьба против коррупции в Восточной Европе и Центральной Азии. OECD 2011, https://www.oecd.org/daf/anti-bribery/48973261.pdf (дата обращения: 06.03.2022)
- Law on Financing of Political Organisations (Parties), Լատվիա: https://likumi.lv/ta/en/id/36189-law-on-financing-of-political-organisations-parties
- Баллингтон Ж., Зоватто Д., Кахане М. и др., Финансирование политических партий и избирательных кампаний. Руководство по финансированию политической деятельности. IDEA. https://www.idea.int/sites/default/files/publications/funding-of-political-parties-and-election-campaigns-RU.pdf
- Коргунюк Ю. Г., Финансирование партий в постсоветской России. Между бизнесом и властью. "Полития" n 3–4 (58–59) 2010, https://cyberleninka.ru/article/n/finansirovanie-partiy-v-postsovetskoy-rossii-mezhdu-biznesom-i-vlastyu
- Уколов В. Ф., Лоббирование как новая функция управления в предпринимательской деятельности. https://cyberleninka.ru/article/n/lobbirovanie-kak-novaya-funktsiya-upravleniya-v-predprinimatelskoy-deyatelnosti?gclid=CjwKCAjw-YT1BRAFEiwAd2WRttBBmm9IIzAwIHpM_Yg2EOBV8Teq6aPbcHgTd1-s7w6mKDTj3dcFThoCWjAQAvD_BwE
- Азизов А., Принцип политического нейтралитета на примере управления в зарубежных государствах, https://cyberleninka.ru/article/n/printsip-politicheskogo-neytraliteta-na-primere-upravleniya-v-zarubezhnyh-gosudarstvah
- Толмачева Т. И., Зарубежный опыт административных запретов, связанных с режимом государственной службы, https://cyberleninka.ru/article/n/zarubezhnyy-opyt-administrativnyh-zapretov-svyazannyh-s-rezhimom-gosudarstvennoy-sluzhby

Լրացուցիչ

- Долгих Ф. И., К вопросу об использовании микропожертвований для финансирования текущей деятельности политических партий – правовые аспекты. Бизнес в законе. Экономико-юридический журнал, 4'2016, https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-ob-ispolzovanii-mikropozhertvovaniy-dlya-finansirovaniya-tekuschey-deyatelnosti-politicheskih-partiy-pravovye-aspekty
- Платонова Н. И., Митин Г. Н., Правовое регулирование финансирования политических партий в Королевстве Испании и Российской Федерации: сравнительный анализ. Контуры глобальных трансформаций: политика, экономика, право. Том 11, n 3 (2018), https://doi.org/10.23932/2542-0240-2018-11-3-213-229

Թեմա 3. Քաղաքական կոռուպցիան և ընտրությունները

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- կոռուպցիայի ներթափանցումը ընտրական և հանրաքվեների գործընթացների ոլորտ. ժամանակակից ընտրական և հանրաքվեների գործընթացներն ուղեկցող բացասական երևույթները՝ ընտրական հանձնաժողովների, իրավապահ մարմինների և լրատվամիջոցների կողմնակալություն, նախընտրական քարոզարշավների ապօրինի ֆինանսավորում, ընտրակաշառք, ընտրական փաստաթղթերի և քվեարկության արդյունքների կեղծում, «կեղտոտ» ընտրական տեխնոլոգիաներ, «սև PR», վարչական

ռեսուրսի չարաշահում և այլն, վերջինի բաղադրիչները՝ ուժային ռեսուրս, կարգավորող ռեսուրս, օրենսդրական ռեսուրս, ինստիտուցիոնալ ռեսուրս (նյութական և մարդկային ռեսուրսներ), ֆինանսական ռեսուրս, տեղեկատվական և հաղորդակցման ռեսուրս և կարգավիճակային ռեսուրս,

- ընտրությունների արդյունքների վրա չարաշահումների և կեղծիքների հնարավոր ազդեցությունը գնահատելու համար ընտրություններին մասնակցության մոդելի կառուցում:

Գործնական աշխատանք

1. Դասախոսության ընթացքում ներկայացված նյութի քննարկում. ընտրական և հանրաքվեների գործընթացներն ուղեկցող բացասական երևույթների քննարկում: Ընտրական կոռուպցիայի տեսակները և ժամանակակից ընտրական գործընթացը հաճախ ուղեկցող բացասական երևույթները՝

- ընտրական հանձնաժողովների, իրավապահ մարմինների և լրատվամիջոցների կողմնակալություն,
- վարչական ռեսուրսի օգտագործում,
- նախընտրական քարոզարշավների ապօրինի ֆինանսավորում, ընտրակաշառք,
- ընտրական փաստաթղթերի և քվեարկության արդյունքների կեղծում,
- «կեղտոտ» ընտրական տեխնոլոգիաների և «սև» PR-ի կիրառում:

2. Քննարկել ընտրական կոռուպցիայի և ընտրախախտումների կանխարգելման գործում դիտորդական առաքելությունների, ՁԼՄ-ների և վստահված անձանց խաղացած դերը: Ազատ և արդար ընտրությունների անցկացումը՝ էլեկտորատի վստահությունը և ընտրության արդյունքների հանդեպ հավատն ապահովելու նախապայման:

- Քննարկման ընթացքում սովորողները ներկայացնում են այն խախտումները և չարաշահումները, որոնց իրենք կամ իրենց մերձավորներն ականատես են եղել կամ առնչվել են:
- Կազմակերպել մտքերի փոխանակում՝ ներկայացված ոչ ազատ և անարդար ընտրությունների միջոցով կազմավորված մարմինների բացասական դերի մասին:
- Ներկայացված խնդիրների լավագույն լուծումների որոնում ուղեղային գրոհի միջոցով:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- ՀՀ 2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելություն վերջնական զեկույց https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491?download=true
- ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ, 9 դեկտեմբերի 2018թ. ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական զեկույց https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/413564?download=true
- Деньги на выборах: проблемы обеспечения прозрачности финансирования политических партий и избирательных кампаний. Доклад «Трансперенси Интернешнл-Россия», Москва, 2017

https://transparency.org.ru/wp-content/themes/transparency-child/special/dengi-na-viborah/money-to-elect.pdf
- Жуков К.С., Карнышев А. Д., Азбука избирательной кампании – М.: ИМА-пресс.2001 -328 с. https://fileskachat.com/download/31748_cac6697f5a05d4365d37eb0ccd72d02b.html
- Зырянова И.А., Основные формы коррупции в избирательном процессе «Актуальные проблемы экономики и права». 2011. n 4. https://cyberleninka.ru/article/n/osnovnye-formy-korruptsii-v-izbiratelnom-protsesse

Լրացուցիչ

- Избирательные технологии и избирательное искусство: Сб. статей / Под общей редакцией Устименко С. В. - М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН). 2001 – 176 с.
- Попова О. В., Практики предотвращения незаконных избирательных технологий. Партийная и избирательная системы. 2015, https://cyberleninka.ru/article/n/praktiki-predotvrascheniya-nezakonnyh-izbiratelnyh-tehnologiy
- Доклад о злоупотреблении административным ресурсом в ходе избирательных процессов*. Европейская комиссия за демократию через право (венецианская комиссия) Страсбург, 16 декабря 2013 г. https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2013)033-rus

Թեմա 4. Քաղաքական կոռուպցիան միջազգային ասպարեզում

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

• վերջին տարիների միջազգային կոռուպցիոն խոշոր սկանդալները՝ «ադրբեջանական փողերի լվացում» (The Azerbaijani Laundromat), «խավիարային դիվանագիտություն» (Caviar Diplomacy), Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայում (FIFA), Չեխիայում վարչապետ Ա. Բաբիշի շահերի բախումը (Andrej Babiš's Conflict of Interest in Czechia), Թուրքիայի իշխանական շրջանների «գազ ոսկու դիմաց» գործարքը Իրանի հետ և այլն:

• Իտալիայում «Մաքուր ձեռքեր» (Mani pulite) գործողությունը՝ որպես քաղաքականության և իրավապահ ոլորտ ներթափանցած կազմակերպված հանցավորության (մաֆիայի) դեմ հաջողված պայքարի օրինակ:

Գործնական աշխատանք

• Դասախոսությամբ ներկայացված նյութի քննարկում:

• Միջազգային քաղաքական կոռուպցիայի տեսակները, ի լրումն՝ ադրբեջանական խավիարային դիվանագիտություն և լանդրոմատ (լվացքատուն), նաև այլ օրինակներ՝ Թուրքիայի նախագահի ընտանիքի ոչ լեգալ նավթային եկամուտները և այլն:

• Կոռուպցիայի հաղթահարման միջազգային փորձը. հաջողված օրինակներ՝ Իտալիայի «Մաքուր ձեռքեր» օպերացիան՝ ուղղված մաֆիայի վերացմանը, և դրա խիստ դրական ազդեցությունը երկրի զարգացման վրա, Լի Կուան Յուի հակակոռուպցիոն միջոցառումները Սինգապուրում և դրանց արդյունք «տնտեսական հրաշքը» երկրում և այլն: Կարծիքներ և քննարկումներ:

• Գործնական վարժություն՝ դերային (իրավիճակային) խաղ: Ունկնդիրները

բաժանվում են խմբերի, ներկայացվում է առկա իրավիճակը: Յուրաքանչյուր խմբի տրվում է խնդիր, որի համար պետք է գտնեն լուծում, թեև խմբերի խնդիրները հակասում են միմյանց: Առաջարկվում է իրականացնել ներխմբային քննարկումներ, ընտրել բանագնացներ (յուրաքանչյուր խմբից մեկական), որոնք բանակցությունների միջոցով պիտի գտնեն արդյունավետ փոխշահավետ լուծում: Լուծումը չպետք է պարունակի կոռուպցիոն ռիսկեր և/կամ հակասի օրենսդրությանը: Բանակցություններն ընթանում են խմբերի ներկայությամբ: Խմբերն իրավասու են առաջարկել ընդհատել բանակցությունները և կանչել իրենց բանագնացներին խորհրդակցության կամ փոխել նրանց:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- 25 corruption scandals that shook the world. These scandals involve politicians across political parties and from the highest reaches of government, staggering amounts of bribes. https://www.transparency.org/,
- The Azerbaijani Laundromat One Year On: Has Justice Been Served? https://www.transparency.org/news/feature/the_azerbaijani_laundromat_one_year_on_has_justice_been_served,
- PACE Needs Investigative Body To Protect Integrity Of Its Mission, https://www.transparency.org/news/pressrelease/pace_needs_investigative_body_to_protect_integrity_of_its_mission
- Caviar Diplomacy. Global corruption report: sport. Transparency International France. https://transparency-france.org/actu/diplomatie-du-caviar-azerbaidjan/caviar-diplomacy/#.XqE3EmgzbDc,
- Corruption as Statecraft: Using Corrupt Practices as Foreign Policy Tools (2019) https://transparency.am/files/publications/1574427517-0-281466.pdf?v=3
- Global corruption report: sport. Transparency International. https://www.transparency.org/news/feature/global_corruption_report_sport,
- The European Swamp (Caviar Diplomacy Part 2) – Prosecutors, corruption and the Council of Europe. https://www.esiweb.org/publications/european-swamp-caviar-diplomacy-part-2-prosecutors-corruption-and-council-europe ,
- Corruption scandals that shook the world. https://tbsnews.net/international/corruption-scandals-shook-world
- Италия: партии, мафия, коррупция, операция «Чистые руки». (Реферативный обзор). https://cyberleninka.ru/article/n/2006-04-026-italiya-partii-mafiya-korruptsiya-operatsiya-chistye-ruki-referativnyy-obzor

Լրացուցիչ

- Нелезенко Н. П., Анализ международного опыта предотвращения и борьбы с коррупцией. Вестник государственного и муниципального управления n 4 2013 г., с 186-191. https://cyberleninka.ru/article/n/analiz-mezhdunarodnogo-opyta-predotvrascheniya-i-borby-s-korruptsiey

Դասացուցակ

Մոդուլի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմում է չորս շաբաթ՝ **60** ժամ *(դասախոսություն՝ 12 ժամ, գործնական աշխատանք՝ 12 ժամ, ինքնուրույն աշխատանք՝ 36 ժամ)*:

TN	Թեմայի անվանումը	Դասաժամի ծավալը	Դասաժամի տեսակը	Եղանակը
1.	**Քաղաքական կոռուպցիա**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, ինտերակտիվ քննարկում
		3	գործնական աշխատանք	ներկայացված խնդիրների քննարկում. սովորողներից յուրաքանչյուրը ներկայացնում է ՀՀ-ում դրսևորված քաղաքական կոռուպցիայի օրինակներ
		9	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, PPT ներկայացումների, ակնարկների, ելույթների պատրաստում, մասնակցություն հանձնարարված խմբային աշխատանքներին
2.	**Կուսակցությունների ֆինանսավորում**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, ինտերակտիվ քննարկում
		3	գործնական աշխատանք	Ներկայացված խնդիրների քննարկում: Սովորողներին հանձնարարել ներկայացնել ՀՀ-ում դրսևորված ֆինանսական չարաշահումների օրինակներ: Ներկայացնել նաև, թե դրանցից յուրաքանչյուրը ինչպիսի բացասական հետևանքներ կարող է առաջացնել երկրի և հասարակության համար:
		9	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, PPT ներկայացումների, ակնարկների, ելույթների պատրաստում, մասնակցություն հանձնարարված խմբային աշխատանքներին

3.	**Քաղաքական կոռուպցիան և ընտրությունները**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, ինտերակտիվ քննարկում
		3	գործնական աշխատանք	ընտրական և հանրաքվեների գործընթացներն ուղեկցող ներկայացված բացասական երևույթների և դրանց առաջացրած հետևանքների քննարկում
		9	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, PPT ներկայացումների, ակնարկների, ելույթների պատրաստում, մասնակցություն հանձնարարված խմբային աշխատանքներին
4.	**Քաղաքական կոռուպցիան միջազգային ասպարեզում**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, ինտերակտիվ քննարկում
		3	գործնական աշխատանք	Ներկայացված նյութի քննարկում: Դերախաղ՝ «Կոռուպցիան Ատլանտիկի Հանրապետությունում»: Մասամբ հորինված այս դերախաղը թույլ է տալիս քննարկել միջազգային կառույցների մասնակցությամբ կոռուպցիայի հաղթահարման հնարավորությունները:
		9	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, PPT ներկայացումների, ակնարկների, ելույթների պատրաստում, մասնակցություն խմբային աշխատանքներին

Դասընթացը հաջողությամբ ավարտելը

Գնահատման նյութեր

Քննություն կամ ստուգարք

Թեստային առաջադրանք մոդուլում ներառված բոլոր թեմաների տեսական հարցադրումների վերաբերյալ: Թեստի հարցերը կազմված են 3 սխալ և 1 ճիշտ պատասխան պարունակող տարբերակներից բաղկացած հարցադրումներից:

Գործնական աշխատանքներ

Թեմա 1. Քաղաքական կոռուպցիա

• Սովորողներից յուրաքանչյուրին հանձնարարել ներկայացնել ՀՀ-ում դրսևորված քաղաքական կոռուպցիայի օրինակներ, ընդ որում, չսահմանափակվելով միայն կաշառակերության օրինակներով: Նաև ներկայացնել, թե դրանցից յուրաքանչյուրը ինչպիսի բացասական հետևանքներ կարող է առաջացնել երկրի և հասարակության համար:

• Քաղաքական կոռուպցիայի՝ ԽՍՀՄ-ում և ՀՀ-ում (հետխորհրդային շրջան) բացահայտված և հասարակական մեծ արձագանք առաջացրած դեպքերի քննարկում:

• Քաղաքական կոռուպցիան հաճախ դրսևորվում է քաղաքական պաշտոններ զբաղեցնողների, հանրային ծառայողների, դատական համակարգում, դատախազությունում, ուժային կառույցներում և պետական գնումների բնագավառում աշխատողների գործունեության ժամանակ: Քննարկել թվարկված պաշտոնատար անձանց/աշխատողների հնարավոր կոռուպցիոն դրսևորումները և դրանց արդյունավետ հակազդման ու կանխարգելման հնարավորություններն ու ձևերը:

• Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների շահերի բախում: Անհամատեղելիության պահանջներ, նվերների ընդունման արգելք և այլ սահմանափակումներ:

Թեմա 2. Կուսակցությունների ֆինանսավորում

Սովորողները բաժանվում են չորս-հինգ հոգուց կազմված խմբերի, և կազմակերպվում է խմբային աշխատանք.

Յուրաքանչյուր խումբ պետք է ուսումնասիրի և վեր հանի Հայաստանում կուսակցությունների ֆինանսավորմանն առնչվող կոռուպցիայի որևէ ժամանակակից դրսևորում, նկարագրի այն և ներկայացնի լսարանին:

Այնուհետև ունկնդիրների հետ համատեղ քննարկումների արդյունքում յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի այդ դրսևորման դեմ պայքարելու արդյունավետ մեխանիզմ:

Թեմա 3. Քաղաքական կոռուպցիան և ընտրությունները

1. Ընտրական և հանրաքվեների գործընթացներն ուղեկցող՝ ներկայացված բացասական երևույթների քննարկում:

Ընտրական կոռուպցիայի տեսակները և ժամանակակից ընտրական գործընթացը հաճախ ուղեկցող բացասական երևույթները՝

• ընտրական հանձնաժողովների, իրավապահ մարմինների և լրատվամիջոցների կողմնակալությունը,

• վարչական ռեսուրսի օգտագործումը,

• նախընտրական քարոզարշավների ապօրինի ֆինանսավորումը, ընտրակաշառքը,

• ընտրական փաստաթղթերի և քվեարկության արդյունքների կեղծումը,

• «կեղտոտ» ընտրական տեխնոլոգիաների և «սև PR»-ի կիրառումը:

2. Քննարկել ընտրական կոռուպցիայի և ընտրախախտումների կանխարգելման գործում դիտորդական առաքելությունների, ԶԼՄ-ների և վստահված անձանց խաղացած դերը: Ազատ և արդար ընտրությունների անցկացումն անհրաժեշտություն է էլեկտորատի վստահությունը և հավատն ընտրության արդյունքների հանդեպ ապահովման համար:

• Քննարկման ընթացքում սովորողները ներկայացնում են այն խախտումները և չարաշահումները, որոնց իրենք կամ իրենց մերձավորներն ականատես են եղել կամ առնչվել են:

• Կազմակերպել մտքերի փոխանակում ներկայացված ոչ ազատ և անարդար ընտրությունների միջոցով կազմավորված մարմինների բացասական դերի մասին:

Ներկայացված խնդիրների լավագույն լուծումների որոնում ուղեղային գրոհի միջոցով:

Թեմա 4. Քաղաքական կոռուպցիան միջազգային ասպարեզում

Գործնական վարժություն՝ դերային (իրավիճակային) խաղ:

Ունկնդիրները բաժանվում են խմբերի, ներկայացվում է առկա իրավիճակը: Յուրաքանչյուր խմբի տրվում է որոշակի խնդիր, որի լուծումը պետք է գտնեն, թեև խմբերի խնդիրների լուծումները հակասում են միմյանց: Առաջարկվում է իրականացնել ներխմբային քննարկումներ, ընտրել բանագնացներ (յուրաքանչյուր խմբից՝ մեկական), որոնք բանակցությունների միջոցով պիտի գտնեն օպտիմալ փոխշահավետ լուծում:

Լուծումը չպետք է պարունակի կոռուպցիոն ռիսկեր և/կամ հակասի օրենսդրությանը: Բանակցություններն ընթանում են խմբերի ներկայությամբ: Խմբերը իրավասու են առաջարկել ընդհատել բանակցությունները և կանչել իրենց բանագնացներին խորհրդակցության կամ փոխել նրանց:

Գործնական աշխատանքների գնահատականը ձևավորվելու է մոդուլում ընդգրկված բոլոր գործնական առաջադրանքների կատարման և դրանց արդյունքների ներկայացման համակցության արդյունքում:

ՄՈԴՈՒԼ 6.
ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մոդուլի համառոտ նկարագրություն

«Կոռուպցիան տնտեսական գործունեության մեջ» մոդուլը «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի ընտրովի մոդուլներից է: Այն հաջողությամբ ավարտելն ապահովում է **1 կրեդիտ:**

Մոդուլի նպատակն է՝ սովորողներին փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ կոռուպցիայի տնտեսական բովանդակության, ինչպես նաև տնտեսության վրա ազդեցության և տնտեսական փոխհարաբերություններում դրա գնահատման, կանխարգելման և չեզոքացման վերաբերյալ:

Մոդուլի խնդիրներն են՝ սովորողներին ծանոթացնել կոռուպցիոն տնտեսական մոդելների վերլուծության գործիքներին, տնտեսական և գործարար գործընթացներում կոռուպցիայի դրսևորման՝ փողերի լվացման, ստվերային տնտեսության, տնտեսական մրցակցության սահմանափակման և այլ ձևերին, հանրային ֆինանսների կառավարման ոլորտում հնարավոր կոռուպցիոն ռիսկերին, փոխանցել գիտելիքներ տնտեսության, մասնավորապես նեդրումների գրավչության, տնտեսական աճի և շուկայական մրցակցության վրա կոռուպցիայի ազդեցության գնահատման վերաբերյալ:

Արդյունքներ

Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո սովորողը պետք է՝

⇨ **հասկանա** կոռուպցիայի սոցիալ-տնտեսական դրդապատճառները, տնտեսական մոդելները, ազդեցության մեխանիզմները տարբեր տնտեսությունների կարճաժամկետ և երկարաժամկետ զարգացման վրա, ստվերային տնտեսության և փողերի լվացման կապը կոռուպցիոն գործունեության հետ, կորպորատիվ կոռուպցիայի դրսևորումներն ու առանձնահատկությունները, հանրային ֆինանսների կառավարման ոլորտում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը,

⇨ **ճանաչի** կոռուպցիոն դրսևորումների վտանգները տնտեսական աճի, ներդրումների գրավչության, շուկայական մրցակցության և աղքատության հաղթահարման առումով, ներառող (inclusive) և կորզող կամ չներառող (extractive) տնտեսական ինստիտուտների դերն ու նշանակությունը կոռուպցիոն գործունեության մեջ,

⇨ **իմանա** կոռուպցիայի՝ տնտեսական աճի վրա ազդեցության կառուցակարգերը, պետություն-մասնավոր հատված սերտաճման պայքարի մեթոդները, գործարար աշխարհի և քաղաքական գործիչների հանցավոր համագործակցության կանխարգելման խնդիրները, անօրինական ֆինանսական հոսքերի և փողերի լվացման դեմ պայքարի ձևերը կոռուպցիոն դրսևորման համատեքստում, կոռուպցիան հանրային ֆինանսների կառավարման ոլորտում,

⇨ **կարողանա** համեմատել և վերլուծել կոռուպցիայի ազդեցությունը տարբեր տնտեսությունների և տնտեսական համակարգերի վրա, բացահայտել ուղղակի և անուղղակի կապերը կոռուպցիայի և տնտեսական մի շարք հանցագործությունների միջև, գնահատել մի շարք օրենքների և օրինագծերի դերն ու նշանակությունը կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում, ընդերքօգտագործման և լիցենզավորում պահանջող այլ տնտեսական գործունեությունների կարգավորումներում գտնել կոռուպցիոն ռիսկերն ու ներկայացնել հնարավոր այլընտրանքային լուծումներ և ինքնուրույն դիրքորոշում, գնահատել ՀՀ պետական տնտեսական ինստիտուտների ներառակա-

նությունը, կանխատեսել և մեկնաբանել երկրում կոռուպցիայի դեմ տարվող պայքարի տնտեսական արդյունքները, վերլուծել կոռուպցիոն դրսևորումները հանրային ֆինանսների կառավարման մեջ, «ստվերային տնտեսություն», «անօրինական ֆինանսական հոսքեր», «հարկերից խուսափման վարքագիծ», «կորպորատիվ կոռուպցիա» հասկացությունները կոռուպցիոն դրսևորումների համատեքստում:

Կապը ՀՀ պետական կառավարման ակադեմիայում դասավանդվող այլ մոդուլների կամ թեմաների հետ

Կարևոր է, որ այս մոդուլից առաջ սովորողներն անցած լինեն «Կոռուպցիայի ներածություն», «Հակակոռուպցիոն քաղաքականություն և հաստատություններ» «Հանրային ծառայության բարեվարքության համակարգ» և «Կոռուպցիային առնչվող իրավակարգավորումներ» մոդուլները: Այն նաև կարող է անցկացվել «Իրավագիտություն», «Հանրային կառավարում», «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում», «Հանրային ֆինանսների կառավարում», «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրերով սովորողների համար:

Հիմնական հասկացություններ և հապավումներ

ՀՀ ՊԿԱ - Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա
ԿԿՀ - Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ԵԱՀԿ - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՏՀԶԿ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ/OECD)
ԵԽ - Եվրոպայի խորհուրդ
ԵՄ - Եվրոպական միություն
ԿԲ - Կենտրոնական բանկ
ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին
ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն
ԶԼՄ - Զանգվածային լրատվական միջոցներ

Հիմնական թեմաներ

Թեմա 1. Կոռուպցիայի սոցիալ-տնտեսական բովանդակությունը

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- կոռուպցիայի սոցիալ-տնտեսական հիմքերը, դրդապատճառները և առանձնահատկությունները, կոռուպցիոն վարքագծի դրսևորման աղբյուրները և պատճառները,
- կոռուպցիոն շուկայի հիմնական կառուցակարգերը, կոռուպցիոն առաջարկի և պահանջարկի ձևավորման ուղղությունները, աղբյուրները և դրդապատճառները, պրինցիպալ-գործակալ փոխգործակցության մոդելը,

• կոռուպցիայի մակրո, միկրո, Բեքքեր-Ստիգլերի և Շլեյֆեր-Վիշնիի տնտեսական մոդելները, համակարգային և էլիտար կոռուպցիաների առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը տնտեսության վրա:

Գործնական աշխատանք

Ներկայացնել իրավիճակային խնդիր, որտեղ առկա են կոռուպցիոն ռիսկեր: Սովորողներին բաժանել խմբերի և յուրաքանչյուր խմբի հանձնարարել կատարել կոռուպցիոն գործընթացի և դրա՝ տնտեսության վրա կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցության մոդելավորում՝ սխեմայի տեսքով:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Коррупция как институт коммуникации в модели принципал-агент Н. К. Дятлова, Я. А. Цадер Вестник Кемеровского государственного университета 2015 n 2 (62) Т. 5
- Shleifer, A., Vishny, R. Corruption // Quarterly Journal of Economics. - 1993. - Vol. 108, no. 3. P. 599.
- Becker GS, Stigler GJ. 1974. Law enforcement, malfeasance, and compensation of enforcers. J. Legal Stud. 3(1):1–18
- Corruption ; Andrei Shleifer; Robert W. Vishny The Quarterly Journal of Economics, Vol. 108, no. 3. (Aug., 1993), pp. 599-617. Stable URL: http://links.jstor.org/sici?sici=0033-5533%28199308%29108%3A3%3C599%3AC%3E2.0.CO%3B2-8 The Quarterly Journal of Economics is currently published by The MIT Press.
- Chapter 3: Economic models of corruption Vincent G. Fitzsimons* Ch.3 in Bracking, S (ed) Corruption and Development: the anti-corruption campaigns. (London: Palgrave, 2007)

Լրացուցիչ

- The Supply and Demand Sides of Corruption: Canadian Extractive Companies in Africa; Frederick Stapenhurst, Fahri Karakas, Myung-Soo Jo, Emine Sarigollu, Dec. 2016, https://ueaeprints.uea.ac.uk/id/eprint/61972/1/Accepted_manuscript.pdf
- The microeconomics of corruption the classical approach Flavio M. Menezes http://press-files.anu.edu.au/downloads/press/p228301/pdf/ch071.pdf
- Why corruption matters: understanding causes, effects and how to address them Evidence paper on corruption January 2015; Department for International Development, UK
- Corruption: Supply--side and Demand--side Solutions, Avinash Dixit, Princeton University, 2015, https://www.princeton.edu/~dixitak/home/IGIDR_2.pdf

Թեմա 2. Կոռուպցիայի ազդեցությունը տնտեսության վրա

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

• կոռուպցիայի ազդեցության կառուցակարգերը տարբեր տնտեսությունների (զարգացած, զարգացող, թույլ զարգացած) և տնտեսական համակարգերի (վարչահրամայական, շուկայական, անցումային) վրա,

- կոռուպցիայի ազդեցությունը ՀՆԱ-ի և տնտեսական աճի վրա երկարաժամկետ և կարճաժամկետ կտրվածքներում,
- կոռուպցիայի ազդեցությունը կայուն զարգացման, գիտելիքահեն և նորարարական տնտեսության կառուցման և զարգացման վրա,
- «ներառական (inclusive) և կորզող կամ չներառող (extractive) տնտեսական ինստիտուտներ» հասկացությունները, դրանց կապը կոռուպցիայի մակարդակի հետ,
- եկամուտների անհավասարությունը, աղքատությունը և կոռուպցիան, կոռուպցիան՝ իբրև աղքատությունից ծագած և աղքատություն առաջացնող երևույթ,
- կոռուպցիայի ազդեցությունը շուկայական մրցունակության և ներդրումային գրավչության վրա, արտաքին և ներքին ներդրումները կոռուպցիոն համակարգի առկայության դեպքում,
- ստվերային տնտեսության դրսևորումները (օրինական և ոչ օրինական) և հարկերի վճարումից խուսափման վարքագիծը, դրանց կապը կոռուպցիոն դրսևորումների հետ:

Գործնական աշխատանք

Սովորողներին հանձնարարվում է հետազոտել Տարոն Աճեմօղլուի և Ջեյմս Ռոբինսոնի «Ինչու են ձախողվում պետությունները» գրքում ներկայացված «տնտեսական ինստիտուտների ներառականություն» հասկացությունը և դրա հիման վրա գրավոր ներկայացնել նշված հասկացության վերաբերյալ վերլուծություն ու մեկնաբանություն, ինչպես նաև գնահատել և ներկայացնել սեփական դիրքորոշում ՀՀ-ի տնտեսական ինստիտուտների ներառականության վերաբերյալ, մշակել առաջարկներ այդ ներառականությունը բարձրացնելու համար:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Տարոն Աճեմօղլու, Ջեյմս Ռոբինսոն, «Ինչու են ձախողվում պետությունները», Երևան, Անտարես, 2018
- The Impact of Corruption and Shadow Economy on the Economic and Sustainable Development. Do They “Sand the Wheels” or “Grease the Wheels”?; Răzvan Hoinaru 1 , Daniel Buda 2 , Sorin nicolae Borlea 3,4 , Viorela Ligia Văidean 5 and Monica Violeta Achim; 4 January 2020; JOURnAL SUSTAInABILITY; MDPI
- The Many Faces of Corruption Tracking Vulnerabilities at the Sector Level; Campos, J. Edgardo Pradhan, Sanjay, 2007, The World Bank
- The Political Economy of Corruption Causes and Consequences; Susan Rock-Ackerman, Viewpoint journal, april 1996, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/11629/multi_page.pdf?sequence=1&isAllowed=y
- Transnational Corruption and Innovation in Transition Economies; Alexis Habiyaremye* and Wladimir Raymondt September 18, 2013; Maastricht Economic and social Research Institute on Innovation and Technology, UnU-MERIT
- Կոռուպցիան՝ որպես պետական կառավարման հմտություն. կոռուպցիոն գործելակերպը՝ որպես արտաքին քաղաքականության գործիք, հեղինակ(ներ)՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ համաշխարհային կազմակերպության «Պաշտպանություն և անվտանգություն» ծրագիր, 2019

- Կոռուպցիոն իրավիճակը Հայաստանում և դրա դեմ պայքարը 2017 թվականին. Թրանսփարենսի Ինթերնեշնլ համաշխարհային կազմակերպություն, 2018
- Recommendations on the Republic of Armenia Anti-Corruption Strategy and Its 2019-2022 Implementation Action Plan, Թրանսփարենսի Ինթերնեշնլ համաշխարհային կազմակերպություն, 2019
- Значение и особенности института представления сведений об имуществе и доходах кандидатами в рамках избирательного процесса; Кулов Г.З, Конституционное право и проблемы коррупции: видение молодых ученых коллективная монография; Москва ЮСТИЦИНФОРМ 2016 https://www.academia.edu/30515145/Lobbying_as_an_alternative_to_democratic_procedures_the_experience_of_the_European_Union_Book_Chapter_constitutional_law_and_the_issues_of_corruption_young_scholars_view._Moscow_Yustitsinform_2016_In_Russ_?email_work_card=view-paper
- Конкретные факторы риска, связанные с легализацией (отмыванием) доходов от коррупции, Типологический отчет ФАТФ, июнь 2012 http://fedsfm.ru/content/files/documents/fatf/%D0%BA%D0%BE%D1%80%D1%80%D1%83%D0%BF%D1%86%D0%B8%D1%8F%202.pdf
- Friedrich Schneider, Johannes Kepler University of Linz and IZA, Bonn; Shadow Economies and Corruption All Over the World: What Do We Really Know? http://ftp.iza.org/dp2315.pdf
- ВЕСТНИК ФИНАНСОВОГО УНИВЕРСИТЕТА 2’2013 УДК 338.054.23 теневая экономика и коррупция, Хрипков Михаил Петрович; https://cyberleninka.ru/article/n/tenevaya-ekonomika-i-korruptsiya-1
- Аннотация рабочей программы учебной дисциплины политика противодействия теневой экономике; «Российский экономический университет имени Г.В. Плеханова». Москва – 2014, https://www.rea.ru/ru/org/cathedries/polkaf/documents/Б1.В.ДВ.8.1%20Политика%20противодействия%20теневой%20экономике.pdf
- «Скрываясь в тени». Рост подпольной экономики; Фридрих Шнайдер при участии Доминика Энста; МЕЖДУНАРОДНЫЙ ВАЛЮТНЫЙ ФОНД ВАШИНГТОН, ОКРУГ КОЛУМБИЯ; 2002 https://www.imf.org/external/pubs/ft/issues/issues30/rus/issue30r.pdf
- Գործարարների շրջանում տնտեսական մրցակցության ընկալման սոցիոլոգիական հետազոտություն, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2020, https://transparency.am/files/publications/1582712146-0-567954.pdf?v=4
- Առաջարկություններ «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2019 https://transparency.am/hy/publications/view/280
- Առաջարկություններ ««Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ, ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2019 https://transparency.am/files/publications/1568619804-0-997504.pdf?v=4
- Առաջարկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2019 https://transparency.am/hy/publications/view/286

- Կայուն զարգացման նպատակ 16. Առաջարկություններ, «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2019 https://transparency.am/hy/publications/view/314

Լրացուցիչ

- Հակակոռուպցիոն օրակարգ Հայաստանի համար, ԹԻՀԿ
- Benoit Godin, The Knowledge Economy. Fritz Machlup's Construction of a Synthetic Concept, Montreal, 2008
- Purwantini Rahayu, Ina and Widodo, Tri; The Causal Relationship between Corruption and Poverty in ASEAn: a General Method of Moments/Dynamic Panel Data Analysis; https://mpra.ub.uni-muenchen.de/78328/1/MPRA_paper_78328.pdf
- Does Corruption Affect Income Inequality and Poverty? IMF Working Paper, 1998. https://www.imf.org/external/pubs/ft/wp/wp9876.pdf
- Առաջարկություններ ՀՀ գործարար միջավայրի բարելավման ռազմավարության նախագծի վերաբերյալ, ԹԻՀԿ
- Կայուն զարգացման նպատակ 16. Առաջարկություններ, ԹԻՀԿ
- Կայուն զարգացման նպատակ 16. Իրականացման առաջընթացը Հայաստանում, ԹԻՀԿ
- Раймонд Фисман Эдвард Мигель, ЭКОНОМИЧЕСКИЕ ГАНГСТЕРЫ Коррупция, насилие и бедность национальных масштабов АЛЬПИНА БИЗНЕС БУКС, Москва 2012
- Роуз-Аккерман С., Коррупция и государство. Причины, следствия, реформы: Пер с англ. О.А. Алякринского. - М.: Логос, 2003.
- Money Laundering in the EU; https://people.exeter.ac.uk/watupman/undergrad/ron/methods%20and%20stages.htm
- Tax evasion, tax fraud and money laundering; Inland Revenue, July 2019 https://www.ird.govt.nz/-/media/Project/IR/PDF/Tax-evasion-fraud--moneylaundering-factsheet--ir1061.pdf
- Ansia Storm, northwest University, Potchefstroom, South Africa; Establishing The Link Between Money Laundering And Tax Evasion; International Business & Economics Research Journal – november 2013 Volume 12, number 11 https://www.researchgate.net/publication/297747023_Establishing_The_Link_Between_Money_Laundering_And_Tax_Evasion
- Առաջարկություններ կոռուպցիայի դեմ պայքարում անհրաժեշտ քայլերի վերաբերյալ, «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2018 https://transparency.am/hy/publications/view/244
- Հակակոռուպցիոն օրակարգ Հայաստանի համար, «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2019. https://transparency.am/files/publications/1550748454-0-934018.pdf?v=4
- Առաջարկ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2019
- Հայաստանի Հանրապետության օրենքը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին, https://www.e-draft.am/projects/1931/about;
- VOICES OF THE POOR From Many Lands Edited by Deepa narayan Patti Petesh; A copublication of Oxford University Press and the World Bank, 2002 http://documents.worldbank.org/curated/en/193241468205788708/pdf/236701RU1Voices0of0the0poor0RU.pdf

Թեմա 3. Կոռուպցիան և գործարար ոլորտը

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- կոռուպցիան պետություն-մասնավոր հատված համագործակցության ոլորտում, պետություն-մասնավոր հատված սերտաճման դեմ պայքարի մեթոդները, գործարար ասոցիացիաների և միավորումների դերը դրանում, առևտրաարդյունաբերական պալատների նշանակությունը,
- «կորպորատիվ կոռուպցիա» հասկացությունը, դրա՝ իբրև երևույթի ծագման աղբյուրները և առանձնահատկությունները,
- կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում լիցենզավորում և այլ հատուկ թույլտվություններ պահանջող տնտեսական գործունեության ոլորտներում,
- գործարար աշխարհի և քաղաքական գործիչների հանցավոր համագործակցության կանխարգելման խնդիրները,
- «փողերի լվացում» հասկացությունը, մեթոդները և դրա կապը կոռուպցիայի հետ:

Գործնական աշխատանք

Սովորողներին բաժանել երեք-չորս հոգուց կազմված խմբերի և հանձնարարել մշակել պետություն-մասնավոր հատված սերտաճման երևույթը չեզոքացնելուն ուղղված լուծումներ ու առաջարկներ, ինչի համար պետք է հետազոտել ԱՄՆ-ի, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային երկրների փորձն ու առկա խնդիրները: Վերլուծելով և համադրելով միջազգային փորձը՝ խմբերը առաջարկություններում պետք է ներառեն առկա շահագրգիռ կառույցների բացերն ու խնդիրները, կառույցների վերակազմավորման կամ նորերի ձևավորման հնարավորությունները, բարեփոխումների անհրաժեշտությունը:

Գործնական դասաժամին յուրաքանչյուր խումբ իր առաջարկությունները ներկայացնում է PPT ձևաչափով, համապատասխան հիմնավորումներով և գնահատվում է:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Գործարարների շրջանում տնտեսական մրցակցության ընկալման սոցիոլոգիական հետազոտություն, ԹԻՀԿ
- Синяткина В. В., Особенности института личной заинтересованности Палаты Лордов и Палаты Общин Парламента Соединенного Королевства Великобритании и Северной Ирландии; КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО И ПРОБЛЕМЫ КОРРУПЦИИ: ВИДЕНИЕ МОЛОДЫХ УЧЕНЫХ КОЛЛЕКТИВНАЯ МОНОГРАФИЯ; Москва ЮСТИЦИНФОРМ 2016 https://www.academia.edu/30515145/Lobbying_as_an_alternative_to_democratic_procedures_the_experience_of_the_European_Union_Book_Chapter_constitutional_law_and_the_issues_of_corruption_young_scholars_view._Moscow_Yustitsinform_2016_In_Russ_?email_work_card=view-paper
- Кулов Г.З. Значение и особенности института представления сведений об имуществе и доходах кандидатами в рамках избирательного процесса; КОНСТИТУЦИОННОЕ

ПРАВО И ПРОБЛЕМЫ КОРРУПЦИИ: ВИДЕНИЕ МОЛОДЫХ УЧЕНЫХ КОЛЛЕКТИВНАЯ МОНОГРАФИЯ; Москва ЮСТИЦИНФОРМ 2016 https://www.academia.edu/30515145/Lobbying_as_an_alternative_to_democratic_procedures_the_experience_of_the_European_Union_Book_Chapter_constitutional_law_and_the_issues_of_corruption_young_scholars_view._Moscow_Yustitsinform_2016_In_Russ_?email_work_card=view-paper

- Подольный Н. А., Подольная Н. Н., КОРПОРАТИВНАЯ КОРРУПЦИЯ: ПОНЯТИЕ, ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ; Вестник Челябинского государственного университета. 2013. n 17 (308). Право. Вып. 37. С. 65–70. https://cyberleninka.ru/article/n/korporativnaya-korruptsiya-ponyatie-tendentsii-razvitiya/viewer
- Corporate Governance and Corruption: A Cross-Country Analysis Xun Wu1 Lee Kuan Yew School of Public Policy; Wu, X., 2005. Corporate Governance and Corruption: A Cross-Country Analysis. Governance: An International Journal of Policy, Administration and Institutions, 18 (2), 151-170, https://core.ac.uk/download/pdf/48636153.pdf
- Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացում կոռուպցիոն ռիսկերի գնահատում, փորձագետ՝ Արթուր Գրիգորյան, գրախոս՝ Հարություն Մովսիսյան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Եր., 2017 http://moj.am/storage/uploads/001_ynderqogtagorcman.pdf
- Պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին կատարվող նվիրաբերությունների գործընթացի կարգավորման վերաբերյալ առաջարկություններ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
- 2020, https://transparency.am/files/publications/1579720232-0-688611.pdf?v=4
- Առաջարկություններ ՀՀ գործարար միջավայրի բարելավման ռազմավարության նախագծի վերաբերյալ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2019

Լրացուցիչ

- Փորձագիտական կարծիք հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մոդելի ընտրության վերաբերյալ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2019
- Загретдинов В. И., Лоббизм как альтернатива демократическим процедурам: опыт Европейского Союза; КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО И ПРОБЛЕМЫ КОРРУПЦИИ: ВИДЕНИЕ МОЛОДЫХ УЧЕНЫХ КОЛЛЕКТИВНАЯ МОНОГРАФИЯ; Москва ЮСТИЦИНФОРМ 2016, ст. 121 https://www.academia.edu/30515145/Lobbying_as_an_alternative_to_democratic_procedures_the_experience_of_the_European_Union_Book_Chapter_constitutional_law_and_the_issues_of_corruption_young_scholars_view._Moscow_Yustitsinform_2016_In_Russ_?email_work_card=view-paper
- Чуева Д. И., Институт лоббизма в России: концептуальное переосмысление; КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО И ПРОБЛЕМЫ КОРРУПЦИИ: ВИДЕНИЕ МОЛОДЫХ УЧЕНЫХ КОЛЛЕКТИВНАЯ МОНОГРАФИЯ; Москва, ЮСТИЦИНФОРМ, 2016, ст.140, https://www.academia.edu/30515145/Lobbying_as_an_alternative_to_democratic_procedures_the_experience_of_the_European_Union_Book_Chapter_constitutional_law_and_the_issues_of_corruption_young_scholars_view._Moscow_Yustitsinform_2016_In_Russ_?email_work_card=view-paper

Թեմա 4. Կոռուպցիան հանրային ֆինանսների կառավարման ոլորտում

Դասախոսության ընթացքում կներկայացվեն՝

- հանրային ֆինանսների ծախսման սկզբունքները, «վատնում» հասկացությունը, վերահսկողությունը և կոռուպցիան,
- «ծախսեր-արդյունք վերլուծությունը» հանրային ֆինանսների կառավարման համատեքստում,
- հարկային քաղաքականությունը, պետական եկամուտների հավաքագրումը և կոռուպցիան,
- պետական գնումների համակարգը, դրա վերաբերյալ օրենսդրությունը, կարգավորումը, ընթացակարգերը և կոռուպցիան,
- կոռուպցիոն ռիսկերը հանրային ֆինանսների կառավարման համատեքստում և դրանց չեզոքացումը:

Գործնական աշխատանք

Սովորողների 3-4 հոգուց կազմված խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվում է՝

1. ընտրել որևիցե ՊՈԱԿ, ԾԻԳ կամ պետական հիմնադրամ և ուսումնասիրել դրա գործունեությունը՝ հանրային ֆինանսների կառավարման տեսանկյունից,
2. հետազոտել հանրային ֆինանսների կառավարման վերաբերյալ օրենսդրությունը՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Գնումների մասին» ՀՀ օրենքներով նախատեսված ընթացակարգերը և այլն,
3. բացահայտել տվյալ կազմակերպության գործունեության խոցելի տեղերը կոռուպցիայի տեսանկյունից՝ կոռուպցիոն ռիսկերը, և մշակել առաջարկություններ՝ ինչպես օրենսդրական, այնպես էլ վարչարարական և կառավարչական տեսանկյունից այդ ռիսկերը չեզոքացնելու նպատակով:

Նյութեր և աղբյուրներ

Հիմնական

- Հանրային ֆինանսների տեղեկագիր (Թողարկում 1), Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, https://transparency.am/hy/publications/view/232
- Հանրային ֆինանսների տեղեկագիր (Թողարկում 2), Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, https://transparency.am/hy/publications/view/238
- «Գնումների մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- Առաջարկություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն 2020, https://transparency.am/hy/publications/view/325
- Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, www.arlis.am
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, www.arlis.am
- U4 Issue | Measurement and evaluation; Cost-effectiveness and cost-benefit analysis of governance and anti-corruption activities; Jesper Johnsøn Bergen: Chr. Michelsen Institute (U4 Issue 2014:10) 36 p https://www.u4.no/publications/cost-effectiveness-and-cost-benefit-analysis-of-governance-and-anti-corruption-activities
- Cost-Benefit Analysis and the Evaluation of the Effects of Corruption on Public Projects;

Chapter 15 in Handbook of Research on Cost-benefit Analysis, (ed.) Robert J. Brent, Edward Elgar Publishing, 2009; ISBn: 9781847200693; 26 Pages Posted: 22 Sep 2018; Robert J Brent; Fordham University; Date Written: July 22, 2009

Լրացուցիչ

- Կայուն զարգացման նպատակ 16. Իրականացման առաջընթացը Հայաստանում 2019թ., Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2019, https://transparency.am/hy/publications/view/317
- Հայաստանի հանրային ֆինանսների համակարգի բաղադրիչների 2017-2019 թվականների մոնիտորինգ, Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, https://transparency.am/hy/publications/view/284
- Պետական գնումների համակարգի 2016-2017 թթ. մոնիտորինգի արդյունքները, Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2017, https://transparency.am/files/publications/1507283451-0-397636.pdf?v=4
- Պետական գնումների մոնիտորինգի հաշվետվություն 2015-2016 թթ., Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2016, https://transparency.am/files/publications/1475339122-0-450372.pdf?v=4
- Governance, Corruption and Public Financial Management; Yoshihiro Iwasaki; Asian Development Bank. 2010, https://www.adb.org/sites/default/files/publication/27900/governance-corruption-public-financial-management.pdf

Դասացուցակ

Մոդուլի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմում է չորս շաբաթ՝ **80** ժամ *(դասախոսություն՝ 12 ժամ, գործնական աշխատանք՝ 12 ժամ, ինքնուրույն աշխատանք՝ 56 ժամ)*:

TN	Թեմայի անվանումը	Դասա-ժամի ծավալը	Դասաժամի տեսակը	Եղանակը
1.	**Կոռուպցիայի սոցիալ-տնտեսական բովանդակու-թյունը**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	գործնական իրավիճակների վերլուծություն, քննարկումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		14	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, ելույթների պատրաստում

Թ N	Թեմայի անվանումը	Դասա-ժամի ծավալը	Դասաժամի տեսակը	Եղանակը
2.	**Կոռուպցիայի ազդեցությունը տնտեսության վրա**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	կատարված աշխատանք-ների քննարկում
		14	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, վերլուծության և առաջարկների մշակում և պատրաստում
3.	**Կոռուպցիան և գործարար ոլորտը**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	հանձնարարված աշխատանքների վերլու-ծություն, քննարկումներ, PPT ներկայացումներ, մեկնաբանություններ և կարծիքների ներկայացում
		14	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, անհատական շնորհան-դեսների, ելույթների պատրաստում, հանձնա-րարված խմբային աշխա-տանքներին մասնակ-ցություն, առաջարկություն-ների պատրաստում
4.	**Կոռուպցիան հանրային ֆինանսների կառավարման ոլորտում**	3	դասախոսություն	տեսության ներկայացում, երկխոսություն և քննարկում
		3	գործնական աշխատանք	հանձնարարված աշխատանքի ներկայացում և քննարկում
		14	ինքնուրույն աշխատանք	գրականության ընթերցում, օրենքների և խմբի կողմից ընտրած կառույցի գործունեության ուսումնասիրություն, առաջարկությունների պատրաստում

Դասընթացը հաջողությամբ ավարտելը

Գնահատման նյութեր

Քննություն կամ ստուգարք

Թեստային առաջադրանք մոդուլում ներառված բոլոր թեմաների տեսական հարցադրումների վերաբերյալ: Թեստի հարցերը կազմված են 3 սխալ և 1 ճիշտ պատասխան պարունակող տարբերակներից բաղկացած հարցադրումներից:

Գործնական աշխատանքներ

1. Կոռուպցիայի սոցիալ-տնտեսական բովանդակությունը

Գործնական առաջադրանքի ձևաչափ. Իրավիճակային խնդրի վերլուծություն և առաջարկությունների ներկայացում խմբային աշխատանքի միջոցով՝ յուրաքանչյուր խմբում 3-4 սովորողի մասնակցությամբ

Իրավիճակային խնդրի նկարագրություն. Կառավարությունը շրջանառության մեջ է դրել մի օրինագիծ, որով նախատեսված է երկրում գրանցված բուժաշխատողների համար սահմանել հատուկ նվազագույն աշխատավարձի շեմ՝ 240 000 ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը: Աշխատավարձի նշված շեմը բարձր է երկրում գրանցված բուժաշխատողների միջին աշխատավարձից 40%-ով: Կառավարությունն այս քայլով նպատակ ունի մի կողմից բարձրացնել բուժաշխատողների բարեկեցության մակարդակը, որը տարիներ շարունակ ցածր է եղել և առիթ է տվել բազմաթիվ գործադուլների ու դժգոհությունների, մյուս կողմից՝ ավելի գրավիչ դարձնել բուժաշխատողի մասնագիտությունը՝ նպաստելով բժշկական համալսարաններում ավելի մրցունակ դիմորդներ ներգրավելուն՝ երկրում բժիշկների պակասը լրացնելու համար:

Երկրում առկա բուժհաստատությունների 80%-ը պատկանում է մասնավոր հատվածին, իսկ դրանց 60%-ը, ըստ երկրում դասակարգման չափանիշների, խոշոր ընկերություններ են:

Կառավարության կողմից շրջանառության մեջ դրված օրինագծի ընդունումը սպառնում է մասնավոր ընկերություններին ծախսերի ավելացմամբ և, իբրև հետևանք, շահույթի նշանակալի կրճատմամբ:

Առաջադրանք

Վերլուծել ներկայացված իրավիճակը: Վերլուծության, ինչպես նաև դասախոսությունների ընթացքում կոռուպցիայի մոդելների վերաբերյալ ներկայացված նյութերի հիման վրա մշակել հնարավոր կոռուպցիոն առաջարկի և պահանջարկի ձևավորումը, դրա կառուցակարգերը և արդյունքները: Կոռուպցիոն դրսևորումների հետևանքով նկարագրել այն սցենարը, որով օրինագծի ընդունումը կասեցվում է: Վերլուծել կոռուպցիոն դրսևորման պատճառով կասեցված օրինագծի ազդեցությունը երկրի տնտեսական և սոցիալական ոլորտների վրա՝ կարճաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածների համար: Կոռուպցիոն գործընթացը և դրա ազդեցությունը ներկայացնել սխեմայի տեսքով:

Առաջադրանքի կատարման համար տրվում է մեկ շաբաթ ժամանակ, որից հետո գործնական դասաժամի ընթացքում խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է իր վերլուծությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով սահիկաշարից: Ներկայաց-

նող խմբի աշխատանքը լսելուց հետո մյուս խմբերը արտահայտում են իրենց տեսակետներն ու դիտողությունները. ներկայացնող խումբը կարող է չհամաձայնել դրանց հետ: Առաջադրանքի նպատակը մասնագիտական քննարկումծավալելն ու կարծիքների փոխանակումն է:

2. Կոռուպցիայի ազդեցությունը տնտեսության վրա

Գործնական առաջադրանքի ձևաչափ. Գրականության ուսումնասիրություն և դրա հիման վրա գրավոր անհատական աշխատանքի շարադրում՝ մեկնաբանելով, վերլուծելով և սեփական դիրքորոշում արտահայտելով:

Սովորողներին հանձնարարվում է հետազոտել Տարոն Աճեմօղլուի և Ջեյմս Ռոբինսոնի «Ինչու են ձախողվում պետությունները» գրքում ներկայացված «տնտեսական ինստիտուտների ներառականություն» հասկացությունը և դրա հիման վրա գրավոր ներկայացնել նշված հասկացության վերաբերյալ վերլուծություն և մեկնաբանություն, ինչպես նաև գնահատել և ներկայացնել սեփական դիրքորոշում ՀՀ-ի տնտեսական ինստիտուտների ներառականության վերաբերյալ, մշակել առաջարկներ այդ ներառականությունը բարձրացնելու համար:

Առաջադրանքը կատարելիս անհրաժեշտ է հետազոտել գրքում ներկայացված այլ երկրների փորձն ու մոդելները և ՀՀ-ում դրանք համադրելու հնարավորությունները:

Սովորողը պետք է անդրադառնա հետևյալ հարցերին.

- «Տնտեսական ինստիտուտներ» հասկացությունը և դրա կապը կոռուպցիայի մակարդակի հետ, դասակարգումը՝ ներառող (inclusive) և կորզող (extractive)
- Գրքում ներկայացված երկրների մոդելները և դրանց համադրման հնարավորությունները ՀՀ-ում
- ՀՀ-ում տնտեսական ինստիտուտների ներառականության գնահատում
- ՀՀ-ում առկա ինստիտուտների ներառականության բարձրացման համար անհրաժեշտ քայլերը քաղաքական, կրթական, սոցիալական և տնտեսական դաշտերում
- ՀՀ-ում անհրաժեշտ նոր կառույցների ձևավորումը տնտեսական ինստիտուտների ներառականությունը բարձրացնելու նպատակով
- Մշակված առաջարկությունների և լուծումների ազդեցությունը կոռուպցիոն դրսևորումների վրա:

Գրավոր աշխատանքները կարդալուց հետո դասախոսը մեկնաբանություններ է գրում: Հաջորդ դասաժամին դասախոսը կազմակերպում է քննարկում լավագույն մշակված լուծումների և առաջարկների վերաբերյալ: Լավագույն առաջարկների հեղինակները բանավոր ներկայացնում և պաշտպանում են իրենց առաջարկները: Քննարկման վերջում առաջարկությունները կդրվեն քվեարկության, և կհաղթի ամենաշատ ձայն հավաքած առաջարկի հեղինակ սովորողը:

Առաջադրանքը կգնահատվի՝ հաշվի առնելով՝

- գրավոր աշխատանքում ներկայացված «ներառականություն» հասկացության ճիշտ մեկնաբանումը,
- ՀՀ-ում տնտեսական ինստիտուտների ներառականության գնահատման հիմնավորումները,

• մշակված լուծումների և առաջարկությունների հիմնավորվածությունը և իրատեսությունը,

• քննարկման ընթացքում սովորողի՝ իր դիրքորոշումը բանավոր պաշտպանելու կարողությունը:

3. Կոռուպցիան և գործարար ոլորտը

Գործնական առաջադրանքի ձևաչափը՝ խմբային աշխատանք և վերջում ներկայացում՝ սահիկաշարի միջոցով:

Խմբերին տրվում է հանձնարարություն՝ մշակել լուծումներ և առաջարկներ՝ պետություն-մասնավոր հատված սերտաճման երևույթը չեզոքացնելու համար: Նրանք պետք է հետազոտեն ԱՄՆ-ի, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային երկրների փորձն ու առկա խնդիրները: Վերլուծելով և համադրելով առկա միջազգային փորձը՝ խմբերն իրենց առաջարկներում պետք է ներառեն առկա շահագրգիռ կառույցների բացերն ու խնդիրները, կառույցների վերակազմավորման կամ նորերի ձևավորման հնարավորությունները, ինչպես նաև բարեփոխումների անհրաժեշտությունը:

Գործնական դասաժամին յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր առաջարկությունները PPT ձևաչափով, համապատասխան հիմնավորումներով և գնահատվում է:

Ներկայացվող աշխատանքը պետք է ներառի՝

• պետություն-մասնավոր հատված սերտաճման խնդրի և կոռուպցիայի հետ դրա կապի հակիրճ նկարագրություն,

• ԱՄՆ-ի, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային երկրների փորձն ու առկա խնդիրները թեմայի համատեքստում,

• Հայաստանի Հանրապետությունում պետություն-մասնավոր հատված սերտաճման խնդրի վերլուծություն և գնահատում (գնահատումը պետք է ներառի միջազգային կառույցների կողմից տրված գնահատականները և դրանց մեկնաբանումը),

• խնդիրը չեզոքացնելու և կանխելու նպատակով մշակված առաջարկություններ և լուծումներ՝ վերլուծելով և համադրելով առկա միջազգային փորձը (առաջարկությունները պետք է ներառեն ինչպես խնդրին վերաբերող կառույցների բարեփոխումներ, այնպես էլ նոր կառույցների ձևավորման լուծումներ):

Յուրաքանչյուր խմբին տրվում է 15 րոպե ժամանակ վերլուծությունն ու առաջարկությունը ներկայացնելու, ևս 10 րոպե՝ հարցուպատասխանի համար:

Առաջադրանքի գնահատականը կազմված է երկու հավասար մասերից՝ վերլուծության և դրա ներկայացման որակից (խմբային գնահատական) և հարցերին պատասխանելուց (անհատական գնահատական):

4. Կոռուպցիան հանրային ֆինանսների կառավարման ոլորտում

Գործնական առաջադրանքի ձևաչափ. Խմբային աշխատանք, իրավիճակի ուսումնասիրություն և վերլուծություն:

Սովորողներին բաժանել 3-4 հոգուց կազմված խմբերի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է՝

1. ընտրել որևիցե ՊՈԱԿ, ԾԻԳ կամ պետական հիմնադրամ և ուսումնասիրել դրա գործունեությունը՝ հանրային ֆինանսների կառավարման տեսանկյունից,

2. հետազոտել հանրային ֆինանսների կառավարման վերաբերյալ օրենսդրությունը՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Գնումների մասին» ՀՀ օրենքներով նախատեսված ընթացակարգերը և այլն,

3. բացահայտել տվյալ կազմակերպության գործունեության մեջ խոցելի տեղերը կոռուպցիայի տեսանկյունից՝ կոռուպցիոն ռիսկերը, և մշակել առաջարկություններ ինչպես օրենսդրական, այնպես էլ վարչարարական և կառավարչական տեսանկյունից այդ ռիսկերը չեզոքացնելու նպատակով:

Առաջադրանքի կատարման համար տրվում է մեկ շաբաթ ժամանակ: Հաջորդ շաբաթ յուրաքանչյուր խումբ բանավոր ներկայացնում է իր վերլուծությունն ու առաջարկները՝ օգտվելով PPT գործիքից:

Առաջադրանքը գնահատվում է՝ հաշվի առնելով, թե խումբը որքան լավ է անդրադարձել հետևյալ կետերին՝

- խմբի ընտրած պետական կառույցի հանրային ֆինանսների կառավարման ամբողջական նկարագրություն և վերլուծություն,
- օրենսդրական դաշտի, օրենքով նախատեսված ընթացակարգերի համապարփակ ներկայացում, նկարագրություն, մեկնաբանում և վերլուծություն,
- վերլուծության արդյունքում ստացված եզրակացություններ, տվյալ առաջադրանքի դեպքում՝ խոցելի կետերի՝ կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը,
- մասնագիտական դիրքորոշում, կարծիք և առաջարկություններ:

Գործնական աշխատանքների գնահատականը ձևավորվելու է մոդուլում ընդգրկված բոլոր գործնական առաջադրանքների կատարման և դրանց արդյունքների ներկայացման համակցության արդյունքում:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Հեղինակներ՝

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ՝ իրավ. գիտ. թեկնածու, 1-ին մոդուլի 1-4-րդ թեմաներ (համատեղ.),
4-րդ մոդուլի 1-5-րդ թեմաներ

Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ՝ տնտ. գիտ. թեկնածու, 2-րդ մոդուլի 1-ին (համատեղ.),
2-5-րդ թեմաներ, 3-րդ մոդուլի 3-5-րդ թեմաներ

Վ. ՀՈԿՏԱՆՅԱՆ՝ 1-ին մոդուլի 1-ից 4-րդ թեմաներ (համատեղ.),
2-րդ մոդուլի 1-ին թեմա (համատեղ.)

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ 3-րդ մոդուլի 1-ին և 2-րդ թեմաներ

Խ. ԲԵԶԻՐՋՅԱՆ՝ կենս. գիտ. թեկնածու, 5-րդ մոդուլ

Թ. ԽԵՉՈՅԱՆ՝ 6-րդ մոդուլ

Խմբագիր և սրբագրիչ՝
Հ. ՍԱՄՎԵԼՅԱՆ

Համակարգչային ձևավորող՝
ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Չափսը՝ 70x100 (1/16): Ծավալը՝ 7.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

Ամնտարես

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am